ՀԱՅԿ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԻՆՆԵՐ

ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆՑ

092 (03)
S

1441—1904

A II 3052

Ա.

ՊՐԱԿ ԱԹԱՋԻՆ

ԳԱՌԱՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ.

ԹԻՖԼԻՍ
Արագատիպ Ա. Քութաթելաձէի, Նիկ. 21.
Скоропечатня А. Кутателадзе, Ник. 21.
1904

Дозволено цензурою, Тифлисъ 26-го Октября 1904 г.



† 1903 թ. յունիսի 22

ԱՐՄԵՆԱԿ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԷԱՆՑ։

Այս գրչի արձանը թող գարդարէ քո անշուք գերեզմանը, որովհետև դու էլ չէիր զլանում օգնելու ինձ այս գործում, և ձեռքդ ընկած գիրքն ու պատկերը ուրախացած տալիս էիր ինձ։

Քո Հայկը։

5 Հոկտեմբերի 1904 թ.
Տֆխիս

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Դեռ 1896 թ., երբ ես աշակերտ էի Գէորգեան ճեմարանում, սկսեցի նիւթեր ժողովել այս գործիս համար։ Առաջ ես մտադրուեցայ կազմել միայն թուականներից կազմած կենսագրութեանց բառարան, որպիսիք գոյութիւն ունեն համարեա բոլոր ազգերի մէջ, սակայն այդքանով բաւականանալն անկարելի էր, որովհետև մեր մէջ կենսագրական ճիւղը գրականութեան համարեա ամենավերջին աստիճանի վրայ է գրուած և այդպիսի դէպքում, ի հարկէ, աւելի լաւ կը լինէր ամփոփ տեղեկութիւններով մի գիրք, որպիսին է ներկայ գործս։ Սա իսկապէս մի ցուցակ է, որից կարող են օգտուել մանաւանդ գաւառացի հայերը (քաղաքացիք առհասարակ հայ հեղինակներով և գրքերով քիչ են հետաքրքրուում)։ Ինչպէս կը տեսնէ ընթերցողը, ես առհասարակ ինձ հեռու եմ պահել դատողութիւններից, կուսակցութիւններից և աշխատել եմ տալ այն բոլորի մանրամասնարը, որ այս կամ այն աղբիւրի միջոցով հասել է ինձ։ Ես հաւատում եմ, որ այս գործս ունի պակասութիւններ, միայն այսքանը

կասեմ, որ հայոց մէջ այսպիսի գործի համար հարկաւոր է մի պարապ մարդ, որ 10 տարի առաւօտուայ 8 ժամից մինչև երեկոյեան 10 ժամը այս ու այն գիրքն ու լրագիրը գտնելու համար սրա ու նրա դուռը թակէ, սրա ու նրա եախիցը բռնած տասնեակ օրերով ման գայ, մինչև որ վերջապէս կենսագրութիւնը ստանայ, սրան ու նրան ամիսը 30 նամակ գրէ, որպէս զի գոնէ մէկին պատասխանեն (հաւատացէք ոչ մէկին չեն պատասխանի)... այսպիսով ես 3000-ից աւելի նամակ եմ գրել և դուցէ 400—450 պատասխան ստացել։ Տաճկահայոց մասին աւելորդ է խօսել, և ոչ մի նամակի պատասխան. ես շնորհակալ եմ Վենետիկոյ և Վիեննայի Մխիթարեաններից, որոնք բացի հ. Բարսեղ Սարգսեանից ամենքն էլ պատասխանեցին, նոյնը կարելի է ասել և Եւրոպայում, Ամերիկայում և Հընդկաստանում ցրուած հայերի համար։ Ռուսահայերը վերին աստիճանի անքաղաքավարի գրտնուեցան, դուցէ նրանք չը պատասխանելը համեստութիւն համարեցին, բայց շատ ի զուր, որովհետև այդպիսի համեստութիւն երբէք օգուտ չի բերիլ։ Այս տեսակ դրութիւնից յետոյ աւելորդ է ասել, որ բառարանիցս դուրս մնացին Տաճկահայ գրողներից նշանաւոր հեղինակ (դասագրքերի) Մ. Աբիկեանը, Յ. Ալանը, Աբրահամ Այվազեանը (որի մասին մի քանի տող եմ գրում) և այլն։ Ռուսահայերից չ'կարողացայ ձեռք բե-

րելու իշխ. Ն. Ամատունու կենսագրականը։ Յամենայն դէպս ես հաւատում եմ, որ վերջին հատորի մէջ գոնէ կը կարողանամ պակասը լրացնելու։

Շնորհակալ եմ այն բոլորից, որոնք չ'զլացան և պատասխանեցին իմ նամակներին և կամ հարկաւոր գրքերն ու հանդէսները տուին ինձ օգտուելու համար *)։ Շնորհակալ եմ նաև այն պարոններից, որոնք կարևոր խորհուրդներ տուին, մանաւանդ բժիշկ պ. Լևոն Տիգրանեանից (Երևան), որը ինձ ուղարկել է գրական մի քարտէսի ծրագիր, որ կաշխատեմ տպել վերջին հատորի հետ։

Ի վերջոյ խնդրում եմ այն բոլոր պարոններից, որոնք ինձ չը կամեցան պատասխանել, մի կողմ թողնել իրենց համեստութիւնը և պատասխանել իմ նամակին։ Կան շատեր, որոնց ես չեմ գիմել հասցէն չը գիտենալու պատճառով, ուստի և խնդրում եմ նրանցից գրել մանրամասն ինքնակենսագրութիւնը և վերջին պատկերի հետ ղրկել ինձ, որի համար շատ շնորհակալ կը լինեմ։

Իմ հասցէն՝ Տփխիս, Նիկոլաևսկայա հրա-

---

*) Գտնուեցան մարդիկ, որոնք իրենց կենսագրութեանց հետ ուղարկեցին ինձ իրենց հեղինակութիւնները, որի համար յայտնում եմ խորին շնորհակալութիւններս։

պարակ № 3. Тифлисъ, Николаевская пл. № 3 և կամ Tiflis, Nikolaïevskajia pl. № 3.

Կրկնում եմ, որ ես մտադիր եմ այս գործս շարունակելու առանց կուսակցութիւնների խլրտութեան և ամեն մի գործունեայ մարդու համար գրելու այն, ինչ որ ինքն է։

ՀԱՅԿ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ա) *Բառարան երեւելի արանց*, 2 հատոր, գլխաւորապէս կաթոլիկ հայոց կենսագրութիւններ (օտարներին էլ)։ Ունի Գէորգեան ճեմարանը։

բ) *Շար հայ կենսագրութեանց*, Աբրահամ Այվազեանի Կ. Պ. 1893 թ. երեք տեսար մօտ 20 կենսագրութեամբ։

գ) *Առձեռն բառարան պատմ. աշխարհագրական եւ դիցաբան. յատուկ անուանց, յաւելեալ յատուկ անունք Հայկական*, Ն. Ճիւանեանի Կ. Պոլիս 1879 թ.

դ) *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս*, Գ. Ա. Զրումպֆի, փոխադր. Գ. վ. Զարբհ. Վենետիկ 1895 թ.

ե) *Պատմութիւն Նոր Հայկական դպրութեան*, Գ. վ. Զարբհ. Վենետիկ 1877 թ.

զ) *Մատենագիտութիւն Հայկական*, Գ. վ. Զարբհ. Վենետիկ 1883 թ.

է) *Եկեղեցական պատմութիւն Հայաստ. Եկեղեցւոյ*, Մ. եպ. Մուրադեանի. Երուսաղէմ 1872, Յ. վ. Մովսիսեանի, Էջմիածին 1886 թ.

ը) *Հայոց պարբերական մամուլը*. Գ. Լևոնեանի, Ալէքսանդրապոլ 1895 թ.

թ) *Հայ աշուղներ*, Գ. Լևոնեանի, Ալէքս. 1892 թ.

ժ) *Մխիթարեան յօբելեան*, Վենետիկ 1901.

ժա) *Պատմութիւն հայ լրագրութեան*, Գր. վ. Գալէմքեարեանի, Վիեննա 1893 թ.

ժբ) *Քնար Հայկական*, Մ. Միանսարեանի, Պետերբուրգ 1868 թ.

ժգ) *Պատմութիւն Հայոց*, հատոր Գ., հ Մ. վ. Չամչեանի, Վենետիկ 1786 թ.

ժդ) *Պատմութիւն Հայոց*, (1772 — 1860), Աւետիս Պէրպէրեանի, Կ. Պոլիս 1871 թ.

ժե) *Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի*, Մ. Մսերեանի, Մոսկուա 1876 թ.

ժզ) *Հարիւրամեակ Կենարար Ս. Խաչի վերացման Մոսկուայի Հայոց եկեղեցւոյն*, Յակոբ քահ. Սուրէնեանցի, Ռոստով 1879 թ.

ժէ) *Ընտիր հատուածներ*, մասն Ա. Էմ. քահ. Նազարեանի, Տփխիս 1892 թ.

ժը) *Ուրիշ բազմաթիւ գրքեր, կենսագրական բրոշիւրներ, դիսսերտացիաներ, գրքերի յառաջաբաններ և այլն։*

ժթ) *Օրացոյցներ*, Տփխիս, Կ. Պոլիս, Ռոստով, Երևան, Բաքու և այլ տեղերում հրատարակուած։

ի) *Նամակներ։*

իա) *Գրաքուցակներ*, Տփխիսի, Կ. Պոլսի, Վենետկի, Վիեննայի և այլ գրավաճառանոցների ու գրադարանների։

իբ) *Պարբերական հրատարակութիւններ, Ա-բարատ, Արաքս, Արևելք, Արձագանք, Բազմա-վէպ, Բանասէր, Բիւզանդիոն, Բիւրակն, Գեղու-նի (և Որբունի), Թատրոն, Լումայ, Կռունկ, Հանդէս ամսօրեայ, Հիւսիսափայլ, Մեղու Հայ-աստանի, Մշակ, Մուրճ, Նոր-Դար, Սուրհան-դակ, Վարժարան, Տարազ, Փարոս, Փարոս Հայ-աստանի, Փորձ։*

իգ) Братская помощь постр. арм. въ Турціи, Москва.

իդ) Собраніе актовъ, относящихся къ обозрѣнію исторіи Армянскаго народа, 3 тома, Москва 1833—38 г.

իե) Обозрѣніе Арменіи, А. Худабашева, Москва.

իզ) Армянскіе беллетристы Ю. Весел. и М. Берберяна.

իէ) რუსულ-ქართული ენციკლოპედიური ლექსიკონი, ივ. როსტომაშვილისა, 4 წიგნი, თბილისი, 1898—1900 წ.

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. — առաջին.
արքեպ. — արքեպիսկոպոս.
գլխ. — գլխաւոր.
գր. վառտ. — գրաւոր վառտանիներ.
դպ. — դպրոց, դպրոցական.
եկ.-ծխ. — եկեղեցական-ծխական.
եպ. — եպիսկոպոս.
Էջմ. — Էջմիածին.
Թարգ. — Թարգմանութիւն.
իշխ. — իշխան.
ծն. — ծնունդեան.
կամ. — կամ ոգեկոչ.
կտակ. — կտակարար.
Կ. Պ. — Կ. Պոլիս.
կրթ. — կրթութիւն.
Մեծ. — Մեծարան.
մ. — մեռաւ.
մր. Էջմ. — միաբան Էջմիածնի.
մր. Վեն. Մխ. — միաբան Վենետիկի Մխիթարեանց.
մր. Վին. Մխ. — միաբան Վիեննայի Մխիթարեանց.
ներ. դպ. — ներքնակեան դպրոց.
պատր. — պատրիարք
սկզ. — սկզբնական.
վ — վարդ. — վարդապետ.
Վաղ. — Վաղարշապատ.
վիճ. — վիճակաւոր եղաւ.
Վեն. — Վենետիկ.
տ. — տարեկան.
Տ — Տփխիս.
տպ — տպաւորեց.
Փ — Փարիզ.
Ք. — քաղաք.
քահ. — քահանայ.

ԱԲԱՄԵԼԻՔԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ.—Իշխան, նշանաւոր անձնաւորութիւն վրաց Հերակլ Բ. և Գիորգի ԺԲ. թագաւորների օրով։ Սրա ազգիկը՝ Հեղինէն՝ վրաց թագաւորաղն Դաւիթի կինն էր։ Ռուսաց Պաւէլ կայսեր օրով Աբամելիքեանը ընտանիքով Պետերբուրգ տեղափոխուեցաւ և կայսեր մի ազամանտ ներկայացրեց, որ իր մեծութեամբ և յատակութեամբ Ռուսաստանում երկրորդն էր համարւում (առաջինը հայ վաճառական Մափրազեանցի տարածն էր, որ գնեց իշխ. Օրլովը 400,000 ր. և Եկատերինէ Բ. կայսրուհուն նուիրեց)։ Կայսրը՝ Աբամելիքեանին իբրև վարձատրութիւն, Կամենից-Պոդոլ'սկի նահանգում կալուածներ բաշխեց պարգևքով և ստրուկներով։ Նրա որդիքը պետական և զինուորական ծառայութեան մէջ ընդունուեցան։ Իշխ. *Յովհաննէս Սիմ. Աբամելիք*, որ Պետերբուրգի և Կիևի զինարանների (арсеналъ) կառավարիչ էր և առանձնապէս ուսումնասիրել էր թնդանօթաձուլութեան արհեստը՝ Աղէքսանդր Ա. կայսեր հրամանով Պրուսիայի Ֆրիդրիխ Վիլհելմ թագաւորի մօտ ուղարկուեցաւ, որպէս զի Բերլինում ուսումնասիրէ թնդանօթաձուլութիւնը։ Այս պատուէրն աջողութեամբ կատարելով՝

երկու վեհապետներից էլ վարձատրուեցաւ։ Իշխ. Աննա Դաւթեան Աբամ. 1832 թ. ապրիլ 20-ից տուած հրովարտակով արքունի ֆրէյլինա ընդունուեցաւ։ (Աբամելիքները խնամէացան Լազարեան տոհմի հետ, ուստի և Աբամելիքների մասին մանրամասնութիւնները կը տպենք Լազարեանք խօսքում)։

ԱԲԳԱՐ ԴՊԻՐ.—Հայ տպագրիչ, ծն. Տաճկաստանի Եւդոկիա քր. ԺԶ. դարու առաջին քառորդում։ Փորրուց ուսաւ իր քաղաքի մօտ եղած վանքերում։ 1562-ին հայոց Միքայէլ Սեբաստացի կաթուղիկոսը գնալով իր հայրենիքը, ծանօթացաւ Աբգարի հետ և տեսնելով, որ նա ցանկութիւն ունի տպագրութեան գործը սովորելու, նրան մի վկայական տուեց և խորհուրդ տուեց Եւրոպա գնալ։ Աբգարն իր Սուլթանշահ որդու և ոմն Աղէքսանդր քահանայի հետ անցաւ Եւրոպա և դիմեց դէպի Հռոմ, ուր ներկայանալով Պիոս VI պապին, նրա առաջարկի համաձայն կազմեց Հայաստանեայց Առաքելական եկեղեցու դաւանութեան և պատարագի մասին մի գրութիւն, որ մնացել է լատին լեզուով։ Աբգարն այնտեղ հայերէն գրեր ձուլել տալով Վենետիկ գնաց, ուր այդ ժամանակ հայ մետաքսավաճառներ և գոհարավաճառներ կային և սեպհական մատուռ էլ ունէին։ Ծանօթանալով այդ վաճառականների հետ, նրանց օժան-

գակութեամբ 1565-ին տպեց «*Սաղմոս*» (Մեկնիչ Սաղմոսաց) *)։ Աբգարը 1567-ին անցաւ Կ. Պոլիս, ուր Առաքել վարդապետ Վիրապեցու ընկերակցութեամբ ս. Նիկողայոս եկեղեցու մօտ մի տպարան հաստատեց և շարունակեց հոգևոր բովանդակութեամբ գրքերի տպագրութիւնը, ինչպէս *Փոքր բնբականութիւն* կամ *Աղբենարան* 1567, *Ծննդոյց* 1568, *Տաղարան* 1568, *Ժամագիրք* 1568, *Պատարագատետր* 1568 (1569 էլ են գրում)։ Աբգարին են վերագրում նաև *Յիսուս Որդի* 1565 Վենետիկում տպուած և *Մաշտոց* 1569 Կ. Պոլսում։ Մահուան թուականն անյայտ, հաւանականաբար մեռած Կ. Պոլսում

*) Հայկական տպագրութեան սկիզբը ոմանք սխալմամբ հաշուում են այս թուականից, ըստ Ա. Արվազեանի «Նոր հայ կենսագրութեանց» գրքի 1452 թ. է սկսուել և առաջին տպագիր գիրքն եղել է *Պարզատումար* գիրքը. ըստ Կապետի 1512—1513 թ. (տես «Բանասէր» 1903 թ. 6—7. էջ 203)։ Ես տեսել եմ հանգուցեալ Ստեփանոս Տէր-Ստեփանոսեանի գրադարանում մի գիրք տպուած 148՞ (չեմ յիշում, միայն 5 էր կամ 6-ը), որի մէջ ս. Գրքից հատուածներ են տրպուած քանի մի լեզուով և ի թիւս այլոց նաև հայերէն երկաթագիր տգեղ տառերով սաղմոսից մի հատուած։ Եթէ չեմ սխալւում այս գիրքը տպուած է Մարսէյլ քաղաքում։ Սրա հիման վրայ գոնէ ես դժուարանում եմ հաւատալ, որ մենք դեռ 1485-ից էլ վաղ տպագրութիւն չենք ունեցել։

Ն. Հ.

և գուցէ 1569-ին կամ յաջորդ տարին, որովհետև 1569-ից նրա մասին այլ ևս յիշատակութիւն չենք գտնում։

ԱԲԳԱՐԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ. — Հնդկահայ հարուստ վաճառական, որ եօթը պետութիւններից շքանշաններով էր վարձատրուած։ Սա Գանգէսի ափին սեպհական նաւարան ունէր և իր կենդանութեան ժամանակ խոշոր գումարներ է տուել Նոր-Ջուղայի, Բարսայի, Բաղդատի հայոց եկեղեցիներին, Նարեկայ վանքին, Լիմ և Կտուց անապատներին։ Նրա դերեզմանը գտնւում է Կալկաթայի ս. Նազարէթ եկեղեցու գաւիթում, հիւսիսային կողմը։ Որդիքը՝ Սէթը մեռաւ Լոնդոնում անզաւակ և իր կարողութիւնն էլ մի անգլիուհու կտակեց. Յովհաննէսն և Բաղդասարը Սինգափուր, Ցեյլոն, Հոնք-Քոնկ և ուրիշ շատ տեղերում նաւարաններ և շոգենաւային ընկերութիւններ հաստատեցին, որոնք դեռ այժմ էլ կան։ Ինչպէս առաջ, այնպէս էլ այժմ Յարութիւնի կտակի համաձայն դրանց շոգենաւերով հայերը ձրի են տեղափոխւում *)։

---

*) Այս Աբգարեանի հետ չը խառնել Աբգարեան Սահակ և Աբգար աղաներին, որոնք իբր թէ ապրում են Չինաստանում և մօտ 100 միլիոն կարողութիւն ունեն։ Սրանց մասին ինձ գրել է պ. Ամբատ Հազարեանը, սակայն ես հաւատ չընծայելով, իմ բառարանից դուրս թողեցի։

Ն. Հ.

ԱԲԵԼԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ցիւրիխի համալսարանի քիմիայի պրոֆեսսոր, Լօռու Վարդապլուր գիւղի մի գեղջուկի որդի, ուսումն ստացաւ Ներս. դպր. իբրև որդեգիր և աւարտելուց յետոյ Էֆէնդեանի հաշուով ուսումը շարունակելու համար արտասահման ուղարկուեցաւ։ Այնտեղ բնական գիտութիւններն ուսումնասիրելով այլ ևս չը վերադարձաւ Կովկաս և միայն մի կարճ ճանապարհորդութիւն արեց։ Նշանաւոր է իբրև քիմիագէտ և մի քանի տարրերի գիւտը նրան են վերագրում։ Ունի եւրոպական լեզուներով աշխատութիւններ, գրում է եւրոպական թերթերում, այսպէս ասած նա հայերի համար այլ ևս գոյութիւն չունի։

ԱԲԵԼԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ.—Այժմեան յայտնի դերասան, ծն. Զամախի ք. 1865 թ.։ Սկզ. կրթ. ստացաւ ծխ. ուսումնարանում, ուր 1875-ին ուսման շրջանն աւարտելով մի տարուց յետոյ մտաւ Բագուի Ռէալական ուսումնարանի Ա. բաժանմունքը։ Մինչև 1884 թ. մնալով ռէալ. ուսումնարանում, դեռ

A 3052

ուսումը չաւարտած թողեց ուսումնարանն ու սկսեց ծառայել Բագուի մասնաւոր դրասենեակներում, սակայն այդտեղ էլ տեսնելով, որ իր միտքը գործի վրայ չէ և զբաղուած է աւելի թատրոնական հարցերով, այդ էլ թողեց և նուիրուեց հայ բեմին։ Դեռ աշակերտական սեղանից սկսեց մասնակցել ինչպէս հայ, այնպէս էլ ռուս ներկայացումներին իբրև սիրող և առաջին անգամ Բագուի Մարդասիրական ընկերութեան դահլիճում բեմ դուրս գալով ու բաւական յաջող խաղալով իր դերը՝ ներկայացման ներկայ գտնուող Երուսաղէմի միաբան Մամբրէ վարդապետից մեծ խրախուսանքի արժանացած՝ նուէր ստացաւ «Սանդուխտ» ողբերգութեան հայ-ֆրանսերէն օրինակը։ Այս յաջողութիւնից ոգևորուած, քիչ յետոյ նա արդէն բեմ դուրս եկաւ իբրև դերասան և արագ յառաջդիմութիւն ցոյց տուեց։ Սրանից մի քանի տարի առաջ մի պտոյտ արաւ Եւրոպայում այցելելով գլխաւոր քաղաքները, ուր նա հետևել է Եւրոպայի նշանաւոր դերասանների խաղերին։ Աբելեանը խաղացել է ինչպէս Կովկասեան, այնպէս էլ Ռուսաստանի համարեա բոլոր հայաբաղաքներում։ Զմեռուայ թատերաշրջաններին առհասարակ խաղում է Տփխիսում և Բագուում։ 1902 թ. հրաւիրուեցաւ Տփխիսի հայ դրամատիքական ընկերութեան կողմից, որի մէջ գտնւում է ցարդ։ Աբելեանը մեր այժմեան յայտնի դերասաններից

մէկն է։ Նրա բէպերտուարն է—Օտելլո, Լիր, Էդգար, Պետրուչիո, Դոքտոր Զտոքման, Օսվալ'դ, Էրնանի և այլ նման դերերը։ Հայ բեմի համար թարգմանել է բազմաթիւ թատերգներ, որոնք խաղացւում են։ Մէկ-մէկ գրել է նաև հայաթերթերում։

ԱԲԵՂԵԱՆ ՄԱՆՈՒԿ. —Բանասէր, ծն. Հին Նախիջևանի մօտ Աստապատ գիւղում 1865 մարտ 5-ին։ Սկզ. կրթ. ստացաւ Աստապատի Կարմիր վանքում։ 1876-ին մտնելով Գէորգ. ճեմ. և 1885-ին աւարտելով, նոյն տեղ ուսուցչի, գրադարանապետի և քարտուղարի պաշտօններ ստանձնեց և այդ պաշտօններում երկու տարի մնաց։ 1887/89 թ. ուսուցիչ Զուշու թեմ. դպ., իսկ 1889—1893 թ. ուսուցչութիւն արեց Տփխիսի Յովնանեան օրիորդաց ուսումնարանում։ 1893-ին դնաց արտասահման բանասիրութիւն և մասնաւորապէս ընդհ. գրականութիւն ուսանելու.—1893/95 և 1896/98-ին իբրև իսկական ուսանող լսելով Ե-

նայի, Լայպցիգի և Բերլինի համալսարաններում, 1895/96 թ. իբրև ազատ ունկնդիր լսում էր Պարիզի համալսարանի դասախօսութիւնները։ 1898-ին Ենայի համալս. քննութիւն տալով՝ դոկտորութեան աստիճանով աւարտելով Կովկաս վերադարձաւ և հրաւիրուեցաւ Գէորգ. ճեմ. իբրև դասատու հայ լեզուի և գրականութեան։ Արեղեանը դեռ արտասահման չը գնացած զբաղուել է հայոց գրականութեամբ և լեզուով։ Նրա առաջին գրուածքները բանաստեղծական անյաջող փորձեր են՝ տպուած «Աղբիւր»-ի մէջ և առանձին գրքոյկով։ 1889-ից Տփխիսում ապրելով և առանձնապէս հետաքրքրքրուելով լրագրական գործով՝ «Նոր-Դար»-ի գլխ. աշխատակիցներից մէկն էր և նրա յօդուածները իւր և կեղծ ստորագրութիւններով առանձին հետաքրքրութեամբ էին կարդացւում։ 1891 և 1892 թ. վարեց նաև ժամանակաւոր խմբագրի պաշտօնը։ 1893-ին տպեց *Հայոց լեզուի ուղղագրութիւնը* և հայոց հրատարակչական ընկ. յանձնարարութեամբ, որի խմբագրական մասնաժողովի անդամ էր, թարգմանեց Տօլստոյի *Արդարն ու մեղաւորը* և Գոգոլի *Տարաս Բուլ'բա*։ Մինչև արտասահման գնալն աշխատակցում էր նաև «Մուրճ»-ին, իսկ արտասահմանից «Նոր-Դար»-ին և «Արարատ»-ին։ Գալով Կովկաս նա սկսեց զբաղուել հայ ժողովրդական բանահիւսութեամբ, որի դաղարած դասախօ-

սութիւնը վերսկսեց Գէորգ. ճեմարանում։ Դեռ 1886-ին Էջմիածնում գրի առնելով *Դաւիթ եւ Մհեր* դիւցազնավէպի մի նշանաւոր վարիանտ, 1889-ին տպեց Շուշում։ Այս վէպը ռուսահայոց գրականութեան մէջ մի նոր շարժում առաջ բերեց և ունեցաւ հետևողներ։ *Հայոց ժողովրդական հաւատքը* (Der armenische Volksglaube տպ. Լայպցիգ 1899) վերնագիրն է կրում նրա՝ դոկտորութիւն ստանալու աւարտաճառը (դիսսերտացիա), որի մէջ բաղդատութեամբ ուրիշ ազգերի հաւատքի և դիցաբանութեան՝ ուսումնասիրել է հայոց ժողովրդական հաւատքի հեթանոսական կողմերը, ինչպէս են՝ հոգու հաւատք ու մեռելների պաշտամունք, լուսոյ և խաւարի, ճակատագրի, ջրերի, բոյսերի, կրակի և այլ պաշտամունքները։ Միւս գործերը.—ա) *Գէորգ Դ. Մեծագործ կաթուղիկոսի կենսագրութիւնը* Վաղ. 1899, բ) *Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու հայոց պատմութեան մէջ* (քննադ. և ուսուածք, արտատպ. «Արարատ»-ից) Վաղ. 1901 թ.։ Այժմ Մ. Ա. զբաղուած է Կոմիտաս վարդապետի հետ ժողովրդական երգերի բաղդատութեամբ ու խմբագրութեամբ։ Երգերի առաջին յիսնեակը լոյս տեսաւ *Հազար ու մի խաղ* վերնագրով Վաղ. 1903 թ.։ Բացի այս, ճեմարանի ուսուցիչ Սէթ Յարութիւնեանցի հետ միասին պարապում է Մովսէս Խորենացու պատմութեան ձեռագիրների բաղդատութեամբ՝ բնա-

գիրը վերականգնելու գործով և կազմում է հայոց լեզուի ընդարձակ քննական քերականութիւն, որ մշակում է երեք տարուց ի վեր։

ԱԲԻԽ ՀԵՐՄԱՆ. — Գերմանացի երկրաբան, ծն. Բերլինում 1806-ին, ուր և 1831-ին աւարտեց հանքաբանութիւն՝ դոկտորի աստիճանով։ 1833 և 1836-ին զբաղուեցաւ Իտալիոյ հրաբխային երևոյթները հետազօտելով։ 1842-ին անցաւ Դորպատ ուր մինչև 1876 դասախօսեց համալսարանում։ 1845-ին ճանապարհորդեց Հայոց աշխարհում (Армянская область—այս կոչումը տրուեցաւ 1828 թուին Երևանեան նահանգին) և նոյն տարուայ յուլիսի 29-ին Արարատ (Մասիս) բարձրացաւ նրա գիրքը, հանքային ու բուսական հարստութիւնները հետազօտելու։ (Այս ճանապարհորդութեան մասին ունի ռուսերէն և գերմաներէն աշխատութիւններ)։ 1853-ին Արիխը «ակադեմիկ» տիտղոս ստացաւ իսկ 1866-ին Պետերբուրգի գիտութեանց ճեմարանի պատուաւոր անդամ ընտրուեցաւ։ 1876-ին իր գրաւոր վաստակները տպելու համար Վիեննա գնաց և այնտեղ էլ մեռաւ 1886-ին։ Նրա մարմինն այ-

ցեցին և ամիսնը պահում է։ Արիխը մի նոր հանք էլ գտաւ, որ ի պատիւ նորա կոչուեցաւ Արիխիտ։



ԱԲՈՎԵԱՆ ԳԷՈՐԳ.— Պատմաբան—ուսուցիչ, ծն. Լօռու Օձուն գիւղ. 1837 ապր. 7-ին։ 1844ին հայրը մեռնելով, նրա պապ Արազը տարաւ նրան Սանահնի դպրեվանքը, որտեղից նոյն վանքի միաբան Սարգիս վարդապետը տանելով նրան Տփխիս՝ յանձնեց Ներս. դպ. խնամքին, ուր Գէորգը մեծ յառաջդիմութիւն ցոյց տալով Ներսէս Ե. Աշտարակցու ուշադրութիւնը գրաւեց և կաթուղիկոսի հրամանով 1849-ին ուղարկուեցաւ Մոսկուայի Լազարեան ճեմ., ուր նա զբաղուեցաւ առանձնապէս պատմութեամբ և գրականութեամբ։ 1857-ին աւարտելով ուսման շրջանը, Կովկաս վերադարձաւ և 1858-ին հրաւիրուեցաւ Ներս. դպ. հայոց և ընդ. պատմութիւնն ու աշխարհագրութիւնը դասախօսելու։ 1863-ին Տփխիսի Զինուորական վարժարանի (Кадетскій корпусъ) հայոց լեզուի դասերը ստանձնեց և 1865-ից մի

վիպական սաացաւ, որով իրաւունք տրուեցաւ նրան պետական ուսումնարաններում ուսուցչութիւն անելու։ 1866 ին հրաժարուեցաւ ուսուցչութիւնից և նոյն տարուայ նոյեմբերի 1-ին, չորեքշաբթի օրը երեկոյեան 8 ժամին դուրս գալով անից, այլ ևս չը վերադառնալով ընդմիշտ անհետացաւ *)։ Գր. վասա.—*Համառօտութիւն հայոց ազգի պատմութեան* տպ. Տփխիս 1869, 77, 84 և այլն։ Թողել է ձեռագիր ա) *Հայոց պատմութիւն* ընդարձակ ե բ) *Հայաստանի աշխարհագրութիւն* և այլն։

ԱԲՈՎԵԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ.— Արդի հայ վիպասանութեան և բանաստեղծութեան հայրը, որդի Աւետիք Աբովեանի, ծն. Երևանից 7 վ. հեռաւորութեան վրայ գտնուած Քանաքեռ գիւղում 1804—5 թ. (ըստ ոմանց 1806-ին)։ 1814—15 թ. ծնողները Խաչատուրին ս. Էջմիածին տարան ուսանելու։ Ժա-

*) Գէորգ Աբովեանի անհետանալու մասին նրա ժամանակակիցներից մէկը ինձ պատմեց, որ նա անհետանալուց առաջ հիւանդ էր և հաւանականօրէն նրա վախճանը բարակացաւն էր լինելու, և որ նա թէ հիւանդութիւնից նեղուած և թէ վատ հանգամանքներից տոխպուած Քուռը պէտք է ընկած լինի։

Ս. Հ.

մանակակից Եփրեմ կաթողիկոսը, որ նրա պապերի ամենասիրելիներ գիտէր, սիրով ընդունեց նրան և ուրախակիր դպրի աստիճան շնորհեց։ Նրա դաստիարակ Անտոն արքեպիսկոպոսը 1820-ին Հաղբատի վանքը քաշուելով Խաչատուրին իր հետ տարաւ, իսկ այնտեղից էլ Տփխիս, ուր Խաչատուրն աշակերտեց ժամանակին յայտնի գիտնական Ղարաբաղցի Պօղոս վարդապետին Ստեփանոս Նազարեանցի հետ։ Ներս. դպ. բացուելու օրից Խաչատուրը ընդունուեցաւ աշակերտ և 1829 փետրուար 24-ին աւարտելով երեքդասեան Ներս. դպրոցի ուսման շրջանն, գնաց ս. Էջմիածին, ուր Եփրեմ կաթողիկոսը իր դիւանի քարտուղար և թարգման կարգեց։ Երբ ռուսաց զօրքերը տիրեցին հայոց նահանգին, մի շարք ճանապարհորդ գիտնականներ եկան երկիրն ուսումնասիրելու, մինչև անգամ ակադեմիկ Զօպէնը (որ Հայոց նահանգի ուսումնասիրութիւնն է գրել) մի տեսակ ստատիստիկական բիւրո հաստատեց։ Այդ միևնոյն ժամանակ՝ 1829 թ. Կովկաս եկաւ գերմանացի բնագէտ Դորպատի համալսարանի պրոֆ. Պարրոտը, այցելեց ս. Էջմիածին, ուր ծանօթացաւ Խաչատրի հետ և թարգմանի պաշտօնով իր հետ վերցնելով նրան, սեպտեմբեր 23-ին Մասիս բարձրացաւ։ Խ. Ա. յայտնել էր Պարրոտին եւրոպական կրթութիւն ստանալու ցանկութիւնը և Պարրոտն էլ տեսնելով նրա ընդունակու-

թիւնն ու բարեման կողմերը, վերադառնալով Դորպատ՝ բարեխօսեց լուսաւորութեան նախարար Լիվէնի առաջ, որի հրամանով պետական գանձարանից Խաչատրին 300 ռուբլի թոշակ նշանակուեցաւ։ 1830 թ. սեպտ. 3-ին Խ. Ա. արդէն հասաւ Դորպատ։ Այնտեղ նա ուսումնասիրելով գրականութիւնն ու մանկավարժութիւնը, իւրացնելով գերման և ֆրանս. լեզուները՝ մտաւոր պաշարով ծանրացած 1836-ին Տփխիս եկաւ։ Յովհաննէս Ը. Կարրեցի կաթողիկոսը շատ լաւատ վարուեցաւ Խ. Ա-ի հետ և արգելեց հայոց դպրոցներումը նրան ուսուցչի պաշտօն տալ, վախենալով, որ հայ երեխաներին լիտերական հոգով կը կրթէ։ Ա. Խ. յոյսը կտրած սկսեց ծառայել պետական ուսումնարաններում և 1837 փետր. 12-ին Տփխիսի գաւառական ուսումն. տեսուչ ու ֆրանսերէն լեզուի ուսուցիչ անուանուեցաւ։ Միևնոյն ժամանակ մի մասնաւոր ուսումնարան էլ բաց արեց, ուր իր շուրջ հաւաքելով հայ պատանիներին, սկսեց կրթել նոր ուղղութեամբ (այժմ կան այդ աշակերտներից պ.պ. Դ. Դաւրիշեանցը և Գէորգ Աբիմեանը)։ Գերմանացի ճանապարհորդ Մ. Վագներն ասում է. «Ես դպրոցը շատ անգամ գացի ու հայ տղոց յառաջդիմութեանը վրայ շատ զարմացայ։ Տասը, տասնուչորս տարեան տղաք աղէկ կը կարդան ու կը գրեն հայերէն, վրացերէն, թաթարերէն, ռուսերէն, գերմաններէն ու

գաղղիերէն։ Ստուգիւ շատ զարմացայ. գերմաներէն աղէկ շեշտելով կը խօսէին ու վարպետին իմ առջեւ գրել տուած բաներէն տեսայ, որ գերմաներէն լեզուին կազմութեան աղէկ տեղեակ էին. իմ առջեւ Կեթէին (Գեօտէ) ու Ջիլլէրի գործքերը կարդացին...» (Վաղներ՝ ճանապարհորդութիւն ի Հայաստան թրգ. հ. Փ. ճամճեանի Վիեննա 1851 էջ 3)։ Արովեանին է պարտական իր տուած տեղեկութիւնների համար բարոն Օ. Հակստհաուզէնը.—«Արովեանը այն ազնիւ, ոգեշամիտ և ճշմարտասէր մարդերից մինն էր, որոց նմաններուն շատ սակաւ եմք պատահում կեանքի մէջ։... Ինձ պիտոյ էր միայն մի հարց առաջարկել նրան, դիպչել նորա սրտին, և նոյն ժամայն զարթնում էին նրա մէջ մտքեր և յիշատակներ, որ իսկոյն հաղորդում էր ինձ։ Այնուամենայնիւ Արովեանը լի էր վառուած հայրենասիրութեամբ զէպի իւր հայրենիքը. այս պատճառաւ ըստ մեծի մասին նորան եմ պարտական վայրը յիշուած բաներու համար...» (թարգմ. Ե. Բաստամեանի, «Կռունկ» 1862 թ.)։ 1839 փետրուար 28-ին Ա. արձակուեցաւ հոգեւոր կոչումից և նոյն տարուայ սեպտեմբերին ամուսնացաւ գերմանուհի օր. Էմիլիա Լօոզէի հետ, որից մի տղայ և մի աղջիկ ունեցաւ։ 1843 յունիսի 19-ին Ա. նշ. Երեանի գաւառական ուսումն. տեսուչ։ Անցնելով Երեւան, այնտեղ էլ ուսումնարան բաց արեց։ Այդ

ժամանակ Արովեանը ցանկացաւ թողնել ընտանիքն և կուսակրօն դառնալ, սակայն ներսէս Ե. կաթողիկոսը մերժեց։ Խ. Ա. լինելով պետական ծառայութեան մէջ, 1848-ին արդէն կօլլէժսկի ասեսօրի աստիճան (чинъ) ունէր և նոյն տարուայ մարտի 9-ին արձակուեցաւ պաշտօնից։ 1848 թ. ապրիլ 2-ին յանկարծակի անհետացաւ Արովեանն և ընդ միշտ կորաւ հայ անդրանիկ վիպասանի գերեզմանը *)։ (Նրա մահուան օրն ոմանք դնում են յուլիսի 11-ին, ոմանք էլ յունիսի 12, որ սխալ է)։ Նրա անյայտանալու ամենաճիշտ տեղեկութիւնն այն է, որ Երևանի պարսիկներն են նրան կենդանի թաղել, մանաւանդ որ նրանց հետ հաշիւներ ունէր և առաւօտներ գնում էր զբօսնելու նրանց այգիներում (այս կարծիքը մենք լսել ենք Խաչատրի որդի Վարդանից, որը նոյնպէս Դորպա-

*) Հանգ. Ա. Երիցեանը 1896 թ. № 102 «Արձագանք»-ում ասում է. (երևի վերցրել է Акты Археогр. комм. գրքերից) «1848 թ. ապրիլի 26-ին փոխարքայ իշխ. Վօրոնցովն ստացաւ Երևանի նահանգապետից հետևեալ պաշտօնական զեկուցումն... «Երևանի գաւառական ուսումնարանի տեսչութիւնից արձակուած կօլլէժսկի ասսեսօր Աբովեանն ապրիլի 2-ի լուսադիմին մեկնել է յայտնի չէ ուր և անհետ կորել։ Ըստ իւր տանեցոց բացատրութեան, նա անջատուելուց երեք օր առաջ մտատանջութեան մէջ է ընկել, գրեթէ ոչինչ չի կերել, սակաւ է խօսել, շորերը չի հանել և իբր թէ անքնութիւնից տանջուելիս է եղել»։

տումն էր ուսել, երբեմն ուսուցիչ Երևանի թեմ. դպ. և յետոյ Գէորգ. ճեմարանում, մ. 1896 թ. Էջմիածնում)։ Մի և նոյն կարծիք է յայտնում և պ. Լ. Տիգրանեանցը, որին պատմել է այդ մասին Աբովեանի աշակերտ Վ. Խուդաբաշեանը և սրան էլ նոյն իսկ պարսիկները ցոյց են տուել թաղման տեղը և երբ Վ. Խ. պատմել է իր հօրը, նա ասել է. «վաղ թէ ուշ Աբովեանը պէտք է սպանուէր Ասաղ բէգի ձեռքով», (cherchez la femme)։ Պ. Տիգրանեանն արդէն թաղման տեղը գտել է։ Խ. Աբովեանի պատկեր ունենալու համար հայութիւնը պարտական է դարձեալ պ. Տիգրանեանցին, որը 1881-ին հին իւղաներկ պատկեր գտնելով լուսանկարել տուեց, իսկ 1884-ին էլ նկարել տուեց «Խ. Աբովեանի տնակը Քանաքեռում»։

Աբովեանի և մեր գրականութեան գլուխ գործոցն է *Վէրք Հայաստանի*, ողբ հայրենասիրի առաջին աշխարհարար վէպը, որով հիմք դրուեցաւ հայոց աշխարհիկ գրականութեան։ Վէպը վերցրուած է իրականութիւնից։ 1826 թ. երբ ռուսական զօրքերը յաղթական մուտք գործեցին Հայոց Նահանգ, Աբովեանն էլ վերադառնում էր իր հայրենիք ամառային արձակուրդների պատճառով և ականատես եղաւ իր հայրենակից Աղասու սխրագործութիւններին, որը գործում էր ռուսաց դրօշակի տակ։ Այս քաջին ընտրեց նա իր վէպի հերոս և 1841-ին գրեց

այն լեզուով և բարբառով, որով խօսում էր նա իր մանկութիւնից ի վեր։ Նա վախենում էր, որ իր վէպը կարող էր ընդունելութիւն չը գտնել, որովհետև ժամանակի գրքերը գրաբար էին և «նոր լեզուն էլ անպատիւ»։ Ա. տպագրութիւնը կատարուեցաւ 1858 թ. Տփխիսում Խ. Ա-ի աշակերտ Յովսէփ Փոնդոյեանի հրատարակութեամբ, իսկ Բ. տպ. 1897 Մոսկուայում Երկերի ժողովածուն Ի. Ժամհարեանի հրատ.։ Գր. վաստ. I Տպուած առանձին. ա) *Պարապ վախտի խաղալիկ*. Տ. 1844. 1864 և 1897 երկերում. բ) *Անտիպ երկերը* տեսը Ա. Տ. 1904. գ) *Նախաշաւիղ*. դասագիրք. II. Երկերում տպուած ա) *Օվսաննայ*, պատմութիւն. բ) *Թէոդորայ կամ Որդեկան սէրը*, երգախաղ մէկ անգամ տալու. գ) *Խղճիկն այն խրճիթ*, ռոմանաւոր. դ) *Մտածմունք ի տեսիլ հայրենեաց*. ե) *Ճանապարհորդութիւն պարոն պրոֆեսսոր Պարրոտի եւ Խաշատուր դպրի Ապովեան*, բացի այս մի շարք ռոմանաւորներ, առակներ և այլն. Մնացած գործերը.—*Մուտ Հայկայ ի Հայաստան եւ արհաւիրք երեւակայութեանն նորա ի ժամ պատերազմին, որ ի 1826 ամի*. բ) *Խնդամիտ զգացմունք երախտագէտ Հայկազին յազատութիւն Հայրենեաց իւրոց, ասացեալ յԵրեւան'ի 1826 ամի առ կոմսն Երեւանի*. (*իմա Պասկեվիչն*). գ) *Բան հրաժարական առ բարեկամ մի, որ դիմէր ի հայրենիս ի 1831 ամի*. դ) *Զգացմունք ցաւալի սրտիս ի տե-*

սանելն իմ յօտարութեան զսիրելի հայրենակիցն իմ զԲաղալ Փահրադեան ի 1832 ամի յ2 մարտի ի Դորպատ. և) Առ հանդէս ուխտի ի տուրք լեռան Մթաձմինդայ ի 1840 ամի. զ) Բան ասացեալ ի վերայ դամբարանի սիրելի աշակերտին իմոյ Ղորխմազ Արղութեանի... է) Ընդէս. պատմութիւն, գրուած 1841-ին. ը) Դարտուութիւն առ սիրելին ի 1842 ամի. թ) Մենասատան ս. Գեղարդայ վանի 'ի 1842 ամի. ժ) Առաջի պատկերի բազմերախտ իմ բարերարի՝ Փրիդրիխ Պարրօտի, որ վախճ. ի 1842 ամի ի Դորպատ. ժա) Ի վերայ ուրումն տարաբաղդ աղջկան, յ8 մարտի 1844 յԵրեւան. ժբ) Առ պատուական իմ բարեկամ.. Եզոր Ակիմեան ի 1844. ի 28 ապրիլի. ժգ)Մուտ ի Հայրենիս ի 1844 ամի. ժդ) Առ շնորհաձաղիկ պատանի՝ ի 6 օգոստ 1846. ժե) Կարօտութիւն նախնի վայելչութեանց Հայրենեաց իմոց, ասացեալ ի 1844 ամի յԵրեւան (1824՝) ժզ) Աղերս առ Մուսայն ի դէմս Հայաստանեայց. ժէ) Վէրք Հայաստանի, վիշտ հայրենասիրի առ զետն Զանգի. (հատուած ի բոմանէ). ժը) Առ զետն Զանգի, որ յԵրեւան. ժթ) Առ զարուստ ն. ը. սրբ. Կարապետ արքեպ-ի Վրաստանի ու Տայոց. ի) Ազնուամտութիւն ու շնորհակալութիւն, պարզ պատմ. իա) Յօդուածներ ռուս. „Кавказъ“ լրագրում։ Բացի այս թողել է նաև գերմ. գրուածքներ տպուած ու անտիպ, որոնց մէջ խօսում է հայոց, քրդերի և

այլ ազգաց նիստ ու կացի վերաբերեալ *)։

ԱԲՐԱՀԱՄ Բ. ԽՈՉԱԲԵՑԻ ԿԱՄ ՎԱՆԵՑԻ.— Երբեմն առաջնորդ Մշոյ, 1730-ին ընտր. ամենայն հայոց կաթողիկոս։ Սա Էջմիածնի տաճարի մէջ երկու խորան շինեց յանուն ս. Լուսաւորչի և ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետի. Վախճ. 1734 նոյեմբ. 11-ին։

ԱԲՐԱՀԱՄ Գ. ԿՐԵՏԱՑԻ.—Պատմագիր կաթող. ամ. հայոց, հայ հօր և յոյն մօր որդի, երբեմն առաջնորդ Թրակիոյ կամ Թէքիր դաղի, ընտր. 1734 թ. նոյեմբ. 24-ին կաթողիկոս։ Այդ ժամանակ նա ուխտ էր եկել ս. Էջմիածին և իր նախորդ Աբրահամ Խոշաբեցու թաղմանը ներկայ գտնուեցաւ։ Ինչպէս յայտնի է նոյն ժամանակներում Հայաստանը նատրը Շահի ասպատակութիւններին էր ենթարկուած և Աբրահամն էլ բարեկամացաւ Շահի հետ և նրա հրաւիրմամբ գնաց Մուղանի դաշտը և օրհնելով նրա սուրը՝ կապեց մէջքին ի նշան թագաւորութեան։ Շահը շատ մեծարեց նրան և իրրև

*) Վէրք՝ից կտորներ կան թարգմանուած գերմ. Armenisch Bibliothek և ռուս. Армянскіе беллетристы գրքերում։ Ամբողջ վէպը փոխադրուած է թատերադրամի Ասլան Բալասի վերնագրի տակ։ 1898 թ. Տփխիսում կատարուեցաւ Խ. Ա-ի մահուան 50 ամեայ տարեդարձը։

իր սիրելի մարդ իր մօտ պահեց, որով կաթողիկոսը միջոց ունեցաւ մեղմելու շահի սիրտն և բազմաթիւ հայ գերիներ ազատ թողուցան։ Վերադառնալով ս. Էջմիածին, վխճ. 1737 ապրիլ 18-ին և թաղուեցաւ Զորակաթ վանքի ձախակողմը։ Աբրահամ կաթող. գրել է Նատիր-Շահի աւերմանց պատմութիւնը, որը տպ. Գալկաթայում (Հնդկաստան) 1796-ին և ս. Էջմիածին 1870-ին։ Այս պատմագրութեան կցուած է հետաքրքիր յօդուած «Պատմութիւն Անի քաղաքին»։

ԱԲՐԱՀԱՄ ԿԱԹՈՂԻԿՈՍ Աղթամարի 1610—1614 թ.

ԱԲՐԱՀԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ.—Հայ կաթոլիկների Էլիբանանի կաթողիկոս, հիմնադիր Էլիբանանի ս. Փրկիչ վանքի միաբանութեան. ծն. 1679-ին։ Սոյ առաքելական հայոց կաթողիկոսութեան միաբան լինելով՝ Սոյ կաթողիկոսից եպ. ձեռնադրուեցաւ։ Նախ Տրապիզոնում և յետոյ էլ Հալէպում առաջնորդութիւն արեց և խմբուեցաւ կաթոլիկութեամբ, և որովհետև շրջապատող հայերին էլ մոլորեցնում էր, ուստի հայ եկեղեցու ջատագովները սկսեցին հալածել և նա էլ իբրև հերձուածող փախաւ Էլիբանան, ուր եկեղեցի շինեց պաշտպանութիւն գտնելով Օսմանեան պետութիւնից ապստամբուած Դիւրզիներից և 1740-ին իրեն կաթողիկոս հրատարա-

կեց՝ հպատակուելով Հռոմի պապին։ Վախճ. 1749-ին։

ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ԳՐԻԳՈՐ.—Գերասան. ծն. Տփխիսում 1862 յունուար 17-ին։ Կրթ. ստացաւ Ներս. դպ.։ Գ. դասարանից դրպրոցը թողնելով՝ հեռագրական ծառայութիւն մտնելու նպատակով մօտ երեք ամիս գերման. և ֆրանս. լեզուներով պարապեց։ Այնուհետև 6 ամիս կամաւոր զինուոր եղաւ և ապա սկսեց ծառայել մի երկրաչափի մօտ։ Երբ 1879-ին Տփխիսում կանոնաւոր խումբ կազմուեցաւ և իշխ. Նապոլէօն Ամատունու ղեկավարութեամբ սկսեց կանոնաւոր ներկայացումներ տալ, Գ. Աբր. շփուելով նրանց շրջանի հետ, սկսեց մէկ-մէկ մասնակցել ներկայացումներին և կարողացաւ մի փոքրիկ դերը ձեռք բերել, որը հետզհետէ սկսեց աճել շնորհիւ իր անպատմելի աշխատասիրութեան։ Այս թատերաշրջաններից յետոյ նա իբրև գերասան սկսեց շրջել Գոմկասի այլ և այլ քաղաքներ, գնաց Նոր Նախիջևան, Պարսկաստան և կրկին Տփխիս վե-

բաղառնալով՝ անցաւ Մոսկուա, ուր երկու տարի հետևեց նշանաւոր դերասանների խաղերին։ 1891—92 թատերաշրջաններին նա Տփխիսում յայտնի եղաւ իբրև շնորհալի դերասան—հակառակորդի դերերում, ինչպէս վկայում են տեղական հայ և ռուս թերթերը։ Այս շրջանից յետոյ նա ուղարկուեցաւ Կ. Պոլիս դերասաններ վարձելու, որ նպատակով նա կրկին անգամ յաջորդ տարին գնաց Կ. Պոլիս։ Վերադառնալով Տփխիս մի քանի շաբաթ միայն կարողացաւ ապրել և 1894 թ. սեպտեմբեր 12-ին, երեկոյեան 6 ժամին սրտի պայթումից յանկարծամահ եղաւ և նոյն ամսի 16-ին թաղուեցաւ Խօջիվանքում։ Գ. Աբր. մեծ ապագայ ունէր, սակայն շուտով հանգաւ այդ ճրագը։ Նրա դերերն էին փաստարան Բերենտ (Մնանկութիւն), Արութին Զիմզիմով (Պէպօ) Դուլարէնց Օսէփ (Քանդած օջախ), (Դոքտոր Ջտոքման), Ֆրանց (Աւազակներ), Բաշրլէն, Մուլինէ (Դարբնոցապետ), Ժորժ Դիւվալ (Կամել. տիկին), Ջէյլօկ (Վենետ. վաճառական) և այլն *)։

ԱԲՐՕՅԵԱՆ ՊԵՏՐՈՍ (ԱՊՐՕ).—Զմիւռնիացի նշանաւոր հարուստ վաճառական, որ իր եղբայրների Աբրահամի ու Ստեփանի հետ մեծ

*) Գ. Ա. 3—4 տարի ուսուցչութիւն է արել Ղուբա և այլ քաղաքներում, ժամանակը յայտնի չէ։

առևտուր ունէր Եւրոպայի այլ և այլ պետութիւնց մէջ և Հնդկաստանից, Պարսկաստանից և Ճանկաստանից ասիական վաճառներն էր արտահանում Եւրոպա։ Գլխաւոր վաճառատունը գտնուում էր Զմիւռնիայում։ Հոլանդիոյ Ամստերդամ քաղաքում ներկայանալով ռուսաց Պետրոս Մեծ կայսեր՝ մի խնդրագրով յայտնեց իր առևտրի ծաւալը և խնդրեց թոյլտուութիւն Ռուսիայումն էլ առևտուր անելու, Ռուսաստանով Պարսկաստանից և Հնդկաստանից ապրանք տեղափոխելու մասին։ Պետրոս Մեծը սիրով ընդունեց նրա առաջարկն ու 1717 թ. յունուար 28-ից տուած (Ամստերդամում) հրովարտակով հրամայեց ում հարկն է, որ ազատ իրաւունք տրուի Ռուսաստանում առևտուր անելու՝ վերցնելով նոյն քանակութեամբ մաքս, որքան որ վերցնում էր Ջուղայեցի-Պարսկաստանցի հայ վաճառականներից։ Հրովարտակը տուած էր իրեն Ապրոյին և շնորհուած առևտրական կատարեալ ազատութիւն։ Ապրօն առևտուր էր անում գլխաւորապէս մետաքսով և ակնեղէնով *)։

*) Մենք աւելորդ համարեցինք այստեղ մէջ բերել հրովարտակի պատճէնը, ցանկացողը կարող է գտնել Գլինկիի Собраніе актовъ, относ. къ обозрѣнію исторіи Армянскаго народа գրքում մասն I էջ 158—160, նոյնպէս և մեր «Հայ վաճառականները Ռուսաստանում» գրքումը, որ շուտով կը տպուի։ Պետրոս Ապրոյի պատկերը գտնուում է ս. Էջմիածնում։

ԱԳԱՊԵԱՆ ԱՐՔԻՊ. — Ծն. Զաքարիա Աշուղի (Լալի) գ. 1860 մայիս 8-ին։ Սկզբ. կրթ. ստացաւ իր քահանայ հօր մօտ իսկ նրա մահից յետոյ էլ այլ քահանաների մօտ։ Այնուհետև բնակեցաւ Տփխիս և 1869-ից ուսաւ ծխ. ուսումնարանում, իսկ 1870—75 ներս. դպ. որանից արձակուելուց իրրև ազգակարար և մի ուժամանակ էֆէնդիների դրախանումում ծառայելուց յետոյ 1876—78 Գեոաշէնում, 1879—81 Զարքաֆարայում, 1881—82 Նուխում ուսուցչութիւն արեց։ Այնուհետև մտաւ Տփխիսի Ազէքսանդրեան ուսուցչական ինստիտուտ, ուր 1886-ին ուսումն աւարտած գնաց Մոզդոկ ուսուցչի պաշտօնի։ 1889—90 և 92—96 թթ. Տփխիսում, 1890—91 Զարար-Օղլիում, 1891—92-ին Ախալքալաքում ուսուցչութիւն անելուց յետոյ գիւղը քաշուեցաւ։ 1901 թ. ցարդ ծառայում է Երևանի թեմ. դպրոցում։ Ա. Ա-ի առաջին բանաստեղծութիւնը տպուած է «Մեղու Հայաստանի»-ի լրագրի 1881 մայիս 22-ի համարում, և այդ օրից սկսած գրում էր և՛ «Մեղու»-ի մէջ և՛ «Նոր-Դար»-ում տարով յօդուածներ և պատկերներ գիւղական կեանքից։ Առանձին գրքով լոյս են տեսել ա) *Մուսինի զանգատը* Տ. 1890 և բ) *Ողբասանութիւն* (թարգմ.) Տ. 1881։ Ա. Ա. վերջերս չի գրում գրական մենաշնորհի զաւակների շրջանումը չը լինելու պատճառով։

ԱԳՈՆԵՑ Հ. ՍՏԵՓԱՆՈՍ (Քիւվէր).—Մ. Վա. Մխ.. ծն. Տրանսիլվանիոյ ճուրճով ք. 1740 նոյեմբ. 20-ին, 1757-ին զրկուեցաւ Վենետիկ, ուր ուսաւ և 1763-ին վրդ. ձեռնադրուեցաւ, 1785-ին աբբայի փոխանորդ ընտրուեցաւ, 1800-ին աբբա. 1804 Հռոմում եպ. ձեռնադրուեցաւ «Սիւնեաց» անուամբ։ Վախճ. 1824 յունուար 24-ին Վենետիկում։ Գր. վասա.—(բոլորը տպուած Վենետիկում).—ա) *Ճարտասանութիւն* 1775. բ) *Աշխարհագրութիւն* 11 հատ. 1802—16. գ) *Պատմութիւն վարուց Մխիթարայ* 1810. դ) *Տեսութիւն հին եւ նոր կտակարանի* 1819, 1824։



ԱԴԱՄԵԱՆ ՊԵՏՐՈՍ. —Հայ թատրոնի յայտնի դերասան, ծն. Կ. Պոլսի Գաղատա թաղում 1849 (ասում են և 1850)-ին։ 8—9 տ. հասակումնեան տուին թաղական վարժարան, սակայն Պետրոսը չը հետաքրքրուելով դպրոցով, 14 տ. սկսեց այցելել Արևելեան թատրոն։ Առաջին անգամ բեմ դուրս գալով «Վիլհէլմ աշխարհակալ»-ի մէջ մի սպայի դերում, այնքան ազդու կերպով արտասանել է

իր միակ ասելիք «մեռիր դաւաճան» խօսքերը, որ միանգամից իրեն սպասելիք ապագայի վճիռ է տուել։ Առաջին անգամներ խաղալով Ս. Հէքիմեանի առաջնորդութեամբ, 1867-ին բեմ դուրս եկաւ իբրև դերասան։ 1869-ին խաղալով Վարդովեանի խմբումը, անցաւ Ռուսաստան՝ Նորնախիջևան, ուր մի շարք ներկայացումներ տուեց։ Այդտեղ լսելով, որ Կ. Պոլսի հրդեհը լափել է իր հօր կարողութիւնը՝ Պոլիս վերադարձաւ։ 1879-ին Տփխիսից ստացած հրաւէրի համաձայն եկաւ Կովկաս, ուր «Սէր առանց համարման» թատերախաղով հիմք դրեց մի շարք ներկայացումների։ Կարճ ժամանակում Ադամեանի անունն այնքան ընդհանրացաւ, որ թատրոնը լցւում էր ոչ միայն հայերով, այլ և օտարազգիներով։ 1880 և 81 թ. ամառները նա անցկացրեց Կովկասեան գաւառական հայաքաղաքներում, իսկ 1882-ին գնաց Ռուսաստան և խաղաց Ն. Նովգորոդ, Մոսկուա և այլ քաղաքներում *)։ 1884-ին Պ. Ա. սկսեց խաղալ Պետերբուրգում (Ուրիէլ Ակոստա, Համլէտ, Կորբադո են) ուր մեծ յաջողութիւն գտնելով, այցելեց բազմաթիւ մեծ քաղաքներ և վերջապէս

*) 1883 թ. ռուս թերթերը, Ադամեանի Համլէտը հաւասարեցնում են Ռոսինի և Սալվինի խաղի հետ, մի քանիսն աւել են գտնում, իսկ նրա կատարած Արբենինը—Լերմոնտովի «Դիմակահանդէս»-ում ապշեցրել էր ռուս հասարակութեան։

1886-ին նորից Տփխիս եկաւ, ուր խումբ կազմելով Վլադիկավկազով նորից Ռուսաստան գընաց, իսկ ձմեռուան թատերաշրջանին խաղաց Տփխիսում։ 1887-ին Բաթումով կրկին Ռուսաստան գնաց այցելելով Կէրչ, Սիմֆերոպոլ, Թէոդոսիա և Օդեսսա, իսկ 1888-ին Ելիսաւէտգրադ, Մոսկուա և Կազան և նոյն տարին գնաց Կ. Պոլիս, ուր նմանպէս խումբ կազմելով սկսեց խաղալ գաղղիական նոր թատրոնում։ Այնտեղի յաջողութիւններից ոգեորուած, 1889-ին անցաւ Զմիւռնիա և մի շարք ներկայացումներ տուեց, սակայն այնտեղից արդէն հիւանդ Կ. Պոլիս վերադարձաւ։ 1890-ին բժիշկները յայտնեցին, որ նա թոքախտ ունի։ Կ. Պոլսի ռուսաց դեսպանը, որ Ադամեանին անչափ սիրում էր, սկսեց այդ հիւանդութեան առաջն առնել տեղաւորելով նրան ռուսաց ս. Նիկոդայոսեան հիւանդանոցում, սակայն չը նայած ամենամեծ և լուրջ խնամքին՝ Ադամեանը չը կարողացաւ մնալ հիւանդանոցում, դուրս եկաւ և 1891 յունիսի 2-ին մեռաւ Կ. Պոլսում։—1888 դեկտ. 3-ին տօնուեցաւ նրա բեմական գործունէութեան 25-ամեայ յօբելեանը։ Ադամեանը շատ անգամ խաղացել է ռուս և այլազգի դերասանների հետ իր դերը խաղալով հայերէն և կամ ֆրանսերէն, փորձել է ռուսերէն խաղալ, սակայն չի յաջողուել։ Գ. Ա-ը և՛ նկարիչ էր և՛ բանաստեղծ և՛ վիպասան, լեզուաբան, քննադատ և այլն։ Նա խաղում էր

Համլէտ, Քին, Կորրադո, Օթելլո, Ուրիէլ Ակոստա, Լիր, Նարցիս և այլն։ Գր. վաստ.—ա) *Շէքսպիր եւ իր Համլէտ ողբերգութիւնը*. Տ. 1887. բ) *Նամակներ առ Սանդրս և Բարեաւ մնաք իմ յոյսեր*, Տ. 1894. գ) *Անկոչ հիւր* (վէպիկ, տպ. Հանդէս գրակ. և պատմ. մէջ 1888 թ.)։ Նրա մնացեալ գրուածքների մի մասը ժողովուած է «*Քերթուածք եւ թարգմանութիւնք*» գրքումը, Վենետիկ 1896.

ԱՂԵԼԵԱՆ (ԱԶԱՐԻԱ ԳԱՆԻԷԼԵԱՆ).—Երիտասարդ բելլեարիստ. Հին-Նախիջևանցի. աւարտեց Բիզայի պոլիտեխնիկում ոսկէմեդալով և ուսուցչութիւն արեց Երևանի թեմ. դպ.։ Ուսանողական կեանքից չարքաշ և չքաւոր կեանք վարելով թոքախտով հիւանդացած վերադարձաւ Կովկաս։ Մ. 1903 նոյեմբ. 10-ին Հ. Նախիջևանում 30 տ. հասակում։ Աղելեանը նախկին «Մուրճ»-ի գլխ. աշխատակիցներից մէկն էր և գեղեցիկ էր վէպիկներ և պատկերներ Աղելեան կեղծ անուան տակ։ Աշխատակցել է նաև հայերէն ուրիշ պարբերութիւններին։ Գր. վաստ. —*Սկեսուրը* Տ. 1899։

ԱԶԱՐԵԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ (ՊԵՏՐՈՍ՝ Ժ-րդ).—Տաճկահայ կաթողիկների կաթողիկոս-պատրիարք, ծն. 1826 դեկտ. 19-ին։ Կրթ. ստացաւ Վիեննայի Մխիթարեանց վանքում և կուսակրօն եղաւ։

1886-ին ընտր. կաթողիկոս։ Վախճ. 1899 ապրիլ 19-ին Կ. Պոլսում։ Իր եղբօր Արիստակէս Ազարեանի հետ, որը նոյնպէս ուսաւ Վիեննայում և առևտրական ասպարէզ մտաւ, կազմել է *Բառարան Յունարէն-Իտալերէն-Հայերէն-Տաճկերէն*, Վիեննա 1848 թ. ևն։

ԱԶԱՐԻԱ ՀԻՆ ՋՈՒՂԱՅԵՑԻ.—Սսի կաթողիկոս, ընտր. 1584-ին, սակայն գիտական կոչուած Տիրատուր և Յովհաննէս վարդապետներն Աթոռի համար խռովութիւն ձգելով՝ Ազարիան ստիպուած եղաւ թողնել Սիսը և գնաց Կ. Պոլիս, ուր ընտր. պատրիարք, սակայն 1591—92 թ. հազիւ մի տարի մնալով պատրիարք, դիջաւ կիլիկեցւոց թախանձանքին և վերադարձաւ Սիս, ուր դեռ չէին դադարել խռովութիւնները։ Վախճ. 1601 յունիս 2-ին Սսում։

ԱԶԱՐԻԱ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԵՑԻ. — Վարդապետ տոմարագէտ։ Դաւիթ և Մելքիսեդեկ կաթողիկոսների օրով սա *նոր տոմար* կարգադրեց տարեմուտը նշանակելով 1616 թ. մարտ 21-ից (1904 թ. Ազարիայի 289 թուականն է)։ Այս տոմարը գործ էր ածւում Նոր Ջուղայի հայոց մէջ և դեռ այժմ էլ հետքեր են մնացել։ Առաջին ամիսն է Զամս, որի 1-ը հաւասար է մարտ 21-ին։ Ամիսների անունները. *Շամս, Աղամ, Շբաթ, Նսխայ, Ղամար, Նաթաը, Թիրայ, Դա-*

մայ, Համիրայ, Արամ, Ոմտան, Նիրհան, որոնք ունեն 30-ական օր և Աելեաց, որ 5 օր ունի հայկական ամիսների պէս։

ԱԶԲԱՐ ԱԴԱՄ.—Հայ աշուղ, ծն. Երևանում 1816-ին պարսկաստանցի ծնողներից։ Փոքր հասակից գիր կարդալ սովորելով՝ սկսեց երգեր շարադրել, սակայն զուրկ լինելով նիւթականից սկսեց զբաղուել կօշկակարութեամբ։ Նա շուտով երգչի հռչակ ստացաւ և խնջոյքների զարդ դարձաւ։ 1843-ին ամուսնանալով արհեստը թողեց և սկսեց աշուղութեամբ զբաղուել։ Մ. 1846-ին (ըստ Լևոնեանի «Հայ աշուղներ»-ի 1844-ին)։ Նրա բանաստեղծութիւններն ու երգերը ցրուած են այս ու այն ժողովածուների և հանդէսների մէջ։ Նշանաւոր են նրա *Ակոռիի կործանումը, Մեծ ու փոքր Մասիսների վէճը* և այլն։

ԱԶՆԱՒՈՐԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԱՄԻՐԱ.—Ճաճկահայ նշանաւոր հայերից մէկը, երբեմն արքունի սեղանաւոր և ազգային-պատրիարքական գործիչ, ծն. 1745-ին, մ. 1853 փետր. 24-ին 108 տարեկան։

ԱԶՆԱՒՈՐԵԱՆ. Հ. ՔԵՐՈՎԲԷ Վ. — Մ. Վ. Մխ., ծն. Կ. Պոլսում 1791 փետր., ուսաւ Վենետկի վանքում և 1814-ին վարդ. ձեռնադրուեցաւ։ Վիճ. Կ. Պոլսում 1843 ապրիլ 4-ին։ Թարգմ.

(տպ. Վենետիկում).—Գասուէի՝ *Խօսք ի վերայ ազգայ* 1841, Գլօրի՝ *Կենցաղ Խրիստոսէ՝ Քրիստոնէից։* Հայերէնից Խաչերէն է թարգմանել հ. Ղ. վ. Ինճիճեանի *Ամբանոց Բիւզանդեան* 1831։

ԱԼԱԴԱԹԵԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ.—*Գայիանեան օրիորդաց ուսումնարանի հիմնադիրներից մէկը, Տփխիսեցի։ 1856-ին աւարտելով Տփխիսի գիմնազիան գնաց Մոսկուա, ուր ուսումն աւարտելով 60-ական թուականներին Տփխիս եկաւ և 1868-ին քաղաքային ընտրութիւնների ժամանակ աւագ ներկայացուցիչ ընտրուեցաւ, իսկ Երեմիա Արծրունու հրաժարումից յետոյ 1½ տարի քաղաքագլխի պաշտօն վարեց։ Երբ 1869-ին միտք յղացաւ Գայիանեան օրիորդաց ուսումնարան հիմնելու, նա մասնակցեց հիմնադիրների խմբին և սկսեց աշխատել ուսումնարանի նիւթական ապահովութեան համար։ Մ. թոքախտից 1875 յուլիսի 25-ին Տփխիսում։ 1858 թ. երբ մի խումբ պատանիներ թատերասիրաց խումբ կազմեցին և հայերէն ներկայացումներ էին տալիս, նա գրեց մի կատակերգութիւն— «Վա՜յ իմ կորած 50 ռուբլի» վերնագրով, որ երկար խաղացւում էր հայոց բեմի վրայ։*

ԱԼԱՃԱՃԵԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ.—*Տաճկահայ նշ. հրապարակախօս. 1860 թ. յունուարից սկսեց*

Փունջ անունով շաբաթաթերթ հրատարակել Կ. Պոլսում, որը լոյս էր տեսնում շաբաթ օրերը։ 1864 -ին փորձ արեց *Փնջիկ* վերնագրով մի յաւելուած տալու, սակայն մի քանի համար տալով ընդհատեց։ 1892-ին Փունջը մի առ ժամանակ դադարեց և ցարդ հրատարակւում է։ Հ. Ա-ի այլ գր. վաստ.—ա) *Նեկտարինէ կոյս նահատակ*, Կ. Պ. 1861. բ) *Հաւաքածոյ հայկական ասացուածոց* Կ. Պ. 1862 և այլն։

ԱԼԱՄԴԱՐԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ Վ. — Բանաստեղծ, ծն. Աստրախանում 1796 սեպտ. 25-ին։ Նրա պապը Խոյի Խանի *աղամդար* (դրօշակակիր) լինելով՝ նրա ցեղը Ալամդարեան կոչուեցաւ։ Մկրտութեան անունը Գէորգ էր, որի համար մինչև քահանայանալը Գէորգ դպիր էր կոչւում։ Կրթ. ստացաւ տնային ուսուցիչների մօտ, իսկ 14 տ. մտաւ Աստրախանի Աղաբաբեան դպ., աշակերտեց Սերովբէ վարժ. Պատկանեանին։ Եփրեմ արքեպ. (յետոյ կաթողիկոս) Աստրախանի առաջնորդ եղած ժամանակ որդեգրեց նրան և ուրարակրի աստիճան տուեց։ 1813-ին ամուսնանալով՝ Լազարեան ճեմ.-ի հիմնադիրներից հրաւիրուեցաւ նոր բացուելիք ճեմ.-ի ու-

ուցչի պաշտօնով։ 1814-ին քահ. ձեռնադրուելով Յարութիւն անուանուեցաւ։ 1821-ին այրիացաւ և տեղափոխուեցաւ Ատրպատական։ Այնտեղ էլ երկար չը մնաց և Ներսէս Աշտարակեցու հրաւիրմամբ գնաց Տփխիս նորաբաց Ներսիսեան դպրոցի տեսուչ և ուսուցիչ։ Ներսէս արքեպ. ռուս-պարսկական պատերազմի պատճառով ստիպուած լինելով թեմը թողնել՝ Ալամդարեանին վերադարձուց և Տփխիսի թեմի ժամանակաւոր կառավարիչ նշանակեց, ինքը ռուս զօրքի հետ հայկական զօրաղնդով գնաց պատերազմ։ Ալ. այս պաշտօնում մնաց մինչև 1828 թ.։ Ներսէս արքեպ. Բեսարաբիա տեղափոխուելով, Ալ. ուղարկուեցաւ Հաղբատի ս. Նշան, ուր նա հիւանդութիւն քաշեց *)։ Հիւանդութիւնից կազդուրուելով՝ 1831 օգոստոսին գնաց Տփխիս իսկ այնտեղից էլ Քիշինև Ներսիսի մօտ։ Ներսէս արքեպ. իր մօտ պահեց նրան և նրա արած ծառայութիւնների համար ս. Աննայի ասպետանշանով վարձատրել տուեց։ 1833-ին Ալ. նշանակուեցաւ Ն. Նախիջևանի ս. Խաչ վանքի վանահայր և 1834 մայիս 24-ին լոյս 25-ին աւագակներից կողոպտուելով՝ սպանուեցաւ ու թաղ. եկեղեցու աջակողմեան դրան մօտ։ Գր. վասա.

---

*) Այդտեղ է երգել և գրել 1831 ապրիլին «Յամսամերջն Ապրիլի զպատուհանս բացի» երգը, որի մէջ երևի իր կրած նեղութիւններն է կամեցել պատմել։

—ա) *Հրահանգ Քրիստ. վարդապետութեան* Մ. 1847, բ) 31 *Բանաստեղծութիւն* (գրաբար, որոնց մեծ մասը երգւում է) հրատ. Ք. Գ. ՍԳԲ. 1884։

ԱԼԷԱԹՃԵԱՆ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊ.—ԾՆ. Կ. Պոլսում 1840-ին ուր ուսաւ և վարդապետ ձեռնադրուեցաւ։ 1879 ապրիլ 13-ին եպիսկ. ձեռն։ Պիլիկիոյ Մըկրտիչ կաթ. մահից յետոյ ընտր. կաթողիկոս, սակայն այլ և այլ հանգամանքներից ստիպուած չ՝արժանացաւ այդ կոչմանը։ Վերջերս Սկիւտարի ս. Խաչ եկեղեցու քարոզիչ նշանակուեցաւ և նոյն պաշտօնում վախճ. 1899 օգոստոս 15-ին։ Դեռ աշխարհական ժամանակ՝ 1863 թ. Կ. Պոլսում սկսեց հրատարակել «Թոչնիկ Պիզանդեան» անունով հնգեռամսեայ հանդէս, որը յաջողութիւն չ՝ունեցաւ և մի քանի տարիներ տարուց յետոյ նոյն տարին դադարեց։

ԱԼԷՔՍԱՆԵԱՆ Հ. ՋԱՔԱՐԻԱ Վ.—Մ. Վտ. Մխ., ծն. Ակնում 1711 մայիսին։ 1735-ին վարդ. ձեռն., 1749-ին Մխիթարի մահից առաջ քա-

բոզչի պաշտօնով Կ. Պ. զրկուեցաւ և մահից յետոյ վերատին Վենետիկ գնաց աբբայի ընտրութեան մասնակցելու։ Նորընտիր աբբան նրան կրկին Կ. Պոլիս զրկեց։ 1786-ին վերջնականապէս Վենետիկ վերադարձաւ, ուր վխճ. 1793 դեկտ. 31-ին։ Թարգմ. (տպ. Վենետկում)—ա) *Կշիռ ժամանակի* 1750, բ) *Քրիստ. վարդապետութիւն* Բելարմինոսի 1770, գ) *Գիրք հրաշից ս. Աստուածածնի* 1772 և այլն։ Սա է կազմել Մխիթարի երկհատոր բառգիրքի մէջ—*Բառգիրք յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց* (տպ. 1749)։

ԱԼԷՔՍԱՆԴԵՐԱՆՑ ՏԻԿԻՆ ՄԱՐԳԱՐԻՏ.—Գեղագրող հայ կին, Ղարաբաղցի կալուածատէր Ումբրի բէկ Օհանեանցի աղջիկը, ծն. Շուշում 1838-ին և ուսաւ տեղւոյն Կուսանաց անապատի Աբեր կոչուած կոյս Եղիսաբէթ Սարգսեանի մօտ։ Փոքր հասակից ձեռագործ է սիրել։ Մի անգամ ազգականների հետ Տաթեւայ վանքը ուխտ գնալով և տեսնելով եկեղեցական նրբա-

գործ-աղբղնագործ զգեստներն ու Գրիգոր Տաթևացու ձեռագիր գեղեցիկ Աւետարանը, որ ըստ աւանդութեան Տաթևացու քոյրն է գրել, խնդրում է որ իրեն տան՝ գրութիւնը տեսնելու, սակայն մերժում է ստանում ասելով՝ որ կինը իրաւունք չունի եկեղեցական սրբութեան դիպչելու։ Այդ օրուանից նրա մէջ միտք է յղանում գրել մի այդպիսի Աւետարան։ Այդ օրուանից նա սկսեց ժողովել ձեռագիրներ, սկսեց ուսումնասիրել հայկական ծաղկագրութիւնն ու գեղագրութիւնը։ 1851-ին ամուսնանալով Պետրոս Ալէքսանեան վաճառականի հետ զարձեալ շարունակեց իր սիրած գործը և գեղագրութեան մի տետր կազմելով 1862-ին դրկեց Վենետիկ տպելու, որի համար Մխիթարեանները 6000 ֆրանք պահանջեցին, սակայն մնաց անտիպ ամուսնու դրամական մի ձախորդութեան պատճառով։ 1868-ին *Հայկական գեղագրութիւն* վերնագրով մի տետր էլ կազմեց, որի երեսի վրայ Ղուշու նոր թաղն է նկարած, իսկ մէջը կան ս. գրքից զանազան պատկերներ, հայկական ծաղկագրերի ու հասարակ գրերի բազմաթիւ օրինակներ։ Այս տետրը տպ. Տփխիսում 1891-ին։ Նա գրեց մի Աւետարան *) որի վրայ 5 տարի

---

*) *Այս աւետարանի մասին ցանկացողը թող կարդայ 1886 թ. «Արձագանքն»-ի № 22 և մեր յօդուածը Փարիզի «Բանասէր» ամսագրում (1903 դեկտեմբերի*

է աշխատել և 1886-ի Մեռնեսրնէքին նուիրեց ս. Էջմիածնի թանգարանին։ Կաթողիկոսը մեծ համակրանքով ընդունեց այդ անգնահատելի նուէրը և օրհնութեան ու գոհունակութեան կոնդակով պատուեց տիկ. Մ. Ը-ին, Սրանից մի օրինակ էլ գրելով նուիրեց Շուշու Ղազանչեցոց եկեղեցուն։ 1898-ին աչքացաւով հիւանդացած եկաւ Տիֆլիս և շնորհիւ ակնաբոյժ Տարասիձէի բժշկութեան։ 1902 մարտի 27-ին մեռաւ և նոյն ամսի 30-ին Գևոնդեան կաթողիկոսի հրամանով Ղազանչեցոց եկեղեցու բակումը թաղուեցաւ։

ԱԼԹՈՒՆԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ.—Ֆրանսիա տորոնի մշակութիւն մտցնողը, մի պարսկահայ գիւղապետի որդի, ծն. 1709-ին։ Փոքր հասակում ծնողներից զոհացուելով իբրև գերի ծախուեցաւ և տարուեցաւ Փոքր Ասիա, ուր սկսեց աշխատել տորոնի և բամբակի ցանքսերում ու գործարաններում։ Մի օր էլ թողնելով իր գործը, փախաւ Զմիւռնիայի ֆրանսիական հիւպատոսարան, որտեղից գնաց Մարսէյլ, իր հետ տանելով տորոնի հունտը *)։ Մարսէյլում ամուսնանալով մի ֆրանսուհու հետ, որը 60,000

համարը)։ Իսկ կենսագր. տեղեկութիւնները «Հայկական դեղագրութեան» մէջ, 1902 թ. «Տարազ»-ում և այլն։

*) Այն ժամանակ Տաճկաստանից տորոնի հունտ դուրս տանողը մահուան էր դատապարտուած։

ֆրանք դրամօժիտ ունէր, անցաւ Վերսայլ և ներկայացաւ Լուի ԺԵ-ին ու յայտնեց իր գործի մասին։ Լուի ԺԵ. նրան պաշտօն տալով յանձնարարեց մետաքսի մշակութեան նոր եղանակը մտցնել Ֆրանսիա։ Ալթընեանն այս գործումը մնասուելով, թոդեց պաշտօնն և քաշուեցաւ Աւենիոն քաղաք, որտեղ սկսեց տորոնի մշակութիւնը։ Մ. 1774-ին շքաւորութեան մէջ, սակայն այժմ Աւենիոնի գաւառը տարէն 20 միլիոն ֆրանքից աւելի արժողութեամբ տորոն է արտահանում։ 1846-ին Աւենիոնում նրան արձան կանգնեցրին։ Հարաւային Ֆրանսիայում մի բոյս է մշակւում, որ նրա ազգանունից վերցրած althenie է կոչւում։

ԱԼԹՈՒՆԵԱՆ ԱՐՁԱԿ.—Ճաճկահայ գրագէտ, ծն. Կ. Պօլսում 1850 յունուար 3-ին։ Ուսաւ Պէշգեան վարժարանում և սկսեց ծառայել հայ փաշաների մօտ իբրև գանձապահ։ 70-ական թուականներին ճանապարհորդեց Մօլտօ-Վալախիաում, անցաւ Հունգարիա և Լեհաստան և ծանօթացաւ տեղական հայոց ներքին կեանքի հետ։ 1895-ին իբրև վտարանդի թոդեց Ճաճկաստանը և անձաւ Եգիպտոս, որտեղ մնում է ցարդ։ Գր. վաստ.—ա) *Ցնդագրութիւն հայոց գաղթականութեան որք ի Մօլտօ-Վալաքիա, Հունգարիա եւ ի Լեհաստան*, Փօքշան 1877. բ) *Սիրոյ*

զոնը Կ. Պ. 1887 *և* Պ) *Աղբատին պատիւ* (*երեք մաս*) Գահիրէ 1903 *)։

ԱԼԹՈՒՆ ՏԻՒՐԻ ԱՌԱՔԵԼ. — Տաճկահայ թատրոնական գործիչ, ծն. Գահիրէում (Եգիպտոս) 1840-ին։ Հայրը 18 տ. էր, երբ նա ներեաց հասարակութեան մէջ և 1859-ին քանի մի ընկերների հետ հիմնեց Կ. Պոլսի մէջ Խասքէոյի թատրոնը, իսկ յետոյ էլ Բերայի Արևելեան թատրոնը, որը մեծ դեր է խաղում տաճկահայոց թատերական պատմութեան մէջ։ Մ. Կ. Պոլսում 1886 մայիս 26-ին։

ԱԼԹՈՒՆ ՏԻՒՐԻ ԱՐԻՍՏԱԿԷՍ.—Ծն. 1804 մարտ 18-ին Գահիրէում, ուր մանելով պետական ծառայութիւն մեծ պաշտօնների հասաւ և վերջը Եգիպտոսի գլխաւոր պաշտօնատար եղաւ, միևնոյն ժամանակ էլ խմբագիր Եգիպտոսի պաշտօնաթերթի։ Իր կեանքի վերջին տարիներն անցկացրեց Կ. Պոլսում, ուր նշանաւոր

---

*) *Տեղագրութիւն գիրքը թէպէտ իր վրայ Փոքշան է կրում, սակայն տպուած է Կ. Պոլսում և որովհետև առանց գրաքննիչի, ուստի և տպագրութեան տեղը կեղծուած է։ Մենք այս յիշում ենք որպէսզի ապագայում Հայկական տպագրութեան պատմութիւն գրողը զերծ մնայ սխալից։ Այսպէս էլ բազմաթիւ գրքեր կան, որոնք տպուած են Կ. Պոլսում, սակայն երեսի վրայ գրած է Փոքշան, Կալաց, Փարիզ և այլն։*

եղաւ իբրև պատրիարքական—ազգային գործիչ։ Մ. Կ. Պոլսում 1868 յունուար 2-ին։

ԱԼԻԽԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ.—Երիտասարդ գերասան, ծն. Դուշէթում 1878-ին։ Կրթ. ստացաւ Ներս. դպ., ուր 1896-ին ուսումն աւարտելով նոյն տարուայ վերջը առաջին անգամ բեմ դուրս եկաւ և շարունակեց մասնակցել ինչպէս գերասան։

ԱԼԻԽԱՆԵԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ.—(Անկարող եղանք տեղեկութիւններ հաւաքելու) գրել է Երուանդ Բ. ողբերգութիւնը, տպ. Տ. 1888-ին, որ շարունակ խաղացւում է հայ բեմի վրայ։

ԱԼԻՋԱՆ Հ. ՂԵՒՈՆԴ Մ. վ.—Հանրագէտ Մբ. Վտ. Մխ., ծն. Կ. Պոլսում 1820 յուլիսի 6/18-ին (Մկրտ. անունը Քերովբէ)։ 1832-ին Հ. Մբ-կըրտիչ վ. Ալգերեանը նրան Վենետիկ տարաւ, ուր վանքի դպ. աւարտելով 1836-ին վանական դառնալով Ղևոնդ վերակոչուեցաւ, իսկ 1840 յունիս 7-ին վարդապետ ձեռնադրուելով՝ քիչ յե-

տոյ Ռաֆայէլեան վարժարանի ուսուցիչ կարգուեցաւ։ 1849-ից մինչև 1852 վարեց Բազմավէպ'ի խմբագրի պաշտօնը։ 1850-ին, իր ապագայ աշխատութիւնների համար նիւթեր ֆ ժողովելու նպատակով Հռոմ գնաց, ուր Վատիկանի դիւանում հետազօտութիւններ անելուց յետոյ Վտ. վերադարձաւ։ 1862-ին նոյն նպատակով այցելեց Լոնդոն, Վեննա, Բերլին, Փարիզ և Եւրոպայի այլ մեծ քաղաքներ, և ամեն տեղ մատենադարաններում աշխատելով բազմաթիւ քաղուածոյ նիւթերով 1853-ի մայիսին հասաւ Վտ., ուր Ռաֆայէլեան վարժարանի տեսչի օգնական նշանակուեցաւ, իսկ Հ. Ռ. Թրեանի մահից յետոյ՝ 1866-ին տեսուչ, որ պաշտօնում մնաց մինչև 1872 թ.։ Բացի այս միևնոյն ժամանակ վարել է նաև աթոռակալի, գործակալի և այլ պաշտօններ։ Գէորգ վ. Հիւրմուզի մահից յետոյ միաբանութիւնն ուզեց նրան ընտրել աբբա, սակայն դիջան նրա ազաչանքին, և չընտրեցին, որովհետև սպառնաց վայր դնել գրիչը։ 1890 մայիս 3-ին տօնուեցաւ նրա գրական գործունէութեան յիսնամեակը։ Վախճ. 1901 նոյեմբեր. 9/21-ին. կարճատև հիւանդութիւնից յետոյ։ Հ. Ալիշանը Եւրոպական բազմաթիւ գիտական ընկերութիւնների թղթակից անդամ էր։ Նրա գրական գործունէութիւնն սկսւում է քահանայանալուց, իսկ 1843-ից Բազմավէպ'ի գլխաւ. աշխատակից եղաւ Հ. Հ. Մարգար, Նահապետ,

Ալիշանեան և այլ ստորագրութիւններով։ Ալիշանը հիմնաւորապէս գիտէր բոլոր Եւրոպական հին և նոր լեզուները, նաև Ճանկերէն, Արաբերէն, Ասորերէն, Եբրայեցերէն եայլն։ Նրա երկերը զարդարուած են բազմատեսակ պատկերներով, քարտէսներով, նմանահանութիւններով եայլն և գիտնական, լուրջ ու անօրինակ աշխատութիւններ են։ *) Գր. վասա.—(տպ. Վենետկում.). ա) *Աշխարհագրութիւն քաղաքական* 1854. բ) *Նոր Հայաստան* 1855. գ) *Նուագք* (5 հատոր բանաստեղծ.) 1857—88. դ) *Հայոց երգք Ռամկականք* անգլ-հայ 1852—67. ե) *Նմանութիւն Ս. Աղոգիոսի* 1853. զ) *Ցուշիկք Հայրենեաց Հայոց.* 2 հատոր 1870. է) *Նշմարք եւ Նշխարք Հայաստանի.* 1870. ը) *Տեղագրութիւն Տիրակայ* 1881. թ) *Շնորհալի եւ պատրագայ իւր* 1873. ժ) *Ընդ Նղեանեաւ* 1874. ժա) *Մեռնողք սրտի եւ հոգւոյ* 1888. ժբ) *Ցոյցք Աստուծոյ* 1885. ժգ) *Աղօթք արեղայի* 1876. ժդ) *Ոսկեգիրք* (թարգ.) 1878. ժե) *Սիսուան, հատագրութիւն հայկական կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ* 1885. ժզ) *Այրա-*

---

*) *Զը նայած այն հանգամանքին, որ Ալիշանը աշխատանքի լուրջ գիտուոր էր, այնուամենայնիւ նա իր գրուածքներումը իր համոզման հակառակ ստիպուած է եղել մեղանչելու Հայաստանեայց Առաքելական եկեղեցու դաւանութեան դէմ ինչպէս իր Նախորդը՝ Հ. Մելքայէլ վ. Զաժչեանը, որը աւելի բարեխիղճ գտնուեցաւ և «Վահան հաւատոյ» տեսրով «մեղայ» կանչեց։*

բատ բնաշխարհ Հայաստանեայց 1890. ժէ) *Միտական տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի.* 1893. ժը) *Հայ-Բուսակ կամ Հայկական բուսաբանութիւն* 1895. ժթ) *Տեղեկագիր Հայոց Մեծաց* 1855. ի) *Հայ-Վենետ.* 1896. իա) *Հին հաւատք հայոց* 1895. իբ) *Աշխարհագրութիւն Հայաստանի* (տեսը) 1853. իգ) *Հայկական աշխարհագիտութիւն* 1881. իդ) *Սոփերք Հայկականք* 1853—61. (22 հատորիկ, որոնց մէջ ժողովուած են այլ և այլ ճառեր, վարքեր այլեւայլ ձեռագիրներից)։ իե) *Վասն վանորէից որ 'ի Ս. բ. յԵրուսաղէմ.* (ֆրանս. թարգմանութեամբ) 1896. իզ) *Կամենից—Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ* 1896. (բաղուած ձեռագիր յիշատակարաններից, նիւթեր Լեհաստանի Հայոց պատմութեան համար). իէ). *Արշալոյս Քրիստոնէութեան ի Հայաստան* 1901. իը) *Հայապատում։* Բացի այս ունի բազմաթիւ թարգմանութիւններ. ա) *Զանգակ՝ Ճիլէրի* 1871. բ) *Ընթրիք Ցիսուսի,* Բոսուէի, 1890. գ) *Խնացք 'ի շարշարանս Քրիստոսի,* Գ. Պեդմացու 1879. դ) *Ստալիա Լ.* Բայրոնի 1860 և 90 թթ. ե) *Հաղորդասէր հոգի,* Բականի 1865. զ) *Հրեշտակք,* Ս. Ալոգ Գոնզագայի 1892. է) *Ռոդոլֆ Հաբսբրգունի,* Լ. Բիւրգերի 1858. ը) *Քնար Ամերիկեան* (թարգմ. ամերիկեան բանաստեղծներից.) 1874 եայլն։ Հրատարակել է *Արուսեակ* 1895, *Լաբուրնիա* 1868, *Կիրակոս Գանձակեցի* 1865, *Վարդան վարդ.* 1862. եայլն։ Գր. վաստ.

ֆրանսերէն ա). Le Haïk, sa période et sa fête 1859. *բ*) Tableau succinctde l'Histoire et de la Litterature de l'Arménie 1860. *գ*) Physiographie de l' Armenie 1869. *դ*) L' Armenie pittoresque. *ե*) Sissouan ou l'Armeno Cilicie 1899. *զ*) Ayas, son port et son commerce et ses relations avec l'Occident 1899 *հայլն։ Իտալերէն.—ա*) Geonomia armena 1881. *բ*) Elia d' Alessandro 1876. *գ*) L' Armeno-Veneto 1893. *դ*) Vardan il grande 1875. *Անգլիերէն ա*) Armenian popular songs 1852—67. *բ*) Picturesque Armenia 1867.։ *Գերմաներէն* Das pittoreche Armenien 3 հատոր 1893 *հայլն։ Անտիպ գրուածքներ.—ա*) *Պատմութիւն հայ վանօրէից յիտալիա եւ յԵւրոպա. բ*) *Հայաստան նախ քան զՀայաստան մինչեւ զՄեծն Տիգրան գ*) *Ցիշատակարանք հայ գրչագրաց. դ*) *Կոնդակք քահանայապետաց առ Հայս եւ կաթուղիկոսաց առ քահանայապետս. ե*) *Մնացորդք Տեղագրութեանց Հայաստանի. զ*) *Հայկական* (8 հատոր, հաւաքումն աղբերք հայ պատմութեան և մատենագրութեան)։ Բացի այս այլևայլ մանր գրուածքներ կրօնական, գրական, պատմական և այլ բովանդակութեամբ։

ԱԼԻԶԱՆ ՊԵՏՐՈՍ ՄԱՐԳԱՐ.—Նշանաւոր հայ դրամահաւաք, երբեմն արքունի սեղանաւոր, ունէր դրամների (որոնց մէջ և հայոց) մեծ և

հարուստ ժողովածու. ծն. Կ. Պոլսում 1775 մ. 1834-ին։

ԱԼԽԱԶԵԱՆ ՅԱԿՈԲ.— Ռուսաց պետութեան հայազգի նշ. զինուորական, չքաւոր ծնողների որդի, ծն. 1826 յունուար 1-ին։ Ուսումն աւարտեց Տրփխիսի Զինուորական վարժարանում (Кадетскій корпусъ) և զինուորական ծառայութիւն մտաւ։ 1863-ին մասնակցելով Լեհական ապստամբութեան դէմ մղած գործողութիւններին. աչքի ընկաւ իր քաջութիւններով և սկսեց արագութեամբ առաջ գնալ, իսկ 1874-ին Կովկասի 19-րդ զօրաբաժնի հրամանատար նշանակուեցաւ։ 1877-ին. նախ Քութայիսի և ապա Սուխումի զօրաբաժնի հրամանատար եղաւ—իսկ 1877—78 Ռուս-Տաճկական պատերազմի ժամանակ մեծ քաջութիւններ ցոյց տուեց և միևնոյն ժամանակ Աբխազ, Ուբուխ, Զափսըդ և այլ լեռնականների դէմ մղած գործողութիւններին գլխաւոր կարդադրիչ զօրապետի պաշտօն կատարեց։ 1885-ին Ռուսական 3-րդ զօրաբանակի հրամանատար անուանեցաւ Ռուսիոյ արևմտեան

սահմանների վրայ։ 1894-ին հրաժարուելով պաշտօնից, նշանակ. Պետերբուրգի արքունի Զինուորական խորհրդի անդամ, որ պաշտօնում և մեռաւ 1896 նոյեմբեր 2-ին Պետերբուրգում։ Մարմինը բերուեցաւ Տփխիս և թաղուեցաւ Վանք—մայր եկեղեցու բակում։

ԱԽՎԵՐԴԵԱՆ ԳԷՈՐԳ.—բժիշկ, ծն. Տփխիսում 1818-ին։ 1830-ին ղրկուեցաւ Մոսկուա՝ Լազ. ճեմ., ուր 1834-ին ուսումն աւարտելով մտաւ տեղւոյն համալսարանի բժշկական ֆակուլ՛տետ։ Համալսարանում նիւթական նեղութիւններ կրելով 1839-ին աւարտեց և Տփխիս վերադարձաւ, ուր զինուորական բժշկի պաշտօն ստացաւ։ Զինուորական նախարար Չերնիշևը, որ շատ լաւ ճանաչում էր Գ. Ա-ին, 1842-ին նրան իր մօտ հրաւիրեց անձնական բժշկի պաշտօնով, սակայն Գ. Ա. իր մտքումը դրած լինելով գործել իր հայրենի Տփխիս քաղաքումը, 1846-ին վերադարձաւ Տփխիս և իր հետ բերեց հայերէն գրքերի հարուստ ժողովածու, որ պատահմամբ ձեռք էր բերել Մոսկուայում։ Տփխիսում նա հետևեց իր տոհմական գրականութեան պատմութեան, զբաղուեցաւ ձեռագիրներով, որի մի հարուստ ժողովածու կար Հ. և Ա. Էֆէնդիների մատենադարանում։ Նա առանձնապէս իր ուշքը դարձրեց հայոց ժողովրդական բանահիւսութեան վրայ և 1852-ին հրատա-

բակեց Մոսկուայում *Սայաթ-Նովայ* նշանաւոր երգչի բանաստեղծութեանց ժողովածուն (Բ. տպ. Տ. 1903)։ Մ. Տփխիսում ծանր տիւանդութիւնից յետոյ 1861 նոյեմբեր 17-ին և նոյն ամսի 19-ին թաղուեցաւ *)։

ՍԿՈԼՈՒԹ ԱՆԴՐԷԱՍ.—Գերմանիայում հայագիտութեան-հայկաբանութեան սկիզբ դնողը. ծն. Բեռնշտատ ք. 1654 մարտ 6-ին։ Դեռ 6 տարեկան էր երբ սկսեց եբրայեցերէն սովորել և աշակերտեց նշ. արևելագէտ Աւգոստոս Ֆայֆերին։ Ակոլութը ժամանակի ընթացքումը հմտացաւ հին եգիպտական և հայ լեզուներին։ Առ հասարակ նա փորձ արեց ապացուցանելու, որ հայ լեզուն եգիպտական ծագումն ունի, սակայն այդ կարծիքը չընդունուեցաւ։ Իր՝ հայոց լեզուի վերաբերեալ աշխատութիւնն տպելու համար մեծ ծախսով հայերէն նշանագրեր ձուլել տուեց։ Գր. վաստ.—ա) *Քառալեզու Կտրանք*—Tetrapla alcoranica... (արաբ. պարսկ. թուրք. և լատին.) Բերլին 1701. բ) *Աբդիու հայերէն*. Obadias armenus, quo cumanalisi vocum armeniarum grammatica... Լէյպցիգ 1675։ Այս գրքումը խօսում է հայ լե-

*) Ա. Գ. ունեցել է ինչպէս տպագիր, այնպէս էլ ձեռագիր հաղուագիւտ հայերէն գրքերի ժողովածու, որոնց մէջ եղել է Դաւիթ-Դանիէլեան վէճերի վերաբերեալ հնագոյնագիր ձեռագիրներ։ Մ՚բի մօտ են այդ յիշատակարանները, ժամանակ է տպելու։

զուի ուսման մասին մէջ է բերած Արդիու մարդարէութեան հայերէն թարգմանութիւնն իր կատարած լատին թարգմանութեան հետ։ Բացի այս կան տեղեկութիւններ հայոց լեզուի քերականութեան վերաբերեալ են։



ԱՀԱՐՈՆԵԱՆ ԱԻԵՏԻՍ. —Վիպագիր, ծն. Սուրմալու գաւառի (Երևանի նահանգ) Իգդիր Մաւայ գիւղում 1866 յունուար 4-ին։ Սկզ. կրթ. ստացաւ իր մօր մօտ, յետոյ Իգդիրի ծխ. ուսումնարանում։ Անցնելով Գէորգ. ճեմ. և 1885-ին աւարտելով Զ. դասարանի շրջանը՝ հայրենի գիւղը վերադարձաւ։ 1886-ին հրաւիրուեցաւ Իգդիրի ծխ. ուսումն. ուսուցչի պաշտօնով և այս պաշտօնը նա վարեց մինչև ուսումնարանի փակումը՝ 1895 թ.։ Այնուհետև երկու տարի մնաց գիւղում անպաշտօն, իսկ 1898-ին անցաւ Ազէյցարիա, ուր Լոզանի համալսարանում $1^1/_2$ տարի հետևեց գրականութեան դասախօսութիւններին։ 1900-ին գնաց Փարիզ և սկսեց լսել Սորբոնի գրական ֆակուլ'տէտում։ Վերադառնալով արտասահմանից հրաւիրուեցաւ

«Մուրճ»-ի խմբագրութիւնից իբրև մշտական աշխատակից և անդամ, որ պաշտօն և վարում է ցարդ։ Ապրելով Իգդիրում նա տեսնում էր հայ գաղթականութեան լէգէոնները, որոնք արագ արագ փախչում էին Տաճկաստանից Ռուսաստան, և Ա. Ա. իբրև ժողովրդի մարդ, շարունակ շփւում էր, հարցնում նրանց չարն ու բարին և ուսումնասիրում *խեղճերի* կեանքը, որոնք նիւթ դարձան նրա վէպերին։ Նա սկսեց գրել ուսուցչական ժամանակներից՝ աշխատակցելով «Տարազ»-ին, «Մշակ»-ին և տալով խեղճերի խեղճ դրութեան պատմութիւնը։ Այդ շրջանին է պատկանում նրա *Հոս կինը* (տպ. Տ. 1897)։ Առաջին պատկերը՝ *Պուտ ըմ կաշ*—վերցրած է թուրքահայ գաղթականների կեանքից («Մշակ» 1896)։ Այս պատկերին հետևեցին *Փըշուր ըմ խաց*, *Փաքազ-Գուրդունի*, *Բաշօն*, *Ռաշիդ*, *Բաղդի խաղեր*, *Հարեւաններ*, *Զնդանում*, *Աքաղաղը* և այլն, որոնք լոյս տեսան *Պատկերներ վերջին տարիների թիւրքահայոց կեանքից* ժողովածուի մէջ (Մ. 1900 թ.) Ա.Հ. գնալով արտասահման շարունակեց աշխատակցել «Մշակ»-ին, իսկ 1901-ից «Մուրճ»-ին։ Ա.Հարոնեանի գրուածքները լի են տանջուած սրտերի ախն ու վախով, գեղեցիկ նկարագրութիւններով և հետաքրքիր են։ Բացի վերև յիշուածներից ունի. ա) *Խեղճերը* Տ. 1902 (ժողովածու). բ) *Խաչիպում* Տ. 1904. գ) *Մրրկի*

սուրբը Տ. 1903. զ) *Կեանքի դասը* Տ. 1903. ե) *Մայրերը* Տ. 1903. զ) *Մխիթարեան միաբանութիւն* Տ. 1901. է) *Արազ* (*ժողովածու*) Տ. 1904. ը) *Լոութիւն վէպ* Տ. 1904։

ԱՂԱԲԷԳԵԱՆ ՄԱՐԿՈՍ*). —Նշ. հայ հրապարակախօս-խմբագիր. ծն. Զմիւռնիայում 1830 թ.։ Սկզբ. կրթ. ստացաւ տեղւոյն ս. Մեսրոպեան վարժարանում, իսկ 1843 թ. ուղարկուեցաւ Փարիզ՝ Մուրատեան վարժարան, ուր 1849-ին ուսումն աւարտելով վերադարձաւ Զմիւռնիա և ընկերանալով Մատթէոս Մամուրեանի հետ («Արևելեան Մամուլ»-ի հանգ. խմբագիրը) մի մասնաւոր ուսումն. բաց արեց, որը ժամանակին մրցում էր ս. Մեսրոպեան վարժարանի հետ։ Այս մրցումից ազատ պահելու համար՝ վարժարանի վարչութիւնն Աղաբէգեանին տեսչի

*) Այս կենսագրութեան համար դիմեցինք տիկ. Սրբուհի Երիցեանին, որի եղբայրն է պ. Աղաբէգեանը և ծննդեան ու ուման թուականները նրանից ստացանք։ Պ. Աղաբէգեանը մեր նամակին չը պատասխանեց։

պաշտօն տուեց։ Զմիւռնիայից նա Կ. Պոլիս անցաւ և հասարակական գործունէութեան ասպարէզ մտաւ և 1859-ին նորընտիր Մատթէոս կաթողիկոսի հետ քարտուղարի պաշտօնով Էջմիածին եկաւ։ Ներս. դպ. վարչութիւնից ուսուցչութեան հրաւէր ստանալով եկաւ Տփխիս, շփուեցաւ ժամանակակից հայ գործիչ երիտասարդութեան շրջանին և 1860 թ. սկսեց խմբագրել «Կռունկ Հայոց աշխարհի» ամսագիրը, որի հրատարակիչն էր Հ. Էֆէնդեանցը։ «Կռունկ»ը մեծ դեր է խաղացել մեր պարբերական մամուլի գործում. նրա աշխատակիցներն էին Գ. Մուրատեան, Յ. Կարինեանց, Գ. Ջերմազանեան, Ե. Բաստամեան, Առաքել Արարատեան, Մ. Մամուրեան, Մելիք-Ազարեան և այլք, որոնք բոլորն էլ յայտնի մարդիկ էին և դեռ այսօր էլ չի կորել նրանց անունը։ Ամուսնանալով Գոլդեանի աղջկայ հետ, չորս տարի հրատարակելուց յետոյ 1864 յունուարից այլ ևս չը հրատարակեց և 1865-ին գնաց Կ. Պոլիս։ Այնտեղ էլ համարեա «Կռունկ»-ի ծրագրով սկսեց 1866-ից հրատարակել «Ծիլն Ազարայրի» անունով ամսագիր, սակայն նիւթական անյաջողութեան պատճառով 1867-ին դադարեցրեց։ Այդ ժամանակներում, ինչպէս յայտնի է, տաճկահայերը զբաղուած էին 1862 թ. տեղի ունեցած Զէյթունի անցքերով, որի հատար կազմուեցաւ Քննիչ Յանձնաժողով և Մ. Ա. էլ ընտրուելով անդամ

1867-ին իբրև քննիչ Զէյթուն գնաց, որտեղից Պոլիս գնալով՝ Նուբար-Ջանդարեան վարժարանի դասատու անուանուեցաւ։ Այդ պաշտօնումն էլ երկար չը մնաց, որովհետև Վանի մեծ հրդեհի պատճառները ստուգելու համար քննիչ նշանակուեցաւ և միևնոյն ժամանակ ընդհանուր վերաքննիչի (պետական) պաշտօնը ստանձնելով գնաց Վան։ Հրդեհի մասին զեկուցումներ տալով, իր պաշտօնը շարունակեց, սակայն քիչ յետոյ գնաց Կ. Պոլիս և մինչև այժմ ապրում է այնտեղ։ Հայոց Միացեալ ընկերութիւնը, որ մի ժամանակ անագին գործ էր կատարում Ցանկաստանում, Մ. Ա-ին յանձնարարեց գրել *Հայոց պատմութիւն* աշխարհաբար և ընդարձակ, որ և կատարեց Ղարբէգեանը 14 տարի աշխատելով, բայց այդ կարևոր աշխատութիւնը մինչև այժմ մնում է անտիպ։ Ա. Մ. աշխատակցել է և աշխատակցում է «Լումայ»-ին, «Բիւզանդիոն»-ին և այլն։ Գր. վաստակներ. ա) *Հայկական թատր. Գարեգին Սրուանձտեանց* (4 մասն) Կ. Պ. 1867. բ) *Յայտարարութիւն կանոնաց ս. Մեսրոպ. վարժ.* Զմիւռնիա 1858. գ) *Թուղթ Հայոց աշխարհի, ազգի եւ եկեղեցու ազգայնութեան մասին առ պատրիարք Տ. Ներսէս արքեպ.* Կ. Պ. 1878։ Թարգմանել է ա) Գիզոյի *Քաղաքակրթութեան պատմութիւն* («Կռունկ»). բ) *Ծրագիր պատմութեան Հայաստան աշխարհին* Կ. վ. Ջանդարեանի (ֆրանսերէնից) Տ. 1863. և այլն։

ԱՂԱԲԷԿԵԱՆ ԱՒԵՏԻՍ ՂԱԶԱՐ. — Հնդկահայ նշ. վաճառական։ Սա մեծ գումարներ է կտակել յօգուտ ազգի և եկեղեցւոյ, նախ առևտուր էր անում Կալկաթայում, յետոյ Կանտոն և Հոնկ-Քոնկում 27 տարի շարունակ։ Ծն. Կալկաթայում 1827 յունուար 5-ին, մ. Հոնկ-Քոնկ 1877 յուն. 12-ին։

ԱՂԱԹՈՆ ԳՐԻԳՈՐ. — Ցանկահայ նշ. գործիչ, հարուստ կալուածատիրոջ որդի, ծն. Խասգիւղում 1823 յուլիս 4-ին և կրթ. ստացաւ նոյն թաղի Ներսիսեան վարժարանում։ Փոքր հասակից նրան որդեգրեց ձէզայիրլեան Մկրտիչ ամիրան։ Կ. Պոլսում Գր. Աղաթոնը կարողացաւ բացի հայ և թուրք լեզուներից նաև եւրոպական լեզուներ սովորել և 1840-ին Մկրտիչ ամիրան նրան Փարիզ ուղարկեց ուսանելու։ Այնտեղ նա մտաւ Կրինեօնի երկրագործական վարժարան, ուր մեծ ընդունակութիւններ ցոյց տալով, տեղւոյն Օսմանեան դեսպան Բէշիդ փաշայից շատ սիրուեցաւ։ Ուսումն աւարտելով 1847-ի վերջերը Կ. Պոլիս գնաց, որտեղից 1848-ին ուղարկուե-

ցաւ Այ-Մամայի նորաբաց երկրագործական վարժարանի տեսուչ և ուսուցիչ, սակայն այդտեղ երկար չը մնաց և 1849 թ. ձէզայիրլեան ամիրայի անձնական գործերի կառավարչի պաշտօնը ստանձնեց։ 1852-ին նոյն ամիրան սնանկանալով, Գր. Ա. անպաշտօն մնաց և գրական ասպարէզ մտաւ իր մասնաճիւղի վերաբերեալ յօդուածներ տալով Journal de Constantinople լրագրին, որոնց համար 1853-ին ֆրանսիական կայսեր. պարտիզպանութեան ընկերութիւնը նրան թղթակից անդամ ընտրեց։ Հետգհետէ ծանօթանալով թուրք նշանաւոր պաշտօնեաների հետ, 1856-ին Վաճառականական Բարձրագոյն խորհրդի անդամ ընտրուեցաւ։ 1858-ին Սարդինիոյ Թիւրինի ցուցահանդիսին ուղարկուելով Տաճկաստանի կողմից իբրև ներկայացուցիչ, տնտեսագիտական բաժնի համար մի քանի շքանշաններով վարձատրուեցաւ։ Այնտեղից նա Փարիզով Կ. Պոլիս գնաց, ուր 1860-ին շքանշանով վարձատրուած Ելեմտից նախարարութեան Բարձրագոյն դիւանի անդամ ընտրուեցաւ, որի մէջ կարևոր դեր խաղաց նա և 1862-ին Տաբ իւլ Փինուն թղթադրամների բարձման հաշուակալութեան սենեկի տնօրէն կարգուեցաւ։ 1864-ին Օսման. Հեռագրական վարչութեան տնօրէն կարգուելով, յաջորդ տարին Փարիզ ուղարկուեցաւ այնտեղի Հեռագրական համաժողովին մասնակցելու։ Այնտեղից վերադառնալով ի-

բեն յանձնուած գործի ծաղկման համար աշխատեց և 1866-ին Օսման. թղթատարութեան ընդհանուր տնօրէնի պաշտօնն էլ իրեն յանձնուեցաւ և նոյն տարին Հեռագրական միջազգային համաժողովին, Օսմանեան պետութիւնից պատուիրակ կարգուեցաւ և մի քանի պետութիւններից ինչպէս նաև Ռուսիայի կողմից շքանշաններ ստացաւ։ 1867-ին կրկին Փարիզ գնալով թղթատարական միջազգային համաժողովին մասնակցելու հաւար, Օսմ. պետութիւնից հրաման ստացաւ աշխատել Տաճկաստանում եղած օտար թղթատարական տները վերջացնելու հարցը վճռել, որ և յաջողեցաւ, միայն մի քանի դրժուարութիւնների համար չը կարողացաւ Կ. Պոլիս վերադառնալ և միևնոյն ժամանակ հիւանդանալով 1868 թ. մայիսի 27/4-ին մեռաւ։ Մարմինը Փարիզից Կ. Պոլիս տարուելով մեծ հանդէսներով թաղուեցաւ։ Դր. Ղաֆթոնը իբրև ազգային գործիչ, մեծ դեր խաղաց հայ կեանքումը՝ լինելով հսկող Նուպար-Ջանեանի վարժարանի և 1869-ին մի քանի ընկերներով հիմնեց «Բարեգործական Համազգային բարենպատակ ընկերութիւն Հայոց» և այլն։

ՂԱՖԹՈՆ ՄԿՐՏԻՉ. — Տաճկահայ նշ. գործիչ, լեզուաբան, խմբագիր, Պատրիարքարանի գործօն ժողովական, ծն. 1820-ին (*)։ Լինելով շքաւոր ծնողների որդի, հազիւ կարողացաւ

փոքր ինչ կրթութիւն ձեռք բերել այն էլ ինքնակրթութեամբ։ Ժամանակի ընթացքում կարողացաւ գրական դիրք ձեռք բերել և 1846-ին ընկերանալով ժամանակի նշ. հայկաբան Յովհաննէս Տերոյենց Զամուռճեանի հետ՝ սկսեց հրատարակել «Սուրհանդակ Կոստանդնուպօլսոյ» անունով շաբաթաթերթ, որը հայոց պատրիարքարանի կիսապաշտօնական օրգանի դեռ էր խաղում։ Նոյն տարուայ յուլիս 1-ից անունը փոխեցին և սկսեցին «Հայաստան» անունով հրատարակել։ 1849-ին Զամուռճեանը հեռացաւ և Մ. Աղաթոնը մենակ մնաց իբրև լիազօր խմբագիր, սակայն տարուայ վերջը ստիպուած եղաւ թողնելու այդ ասպարէզը։ Այդ ժամանակներից համարեա սկսուեցաւ Սահմանադրութիւն հաստատելու հարցն և Մ. Ա. այս գործումն էլ սկսեց մեծ դեր խաղալ, որով Սահմանադրութիւն հաստատող յանձնի մէջ յաւերժացրեց իր անունը։ Մ. 1890 նոյեմբեր 23-ին Միտիլլիում։

ԱՂԱՄԱԼԵԱՆ ՄԱՐԻԱՄ.—Դուստր երևանցի հայազգի մելիք Սահակի, ամուսնացած էր վրաց թագաւորազն Աղէքսանդրի հետ, մ. 1882 հոկտ. 7-ին և թաղուեցաւ Վանքի Մայր եկեղեցու մէջ։

ԱՂԱՄԱԼԵԱՆ Հ. ՍՈՒՔԻԱՍ Վ.—Մր. Վտ. Մխ. ծն. Գողթնի Զորոթ աւանում 1738 դեկտ. 11-ին։ Նրա ծնողները Առաքելական հայեր էին և պար-

սից լծից ազատուելու համար Փիլիպպոպոլ գաղթեցին, որտեղից 1755-ին Սուրիասին Վենետիկ գրկեցին, ուր կրթուելով՝ 1761 թ. վարդ. ձեռնադրուեցաւ և քարոզչի պաշտօնով Արևելք ուղարկուեցաւ։ Հ. Աղամալեանն այցելեց Հընդկաստանի Կալկաթա և Մադրաս քաղաքները, ուր նրան սիրով ընդունեցին իբրև ճշմարիտ հայ հոգևորականի *)։ Բաւական դումար ժողովելով հ. Սուրիասը Վենետիկ դարձաւ, որտեղից նոյն պաշտօնով գնաց Կ. Պոլիս։ Վերադառնալով կրկին Վենետիկ նա նորից Հնդկաստան անցաւ և այս անգամ ծանօթացաւ հայ հարուստ Եղուարդ Ռաֆայէլ Ղահրամանի հետ, որին խորհուրդ տուեց իր կարողութիւնից ազգին մաս տալու։ Աղամալեանը վիճ. Մադրասում 1789-ի մարտ 18-ին և հայ քահանայի ձեռքով ու հայկական ծէսով թաղուեցաւ։ Թողել է տպուած և անտիպ գրուածքներ—*Թուաբանութիւն* Վ.տ. 1781։

*) Պէտք է նկատել, որ Մխիթարի ժամանակակից հոգևորականները, որոնք Վենետիկից գնում էին արևելք, իսկական հայ հոգևորականի տպաւորութիւն էին թողնում իրենց վեղարով և տարազով և որ գլխաւորն է (գոնէ մեզ հասած աղբիւրներն այդ են ասում) նրանց մէջ չկար այն նեղ հասկացողութիւնը՝ նեղսիրտ պապականութիւնը, այլ նրանք մի տեսակ առերես կաթոլիկներ էին։ Եթէ այդպէս չը լինէր՝ Էջմիածնի անունով ապրող հնդկահայերը դուրս կը վռնտէին նրանց և Ռաֆայէլն ու Սամուէլ Մուրատը դումարներ չէին շպռտիլ։

ՂԱԶԱՐՈՍ.—Մանկավարժ-վիպասան-բանաստեղծ, ծն. Բոլնիսի Խաչէն գիւղում 1840-ին *), Սկզ. կրթ. ստացաւ Ջամշուլտէի քահանայի մօտ, ուր մի փոքրիկ աղջկայ հետ սիրահարուելով հօր կողմից հալածանքի ենթարկուեցաւ։ Մայրը նրան՝ հօրից հեռու պահելու համար Տփխիս տարաւ, ուր Ղ. Ա-ին 1853-ին յաջողուեցաւ ներս. դպ. մտնել, սակայն հօր կամակորութիւնը նրան ստիպեց թողնել դպրոցը և նա դեռ չաւարտած հեռացաւ դպրոցից։ Եօթը տարի այս ու այն կողմը թափառելուց յետոյ մտաւ Հ. Էֆէնդեանի տպարան, որտեղ գրաշարութիւն սովորեց։ Մի քանի անգամ Հ. Էֆէնդ. նկատելով, որ Ղ. Ա. բանաստեղծութիւններ է գրում, քաջալերում է նրան։ Նա երկար չը մնաց տպարանում և ուսանելու նպատակով ճանապարհուեցաւ Մոսկուա։ Նա



*) Ղ. Ադայեանն ասում է, որ եկեղեցական մատեաններում գրուած չի եղել նրա ծնունդն, ուստի և իր մօրից հարցրել իմացել է, որ ծնուել է Ակռու աւերման տարին—1840-ին։

այնպիսի սուղ նիւթականով դուրս եկաւ Տփխիսից, որ հազիւ կարողացաւ Թէոդոսիա հասնել 1862-ին և որպէսզի կարողանար գլուխ բերել իր ցանկութիւնը մտաւ հայոց Խալիպեան ուսումնարանի տպարան։ Հազար տեսակ զբաղմունքներ կրելով հաւաքեց ճանապարհածախս և գնաց Մոսկուա, ուր նա դիմեց ժամանակակից հայ գրագէտներին յայտնելով իր ցանկութիւնը, սակայն այնպիսի կծու պատասխաններ ստացաւ, որ միանգամ ընդ միշտ վճռեց գրաշարութիւն անել, կոպէկներ ետ դնել և այդպիսով 'ի կատար ածել իր ցանկութիւնը։ Մոսկուայից նա Պետերբուրգ գնաց, ուր նոյնպէս գրաշարութեամբ զբաղուեցաւ, իսկ ազատ ժամերին սկսեց համալսարան յաճախել։ Այնտեղ նա շփուեցաւ ուսանողական շրջանի հետ և նուիրուեցաւ գրականութեան։ Ուսանողները տեսնելով Աղայեանի բարեմասն կողմերն ու բնատուր ձիրքը, սկսեցին օգնել և խորհուրդ տուին լոյս ընծայել *Արութիւն եւ Մանուէլ* վէպը, որ կարդացել էր նրանց մօտ։ Վերադառնալով Կովկաս, 1867-ին էջմիածին հրաւիրուեցաւ տպարանի կառավարչի պաշտօնով, ուր մի առ ժամանակ վարեց նաև «Արարատ»-ի խմբագրի պաշտօնը։ 1870-ին գնաց Ախալցխա ուսուցիչ, այնտեղից Ալէքսանդրոպոլ, ուր 5 տարի մնաց, ապա $1^1/_2$ տարի մնալով Տփխիսում 1878-ին հրաւիրուեցաւ Երևանի թեմ. դպ.. այնտեղից Ղա-

բաբազի (Ջուշու) թեմ. դպ. և այնուհետև կրկին Տփխիս, ուր նշանակուեցաւ հայոց դպրոցների թեմ. վերատեսուչ, որ պաշտօնը վարեց նա մինչև 1889 թ.։ Այնուհետև մի առ ժամանակ էջմիածնում պաշտօնավարելով կրկին Տփխիս անցաւ, որտեղից հայոց ուսումնարանների փակումից յետոյ գնաց հարաւային Ռուսաստան՝ հայաբնակներում ուսուցչութիւն անելու։ Վերջին տարիներ ապրում է Տփխիսում առանց պաշտօնի։ 1902 մայիս 19-ին Տփխիսում տօնուեցաւ նրա գրական գործունէութեան քառասնամեակը։—Ա. Ղ. յայտնի է իբրև հմուտ մանկավարժ—ուսուցիչ, նրա գրուածքները բազմակողմանի են՝ բանաստեղծական, վիպական, ուսումնասիրական, մատենախօսական, մանկավարժական և մանկական։ Նա մեր մանկական գրականութեան առաջին գարկ տուողներից է։ Աշխատակցել է «Ազբիւր», «Արարատ», «Հանդէս գրակ. և պատմ.», «Մշակ», «Մուրճ», «Տարազ», «Փորձ» և այլ հանդէսներին, կազմել է մի շարք ընտիր դասագրքեր և մեթոդիկաներ, որոնք ընդունուած էին հայոց դպրոցներում և դեռ այսօր էլ գործ են ածւում պետական ուսումնարաններում։ Գր. վատ.—ա) *Ուսումն մայրենի լեզուի* ա. բ. գ. տարի (տասնեակ տպագրութիւններ), բ) *Հայկական հնչիւնների մասին, քննութիւն Կ. Պոլսի բարբառի*, Տ. 1874. գ) *Անահիտ* հին գրոյց Տ. 1881 և 91. դ) *Արու-*

թիւն եւ Մանուէլ վէպ Տ. 1888—89—93 (երեք մասն) և 1900. ե) *Բանաստեղծութիւններ* Տ. 1890. զ) *Երկու քոյր* 1872 և 92. է) *Իմ կեանքի գլխաւոր դէպքերը* Տ. 1894. ը) *Արեգնազան* զրոյց Տ. 1888. թ) *Տոքր Անգեղ եւ Հայկանուշ գեղեցիկ.* զրոյց Տ. 1888. ժ) *Սրինգ հովուական* Տ. 1882. ժա) *Մի երես մեր նորագոյն պատմութիւնից* Տ. 1891. ժբ) *Մեր ուսուցիչներին ընկերական նուէր* Տ. 1892. ժգ) *Ժամանակակից առնախօսութիւն* Տ. 1898. ժդ) *Արքայադուստր Վարդենի* Մ. 1879. ժե) *Պատկերաւոր այբբենարան* Տ. 1903 (երկու անգամ տպուած)։ Թարգմ. ա) *Խոհակ Ջէմ.* բ) *Ոսկէ ձկնիկ* Տ. 1884 են։

ԱՂԱՅԵԱՆ ՄԱՏԹԷՈՍ.—Դերասան. ծն. Հին Նախիջևանի Կարճևան գիւղում 1863 նոյեմբեր 16-ին։ Սկզ. կրթ. ստացաւ գիւղի քահանայի ու ուսուցչի մօտ, յետոյ Տփխիսում մասնաւոր ուսումնարանում։ Պատանի հասակից սկսեց իբրև սիրող խաղալ, իսկ 1879-ից սկսեց խաղալ իշխ. Ամատունու խմբի մէջ իբրև դերասան, որ և շարունակում է ցարդ։ 1898-ին Մ. Ա. գնաց Մոսկուա և յետոյ էլ Պետերբուրգ ռուս ներկայացումներին հետևելու համար։ 1901-ին դարձեալ նոյն նպատակով գնաց Մոսկուա։ 1904 յունուարին ստանձնեաց նրա բեմական գործունէութեան 25 ամեակը։ Խաղում է սիրահարի դերեր։ Աղայեանը յաւ ծանօթ է Կովկասի գա-

տառացիներին և եղել է նաև Ռուսաստանի հայաբաղաքներում ու Պարսկաստանում։ Խաղում է գլխաւոր խմբի մէջ։ Մէկ-մէկ բանաստեղծութիւններ էլ է գրել, որոնք տպուել են «Տարազ»-ում։

ՂԱՆԵԱՆ ԳԻՒՏ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՑ.—Թարգմանիչ, խմբագիր, հնահաւաք-հրատարակիչ. ծն. Տրփխիսում 1856 մարտ 1-ին։ Սկզ. կրթ. ստացաւ Տիրուհի Մամիկոնեանի անդրանիկ — մասնաւոր օրիորդաց ուսումնարանում *) 1863-ին, ուր աշակերտեց Գարեգին Մուրադեանցին (հանգ. Մելքիսեդեկ եպիսկոպոս), իսկ 1865-ին մտաւ Ներս. դպ., ուր 1873-ին ուսումն աւարտելով սկսեց ուսուցչութեամբ զբաղուել։ Դեռ սկզբներում երբ նա դպիր Յարութիւն Առաքելեանց էր կոչւում, Հալաբարի ս. Մինաս եկեղեցու մօտ մի ուսումնարան բաց արաւ, որտեղ անձամբ դաս էր տալիս։ 1876-ին Ներս դպրոցում ուսուցչի պաշտօն ստացաւ (ընդհատել է 1891—



*) Ուսումնարանն օրիորդաց էր համարւում, սակայն ընդունում էին երկու սեռի երեխաներին։

1901 և կրկին Ծառայել), իսկ 1885-ից մինչև այժմ Տեխնիքական ուսումնարանի կրօնուսոյց է։ 1879-ին սարկաւագ ձեռնադրուեցաւ և ազգը ո խեց Ադանեանի, իսկ 1880 յուլիս 7-ին քահանայ ձեռնադրուելով՝ անուանուեցաւ Տէր Գիւտ։ Նրա գրական գործունէութիւնը սկսւում է 1875 թ., երբ սկսեց աշխատակցել «Մեղու Հայաստան»-ի հայաթերթին և միևնոյն ժամանակ սկիզբ դրեց մանկական գրքերի թարգմանութեանց, որոնք 1877 թ. սկսան մէկը միւսի ետևից լոյս տեսնել։ Տ. Գիւտը շատ վաղ զգաց մանկական գրքերի կարիքը և այդ գրքերին են պարտական մեր նախկին ուսումնարանների սանները, ժողովուրդը, որ ձեռքին ունէին դիւրամարս և հետաքրքիր գրքեր։ 1889 թ. սկսեց հրատարակել հայերէն պատի հատուածական օրացոյց, որ շարունակուեցաւ մինչև 1903 թ. և սրանով սկիզբ դրեց ռուսահայոց մէջ պատի օրացոյցների հրատարակման, որից օրինակ վերցրին Ա. Գուլամիրեանը, Մ. Զմշկեանը. Կ. Ափինեանը և վերջերս Ե. Թոփչեանը։ 1896-ին հայրապետական յանձնարարութիւններով գնաց Կ. Պոլիս՝ պատրիարք Մատթէոս արքեպ. Իզմիրլեանի մօտ, ուր օգտուեցաւ ինչպէս պատրիարքական դիւանի գործերից, այնպէս էլ Յովհաննէս ա՝ ք. Մկրեանի հարուստ գրադարանից և վերջին դարու հայ պատմութեան համար նիւթեր ժողովեց։ Այնտեղից անցաւ Գերմանիա և

Էջմիածնի տպարանի համար ձուլարան ու տպագրական մեքենաներ գնեց։ 1896 թ. սկսեց հրատարակել «Լուսաւոր» վեցամսեայ հանդէս, իսկ 1902 յունուարից սկսեց տարէն վեց դիրք հրատարակել, որ իր ճոխ և բազմակողմանի բովանդակութեամբ ռուսահայոց մէջ առաջինն է *)։ Տ. Գիւտն ի մի ժողովելով ԺԸ. և ԺԹ. դարերի հայոց եկեղեցու պատմութեան վերաբերեալ ձեռագիր յիշատակարանները և պատմական նիւթերը, 1893 թ. սկսեց մեծագիր հատորներով լոյս ընծայել «Գիւտն Հայոց պատմութեան» վերնագրի տակ։ Այս գործը այն է մեզ համար, ինչ որ Կովկասեան Հնագիտական ընկերութեան հրատարակած „Акты“ գործերը (գիւաններից երկուսն արժանացել են Սահակ-Մեսրոպեան մրցանակին)։ Տ. Գիւտն առաջինն է, որ կազմեց Տօմարագիտութեան և Աստուածպաշտութեան աշխարհաբար ձեռնարկները (հաշուի չենք առնում Ս. ա. ք. Մանդինեանի և Մխիթարեանց գրաբար ձեռնարկները)։ 1900 թ. ընտրուեցաւ

*) Աշխատակցել են և աշխատակցում են Կ. Եղեան, Պռոշեան, Շիրվանզադէ, Մուրացան, Վ. Փափազեան, Ի. Յարութիւնեանց, Գ. Ենգիբարեան, Մ. Բերբերեան, Քաջբերունի, Յարոյ, Ն. Քարամեան, Ե. Շահազիզ, Մուշէ վ., Տ. Վ. և ուրիշ ժամանակակից աչքի ընկնող գրողները։ «Լուսաւոր» այն դեր է խաղում այժմ և դեռ աւելի, ինչ որ արել են «Կռունկ» և «Փորձ» ամսագիրները։

ներս. գպ. առաջին քահանայ—հոգաբարձու։ 1901 թ. հոկտ. 28-ին կատարուեցաւ նրա գրական-մանկավարժական գործունէութեան 25 ամեակը Տփխիսում։ Վեհ. կաթողիկոսից բազմիցս վարձատրուած է կոնդակներով և ի թիւս այլ պարգևների վարդապետական լանջախաչով։ Աշխատակցել է «Մեղու», «Արձագանք», «Նոր-Դար» և այլ պարբերականներին։ Գր. վաստ.—ա) *Աղօթատետր*, բ) *Կրօնի դասագիրք* ա. բ. գ. տարի (այս գրքերը մի քանի անգամ են տպագրուել). գ) *Տօնար եւ տօնացոյց Հայաստ. եկեղեցւոյ* Վաղ. 1890 և Տ. 1894. դ) *Կարնոյ գաղթը* 1891 *). ե) *Դիւան Հայոց պատմութեան* ա—բ գիրք 1893. զ. *Սիմէօն կաթողիկոս* 1894, դ. *Ղուկաս կաթողիկոս* 1899. ե. *Դանիէլ կաթողիկոս* 1902. զ. *Դաւիթ կաթողիկոս* 1904 (դեռ 9 հատոր պատրաստ է տպագրութեան համար). զ) *Կարգ Աստուածպաշտութեան* (4 տպագրութիւն է ունեցել ա. 1894, բ. 1895, գ. 1899, վերջինը 1902-ին). է) *Հնից-Նորից հնախօս. ուղեւորութիւն* պրակ ա. 1900. բ) *Նամակագիրք* 1902. թ) *Պատի եւ ծոցի օրացոյցներ* 1889—1903 յունուար 1-ը։ Թարգմանութիւններ.—ա) *Հաւատարմութիւնը ամեն արգելքների յաղթում է* 1877. բ) *Խաւարից դէպի լոյս* 1878. գ) *Դոն Քիշոտ լամանշեցի*

---

*) *Այստեղից սկսած բոլոր գրքերը տպուած են Տփխիսում։*

1878. դ) *Գէորգ Ռօլէատօն* 1879. ե) *Երրորդ ոսկի* 1879 և 93. զ) *Ռօբինզօն* 1881. է) *Զէատէրտօնի ժառանգը* 1882. ը) *Ակտէա* 1885. թ) *Եան Էրնստ Սմօլեար* 1885. ժ) *Արծուի մտածումները* 1892. ժա) *Գիւղի սուրբը* 1892. ժբ) *Կեանքի դպրոցը* 1892. ժգ) *Դէպի Ամէնք* 1896 և 1901. ժդ) *Մի կտոր հաց* 1896 և 1901. ժե) *Որսորդ*, ժզ) *Մատուռի աւերակներում*, ժէ) *Կարա*, ժը) *Անտառապետ Փրեդերիկ* 1903. ժթ) *Տնային բժշկարան* պրակ ա. (Իս. Յար. հետ) 1903. պրակ բ. (նոյնպէս) 1903 *)։ Վերջերս հրատարակեց ս. Գրիգոր Լուսաւորչի իւղատիպ մեծադիր պատկեր, տպ. Լայպցիգ 14 գոյնով։

ԱՂԱՆՈՒՐ ՎԻՔՏՈՐԻԱ.—Հայազգի իտալերէն լեզուով գրող բանաստեղծուհի, ապրում է Իտալիայում, գրել է մի քանի հատոր բանաստեղ-

---

*) *Բացի վերև յիշուածները հրատարակել է 50 կտոր այլ և այլ հայ հեղինակների ինչպէս Ի. Յարութիւնեանի, Յ. Պարոնեանի, Գ. եպ. Սրուանձտեանի, Մ. արքեպ. Մուրադեանի, Հայրիկի, Ե. Շահազիզի, Յ. Թումանեանի և այլոց ինքնուրոյն գործերը, և թարգմանութիւններ—Ռանդաբէի, Ա. Այնօի, Սպիրիի, Պեստալոցիի, Կարալէնկոյի, Մ. Գօրկիի, և այլ ընտիր հեղինակների գործոց թարգմանութիւնները։ Այս բոլորը մի հրատարակչական ընկերութեան համար էլ դժուար կը լինի, սակայն Տ. Գիւտի գործունէութիւնը դեռ էլի ոչինչ է հայ յոռետես թէրսիդէանների համար։*

ծութիւններ, որոնցից մի քանիսը թարգմանուած են «Բազմավէպ» և «Գեղունի» հանդէսներում—օր. *Լոութիւն*, *Զմռսած Կոլիքրիի մը* և այլն։

ԱՂԱՓԻՐԵԱՆ ԳՐԻԳՈՐ ԵՊ.—Ուսուցիչ-թարգմանիչ. ծն. Աստրախանում 1827 յունիսի 26-ին։ Կրթ. ստացաւ Մոսկուայի Լազ. ճեմ. և յետոյ Ագաֆոն Ակիմեանի հաշուով *) գնաց Դորպատ և 1849 սեպտեմբերին մտաւ համալսարան աստուածաբանութիւն ուսանելու նպատակով, թէպէտ գրուել էր Կամերալիայի (ժողովրդի տընտեսութեան վերաբերեալ գիտութիւնները)։ Մի քանի տարի մնալով Դորպատ անցաւ Ն. Նախիջևան, ուր ուրար ստանալով գնաց Մոսկուա և 1857-ին Լազ. ճեմարանում ուսուցչի պաշտօն ստացաւ։ 1858-ին գնալով Էջմիածին՝ արեղայ ձեռնադրուեցաւ և ուղարկուեցաւ Ն. Նախիջևանի ս. Խաչ վանքի վանահայր։ Գաբրիէլ վ. Այվազովսկին, որ նոյն թեմի փոխանորդ էր՝ չընդունեց նրան և Աղափիրեանը պետական հրամանի համաձայն գնաց Էջմիածին։ 1872 մարտ 26-ին Գէորգ Դ. կաթողիկոսը նրան եպ. ձեռնադրեց։ Ուսուցչութիւն անելով Թէոդոսիոյ Խալիպեան ուսումնարանում և Գէորգ. ճեմարա-

---

*) Բժ. Լ. Տիգրանեանն ասում է—Պետերբուրգի հայոց եկեղեցու հաշուով «Լուսաւոր» 1903 № 5։

նում, 1879-ին Հին Ղրիմի ս. Խաչ վանքի վանահայր էր արդէն և յետոյ էլ երկար ժամանակ Ստրախանի թեմի առաջնորդ եղաւ։ Մակար կաթ. Ծերունեան պատճառով նրան հանգստութիւն շնորհեց նշանակելով Ագուլիսի ս. Թովմայ առաք. վանքի վանահայր, ուր և վախճ. 1 97-ին։ Աշխատակցել է «Արարատ»-ին տալով *Կրօնական բարոյական խորհրդածութիւններ* վերնագրով քարոզների մի ամբողջ հաւաքածու, որոնք լոյս տեսան առանձին գրքերով (Վաղ. 1887 և 1897)։ Այդ քարոզները թարգմանել է գերմաներէնից, տպուել է «Արարատ»-ում։ Նրա թարգմ. նաև *Մերթ խօսակցիս, մերթ լուռ կու զաս* ոտանաւորը (Քնար Հայկական)։

ԱՂԷՔՍԱՆԴՐԵԱՆ ՅՈՎՍԷՓ.—Հայ մաթեմատիկ, աւարտել է Լազ. ճեմ. և Մոսկուայի համալսարանում մաթեմատիկական գիտութիւնները։ Մ. 1832-ին։ Ռուսահայոց մէջ առաջին անգամ սա կազմեց թուաբանութեան դասագիրք, տպ. Մոսկուա 182՞ թ.։

ԱՂԷՔՍԱՆԴՐ Ա. ՋՈՒՂԱՅԵՑԻ. — Ամենայն հայոց կաթողիկոս, յաջորդեց Նահապետին 1706 թ. դեկտեմբերին։ Հմուտ լինելով վանական կարգերին՝ կաթողիկոսանալու օրից նորոգութիւնների ձեռնամուխ եղաւ, շինեց ձմեռան սեղանատուն, վանքը հարստացրեց կահ-կարա-

սիով, անօթներով, սպասներով և ձեռք բերեց կալուածներ։ Այս բոլորի հետ նա գրագիտութեան սիրող լինելով՝ դպրոցներ բացաւ և իր մայրենի եկեղեցու ջերմ ջատագով հանդիսացաւ *) Վախճ. 1714 նոյեմբեր 22-ին և թաղ. Մայր Տաճարի արևմտեան դրան աջ կողմը՝ զանգակատան տակ։

ԱՂԷՔՍԱՆԴՐ Բ. Կ. ՊՕԼՍԵՑԻ՝ ՂԱՐԱՂԱՉ.— Ամ. հայ. կաթ., ընտր. Մինաս Ակնեցուց յետոյ 1753 թ. և 1754 մարտի 6-ին օծուեցաւ։ Սա Էջմիածնի բազմամեայ և բազմաշխատ միաբաններից մէկն էր, 1½ տարի կաթողիկոսութիւն անելուց յետոյ վախճանուեցաւ 1754 նոյեմբեր

---

*) Աղէք. Ա. կաթողիկոսի մասին, որ Հռոմի պապերին բողոք ուղարկեց կաթոլիկ վարդապետների անկարգութիւնների համար, Զամչեանն ասում է. «յղեաց գիր սիրոյ և յարգութեան առ սրբազան պապն Կղեմէս մեռանելոցդ ի դիմաց իւրոց և ի դիմաց համօրէն վարդապետաց և բովանդակ հօտին իւրոյ, յորում ընդունելով զՀռովմայ հայրապետն լինել փոխանորդ Քրիստոսի և յաջորդ Պետրոսի վիմի՝ անուանէ զնա երիցս երջանիկ սիեզերական հայրապետ և պետական գլուխ և այլն», մինչդեռ 1873 «Փարոս»-ում տպուած է Աղէքսանդր կաթողիկոսի այդ նամակը, որը հակառակն է ասում։ Այս սխալանքից զերծ չեն մնացել և հարք Մ. վ. Բժշկեան, Ի. վ. Փափազեան և ընկ.։ Ծիծաղելի է և ցաւալի։ (Տես Զամչեան հատ. Գ. էջ 749—750, և «Փարոս» 1873 Մոսկուա էջ 3—28)։

11-ին և թաղ. Մայր Տաճարի արևմտեան դրան հարաւային կողմը՝ զանգակատան տակ։

ԱՂՈՒԱՆԵԱՆ ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊ.—Տաճկահայ ազգու քարոզիչ, ծն. Վանում 1827 թ., (ըստ Կ. Պոլսի ս. Փրկչեան Օրացոյցի 1832), ուր և ժամանակի խալֆաների մօտ եկեղեցական գրքերը բերանացի անելով սկսեց եկեղեցում դպրութիւն անել։ 1862 թ. արեղայ ձեռն. իսկ 1879 ապրիլ 13-ին եպ.։ Ինչպէս տաճկահայքում, այնպէս էլ ռուսահայքում վարել է պաշտօններ և ամեն տեղ էլ թողել փառաւոր գործունէութեան հետքեր։ Վախ. 1893 դեկտ. 8-ին Հին-Ջուղայում։



ԱՃԱՌԵԱՆ ՀՐԱՉԵԱՑ.—Լեզուաբան. ծն. Կ. Պոլսի Սամաթիա թաղում 1876 մարտ 8-ին։ Սկզ. կրթ. ստացաւ թաղային վարժարաններում և 1889-ին մտաւ Կ. Պ. Ազգային Կեդրոնական վարժ., ուր 1893 թ. աւարտեց։ 1893/94 թ. Կեդր. վարժարանի նախակրթարանի և Գատը գիւղի Արամեան վարժարանի հայ և տաճիկ լեզուների դասատու

եղաւ, իսկ 1894/95 թ. Գարնոյ Սանսարեան ուսումնարանի ուսուցիչ, 1895 թ. հոկտ. գնաց Փարիզ և աշակերտեց պրոֆ. Ռ. Մէյէին, 1897 փետր. 13-ին Փարիզի լեզուաբանական ժողովի անդամ ընտր. և մասնակցեց Արևելագէտների ԺԸ. համաժողովին, 1898 թ. աւարտելով École des Hautes Etudes-ի (Բարձրագոյն ուսման վարժ.) պատմ.-բանասիրական բաժինը՝ գնաց Սարատովի, ուր մի աս. ժամանակ հետևեց հայագէտ Հիւբշմանի դասախօսութիւններին և նոյն տարուայ յուլիսին գնաց Էջմիածին, ուր սկսեց պարապել մասնաւորապէս և միևնոյն ժամանակ ստանձնեց Դէորգ. ճեմ. տանքերէն և պարսկերէն լեզուների դասախօսութիւնը։ Այնուհետև նա անցաւ Զուշտ թեմ. դպ. հայոց լեզուի և մասնաւորութեան ուսուցչի պաշտօնով։ Ճանապարհի ա. բանասիրականը տպուած է «Հանդէս Ամսօրեայ»-ի 1895 օգոստոսի համարում։ Աշխատակից է և աշխատակցում է «Հանդէս Ամսօրեայ», «Բազմավէպ», «Արարատ», «Բիւրակն», «Բանասէր», «Հանդէս հայագիտութեան», Memoires de la societe linguistique, Revue internationale de Rhinologie, Otologie, Zaringologie et phonétique expérimentale, Sprachwissenschaftliche Abhandlungen հանդէսներին տպով միմիայն լեզուաբանական յօդուածներ։ Դր. վասա. — ա) *Քնարիթիւն Ուրբաթլէգի բարբառին* Վա. 1898, բ) *Քնարիթիւն Հաբաբաղի բարբառին* Վաղ. 1900, գ) *Հայկակ*

Հայերէն ժեռագրաց Մանուսարեան վարժ. ի Կոստանդնուպոլիս (գերմ. թարգմ.) Վն. 1900. գ) *Թուրքերէնի ազդեցութիւնը Հայերէնի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը Պարսից Հայոց բարբառին մէջ.* Մ. 1902. ե) *Հայոց նոր վիճակները* (Մանանդեանի հետ) Վաղ. հատոր Ա. 1902, հատոր Բ. 1903. զ) *Հաւաքածոյ Պարսկայ անգիր գրականութեան* (իր բրոջ՝ Ալմենուհու հետ). է) *Սաղուզարանական բառարան հայ լեզուի արխաիզմներու և այլն.* Փրանսերէն. ա) Les explosives de langoien arménien étudiées dans les dialectes modernes Փ. 1899. բ) Etude sur la langue Laze Փ. 1899. *են.*



ԱՆԷՄԵՆ ՄԿՐՏԻՉ.— *Ճանկահայ բանասաեղծ. ծն. Կ. Պոլսի Օրթագիւղ թաղամասի* 1838 *յուլիս* 19-*ին.* 1848 *թ. սկսած ուսաւ թաղային ս. Թարգմանչաց վարժ., իսկ յետոյ Մայր եկեղեցու և Բերայի Նարեկեան վարժար, որտեղից* 1852 *թ. գնաց Վենետիկ և մտաւ Մխիթարեան վարժ. ի Դ. դասարան.* 1858-*ին վերադառնալով Կ. Պ. յաջորդ* 1859-*ին Գալատիայի Հեռագրական վարչութեան մէջ պաշտօն ստացաւ. Այդ պաշտօնը վարեց նա նաև*

Վալոնա, Զգոդրա և Վարնա քաղաքներում։ 1866-ին Գ. Ղաթոնը Հեռագրական վարչութեան գլխ. կառավարչի պաշտօնը ստանալով Ամէմեանին կրկին Կ. Պ. հրաւիրեց և աւելի բարձր պաշտօն տուեց, որի մէջ նա հետզհետէ առաջ գնաց և այժմ Հեռագրական և Թղթատարական նախարարութեան մէջ ճարտարագէտների դիւանի տնօրէնի պաշտօնն ունի։ Նրա գրական գործունէութիւնը սկսւում է 1875 թուականից, երբ նա հրատարակեց իր բանաստեղծական երկերը. ա) *Վահագն* դիւցազներգ. (գրաբ.) բ) *Ժպիտք եւ Արտասուք*. գ) *Լոյս եւ Ստուերք*. դ) *Գարնան հովեր*։ Ունի նաև անտիպ երկեր։ Թարգմանել է Ջէքսպիրի *Աւազակներ*-ը և ուրիշ թատերգութիւններ Արևելեան թատրոնի համար։ Սկզբում գրում էր գրաբար, վերջերս աշխարհաբար։

ԱՄԱՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ.—Տաճկահայ հմուտ ուսուցիչ. ծն. Անջրդի գիւղում (Արարկեր քաղաքի մօտ) 1856 թ.։ 1878 թ. երևաց նա իբրև ուսուցիչ Երիզայի ընկերական վարժարանի, որտեղ նա պատրաստեց լաւ գաւառական ուսուցիչներ, որոնք դեռ այժմ էլ կան։ Ամատեանն ուսումնասիրելով Երիզայի շրջակայքը սկսեց աշխատակցել հ. Ալիշանին՝ ուղարկելով տեղագրութիւններ *)։ Աշխատակցել է «Արևելեան Մա-

*) Այս կենսագրականը ստացել ենք պ. Ա. Կայ-

մուլ»-ին։ Ունի մի մեծ աշխատութիւն *Հին եւ Նոր Հայաստան* վերնագրով, որ դեռ անտիպ է։

ԱՄԱՏՈՒՆԻ ՆԱՊՕԼԷՈՆ (իշխան). — Հայոց թատրոնի ծաղկման և զարգացման նուիրուած մի գործիչ, երդուեալ հաւատարմատար և Տփխիսի քաղաքային Վարկի ընկերութեան նախագահ։ Ն. Ա. 1879 և 1881 թ. Տփխիսում թատրոնական խմբեր է կազմել և այդ խմբերումն են եղել Ադամեան, Աստղիկ, Սիրանոյշ, Պետրոսեան և միւսները։ Ասում են, որ իշխ. Ամատունին վերջերս դատի ենթարկուեցաւ Վարկի ընկերութեան մէջ գործած գեղծումների համար։ Մ. 1899 թ. փետրուարին *)։

ԱՄԱՐԽԱՆ ՅՈՎՍԷՓ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.—Նշ. հնդկահայ հարուստ՝ Սմարանգցի։ Ռուս-պարսկական պատերազմներից դեռ առաջ Ներսէս արքեպ. Աշտարակցին (յետոյ կաթողիկոս) Հընդ-

---

ծունուց, իսկ նա էլ պ. Յակոբ Շաւարշից։ Չը գիտենք որքան ճիշտ է, բայց մենք այսքան լսել ենք, որ Ամատունը մեծ գործ է կատարել հ. Ալիշանի քարտէզների համար, որի համար շրջել է գաւառից գաւառ։ Այս բանի մասին էլ է գրել պ. Յ. Շաւարշը։

*) Հակառակ մեր ցանկութեան անկարող եղանք լրիւ կենսագրութիւն տալու. մենք կաշխատենք վերջին յաւելուած հատորի մէջ զետեղելու ինչպէս կենսագրութիւնն, այնպէս էլ վերջին պատկերը։

կահայերի հետ յարաբերութիւն սկսեց և նկարագրելով Էջմիածնի ու ժողովրդի վիճակը՝ կոչ կարդաց օգնելու հայրենակիցներին և միևնոյն ժամանակ յայտնեց, որ շուտով ռուսական զօրքը պիտի շարժուի դէպի Էջմիածին։ Ամարխանը, որ առասպելական կարողութեան տէր էր, 1829 հոկտեմբեր 20-ին գրեց Ներսէսին, որ պատրաստ է գալ Ռուսաստան, ծառայել Ռուսաց կայսեր իր հոգով, մարմնով ու հարստութեամբ՝ գնելով մահմեդականներից հայաբնակ գաւառներն և յանձնել ողորմած կայսեր՝ կառավարելու։ Ներսէսն այս նամակի մասին յայտնեց Քրիստափոր Լազարեանցին, իսկ սա էլ գեներալ-ադիւտանտ Բեկենդորֆին, որը յայտնեց կայսեր, որ Ամարխանը պատրաստ է գալու, միայն քանի մի տեղեկութիւններ է ուզում ստանալ։ Կայսրն այս միջնորդական գրութեան վրայ անձամբ մակագրել բարեհաճեց. „Пусть онъ пріѣдетъ сюда, а свѣдѣнія, имъ требуемыя, Я ему дамъ, когда его увижу.“ (Թող նա այստեղ գայ, իսկ նրա ուզած տեղեկութիւնները ես կը տամ նրան երբ որ կը տեսնեմ իրեն)։ 1830 թ. դեկտ. 3-ից տուած Բարձրագոյն հրովարտակով նրան գալու իրաւունք տրուեցաւ, սակայն ինչ-ինչ պատճառներով նա չեկաւ։ Մահուան տեղն ու թուականն անյայտ *)։

---

*) Ամարխանը ուզում էր գնել Տաճկաց և Պարսից

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ (ՄԻՀՐԴԱՏ).—Ռուսահայ անդրանիկ դերասան. ծն. Ախալցխայի Ծինուբանի գիւղում 1843 մայիս 1-ին։ Ներսէս Ե. կաթ. պատահմամբ տեսնելով Ամերիկեանին, որդեգրեց և ընդունեց Ներս. դպրոցի սան։ Այնտեղ նա ծանօթացաւ գրականութեան և գեղարուեստի հետ և սիրելով թատրոնական գործը, միտքը դրեց հայոց մէջ կանոնաւոր թատրոն հիմնել։ Մինչև նրա ժամանակները, շատ քիչ ներկայացումներ էին տրւում և գործը չէր կանոնաւորուած։ Թողնելով Ներս. դպրոցը նա առաջին անգամ *Միհրդատ* ողբերգութեան մէջ բեմ դուրս եկաւ կատարելով Միհրդատի դերը և այդ օրուանից նրա անունը Միհրդատ մնաց։ 1860 թ. խաղալով Դրաստամատի դերը (Արշակ Բ.), հռչակուեցաւ իբրև դերասան և այս յաջողութիւնից ոգևորուած վճռեց ընդմիշտ նուիրուել բեմին։ Տփխիսի հասարակութեան դէպի

ձեռքն եղած հայաբնակ երկիրներն և այն էլ թզաչափով, ուրեմն պէտք է երևակայել ինչպիսի հարստութեան տէր էր։ Մանրամասնութիւնները մենք մեր մի այլ աշխատութեան մէջ կը տանք։

Ծ. Հ.

հայոց թատրոնն ունեցած անտարբերութիւնը ստիպեց Ամերիկեանին թողնել Տփխիսը, և նա 1874-ին գնաց Փոթի, ուր հայերէն և վրացերէն լեզուներով մի ներկայացում տուեց և գնաց Կ. Պոլիս։ Այնտեղ էլ սկսեց խաղալ (Պէպօ, Ընշակ Բ. են), սակայն յաջողութիւն չունեցաւ և թոքախտով հիւանդացած Տփխիս վերադարձաւ։ Այստեղ նա հիւանդ դրութեան մէջ շարունակեց իր սիրած գործը, սակայն չարքաշ հիւանդութիւնը մի կողմից, նիւթականն էլ միւս կողմից խեղդեցին նրան և Ամերիկեանն, իբրև վերջին ապաւէն, դիմեց հայ խմբագրատներին, օգնութիւն խնդրեց և ձեռնունայն ելնելով ամենի մօտից էլ, 1879 թ. փետրուար 5-ին ատրճանակով ինքնասպան եղաւ Տփխիսում։ Ամ. աշխատակցել է «Կռունկ»-ին և «Մշակ»-ին, վերջինին շատ գեղեցիկ և սրամիտ յօդուածներ է տուել *Զարուճ* կեղծ ստորագրութեամբ, սակայն «Մշակ»-ի հանգուցեալ խմբագիրը չը մտաւ նրա նեղ դրութեան մէջ...

ԱՄԻՐԵԱՆ ՊԵՏՐՈՍ և ՊՕՂՈՍ.—Եղբայրներ, Նոր Ջուղայեցի հայ վաճառականներ, որոնք մեծ առևտուր ունէին Նոր Ջուղայում և Հընդկական քաղաքներում։ 1688 թ. դեկտեմբերին Աստրախանով Մոսկուա գնացին պարսկական և հնդկական ապրանքներով (մետաքս, ակնեղէն, գորգեր և այլն), այնտեղից Նովգորոդ և

ուրիշ հայ վաճառականների հետ գնացին Ղվեդիա ու Հոլանդիա։ Այնտեղից եւրոպական ապրանքներով վերադառնալով 1689 մայիսին Մոսկուա հասան և նորից Աստրախանով Պարսկաստան գնացին։ Այնուհետև նորա մի քանի անգամ էլի գնացին Մոսկուա և ուրիշ քաղաքներ, իսկ 1694-ին Մոսկուայի Բելիյ գորոդ կոչուած քաղաքամասում եղած Հիւրատուն կոչուած (Гостинный дворъ) քարվանսարայում վաճառատուն բաց արին։

ԱՄԻՐՋԱՆ(ԵԱՆ) ԲԵԴԼԱՐ. — Օպերային երգիչ — բարիտոն. ծն. Տփխիսում 1868 յուլիս 4-ին։ Կրթ. ստացաւ Ներս. դպ. 1879 — 1885 և աւարտելով Պետերբուրգ գնաց, ուր 1886-ին Կոնսերվատորիա մտաւ։ Այնտեղ նա աշակերտեց Էվերարդիին, Գարելին և այլոց մինչև 1889 թ., սակայն օդի վատ ազդեցութիւնից ստիպուած թողեց Պ.-Բուրգը և 1890-ին անցաւ Իտալիոյ Միլան քաղաք, որտեղ նոյնպէս կոնսերվատորիա մտաւ և մինչև 1894 թ. պարապեց իտալական ուղղութեամբ, իսկ նոյն

տարուայ յունիս 21-ին աւարտեց առաջին մրցանակով և սեպտեմբեր 11-ին բեմ դուրս եկաւ Վենետիկում՝ Բոսինի թատրոնում՝ կատարելով Ֆաուստի մէջ Վալենտինի դերը։ Տասնեչորս ամիս խաղալով և երգելով Իտալիայում՝ 1895-ին անցաւ Ռուսաստան՝ Մոսկուա և սկսեց խաղալ իտալական խմբում։ 1896 ապրիլ 5-ին հրաւիրուեցաւ արքունի թատրոնի վարչութիւնից երեք տարի պայմանագրով և այնուհետև սկսեց երգել (քիչ բացառութեամբ միայն) արքունական թատրոններում այցելելով Ռուսաստանի, Լեհաստանի, Սիբիրի և այլ կողմերի մեծ և փոքր քաղաքները։ 1902 թ. մեծ պասին հրաւիրուեցաւ Աստրախանի Արքունի Երաժշտական ուսումնարանի վարչութիւնից, ուր աշակերտներին և ուսուցիչներին պատրաստելով՝ իր մասնակցութեամբ ներկայացրեց Դեմոն, Եւգենիյ Անեգին, Ֆաուստ և Բիգոլետտո։ 1903 թ. յուլիսից պայմանաւորուեց Ֆիզնների հետ և նրա խմբի հետ գնաց Ն. Նովգորոդի Եարմրկա մինչև սեպտեմբերի 1-ը, իսկ յետոյ եկաւ Տփխիս, ուր անցկացրեց ձմրան երգաշրջանը։ Ամիրջանը տուել է համերգներ և մասնակցել այլ և այլ բարեգործական երեկոյթներին միմիայն Բոստովում և Տփխիսում երգելով նաև հայերէն երգեր։ Նրա բէպէրտուարն է ռուսերէն. *Դեմոն, Օնեգին, Ռուսլան, իշխան Իգոր, Յուդա, Գալաշնիկով, Գրիգ. Գրանազնիկ, Գրաֆ Տօմսկիյ,*

Տրոնկուրով, Վեսազեմսկին, իշխ. Կուրլեատու, Նանուշ, Մուցիո, Բորիս Գոդունով, իշխ. Նլեցկի, և այլն։ Օտար լեզուներով—Ամոնասրо, Նեբուսկо, Էսկամիլիо, Մեֆիստոֆել, Վալենտին, Ռիզոլետտо, Բարնաբա, Նազо, Թոնիо, Վոլֆրամ, Փիզարо, Բեպպо, Մարսել, Նիլականտա, Ռենատо, Կարլ Ե., Մերկուցիо, Կապուլետ, Ջիանշիոտտо են։

ԱՄԻՐՏՕԼՂԱԹ.—Ճարտար բժիշկ, Ամասիացի, որ բնակւում էր Կ. Պոլսում։ Սա հմուտ էր արաբ, թուրք, պարսիկ, յոյն և լատին լեզուներին և օգտուելով այդ լեզուներով եղած նշ. բժշկական գրուածքներից՝ գրեց մի ճոխ բժշկաբան, որի մէջ յիշատակել է մինչև ինքն եղած հայ բժիշկների անունները։ Մ. 1496 դեկտեմբեր 8 ին։

ԱՅՎԱԶԵԱՆ ԱԲՐԱՀԱՄ *).—Հմուտ կենսագիր, տաճկահայ, ապրում է Կ. Պոլսում, ճանապարհորդել է շատ հայաբնակ տեղերում և իր գործերի համար նիւթեր հաւաքել. ահա իր խօսքերը. «Ձիս ճանչցողները գիտեն որ փոշ-

*) Հակառակ մեր ցանկութեան անկարող եղանք այս հեռաբրբիր մարդու կենսագրութիւնը ձեռք բերելու։ Մեր նամակին, որ ուղղեցինք «Արևելք»-ի միջոցով, որի խմբագրատանը ծառայել է, չը պատասխանեց։

տանկ հիւանդութեամբ տառապելով հանդերձ՝ ամեն կողմ արշաւածեմ և կ'արշաւեմ կենսագրելի անձանց ժամանակակից ծերունիներ գտնելու, հազուագիւտ ձեռագիրներ և յիշատակարաններ պրպտելու և օգտուելու, և մանաւանդ՝ երբեմն արժանահաւատ աւանդութեանց դիմելու և ապաւինուելու... *)։ Սա առ այժմ կենսագրել է 17 մարդու, և այդ կենսագրականները ի մի ժողովուած կազմում են երեք տետր Շար հայ կենսագրութեանց վերնագրով, տպ. Կ. Պ. 1893. (ա. բ. և գ. մասն)։ Միւս գր. վաստ. ա) Արտասուք մանկան. բ) Առաջին մրմունջք. գ) Քնարն. դ) Անակրէոնդական նուագք. ե) Մէփիստոփէլ։ Անտիպներ—Վերիտոն. Հայ արհեստաւորք. Ամիրայք. Տարեգիր հայ թատրոնի. Ցուշիկք Բիւթանականք. Սաղիմական նամականի. Մալակայի առթիւ հայ նաւատեարց եւ հայ նաւապետաց պատմութիւնը։

ԱՅՎԱԶԵԱՆ ԲԱԳՐԱՏ.—Վիպասան. ծն. Տփխիսում 1862 յունիսի 8-ին։ Կրթ. ստացաւ Ներս. դպ. և 1882 թ. աւարտելով, սկսեց ուսուցչութիւն անել, որը շարունակեց 14 տարի, ծառայելով Շամախում 1882—83, Բագուում 1883—85, Ախալցխայում 1886—87, Սղնախում 1887—88 և Տփխիսում 1888—96 թ., իսկ ուսումնարանների փակումից յետոյ, 1897-ից ըս-

*) Շար հայ կենսագր. Գ. մաս էջ 223.

կրսեց ծառայել Վրաստանի և Իմերէթի թեմի կոնսիստորիայում վարելով դիւանապահի և գործավարի պաշտօնները, որ և վարում է ցարդ։ Նա գրական ասպարէզ մտաւ թերթերի միջոցաւ և սկսեց աշխատակցել «Մեղու Հայաստան»-ի, «Նոր-Դար» և «Արձագանք» լրագիրներին սեպհական և կեղծ ստորագրութիւններով տալով մի շարք պատկերներ ու վիպակներ, իսկ սկզբում գրելով բացառապէս «Մեղու»-ի մէջ տալիս էր յօդուածներ, որոնք լաւ ընդունելութիւն գտան։ Նոյնը կարելի է ասել և վէպերի վերաբերեալ, որոնք նոյն իսկ կրկին տպագրութեանց են արժանացել։ Գր. վաստ.—ա) *Մութ խորշերից* Տ. 1888 (զրոյց). բ) *Աշոտ Երկաթ* Տ. 1893—95, 1900—1904 (վէպ). գ) *Տանջանքի ըովից* Տ. 1895 (վէպ). դ) *Հիւսիսի Արծիւը* Տ. 1901 (վէպ). ե) *Սեւ յաղթանակ* Տ. 1903 (վէպիկ)։ Ունի նաև անտիպ գրուածքներ՝ *Անիի կործանումը ԺԱ-րդ դարում* *), վէպ, *Խելագար*—դրամա, *Հոգի եւ*

---

*) Արդէն տպւում է «Բանասէր» ամսագրի մէջ Փարիզում։

մարմին վէպ ժամանակակից կեանքից, Թարգմանել է Կարմեն Սիլ'վայի Պիատրա Արսա, Տ. 1888 թ.։

ՍՅՎԱՋԵԱՆ ԳԱԲՐԻԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.—Ծն. Թէոդոսիայում 1812 մայիս 10-ին։ Նրա հայրը կաթոլիկ էր, իսկ մայրը առաքելական հայ և նա մկրտուեցաւ հայոց եկեղեցում Աղէքսանդր անունով։ Վ. Մխ. մր. Բժշկեան հ. Մինաս վարդապետը, որ Ղրիմու հայ կաթոլիկների հովիւ էր, նրա դաստիարակութիւնն իր վրայ առնելով՝ 1826-ին Վենետիկ ղրկեց, ուր նա ուսանելով՝ 1834-ին վարդապետ ձեռնադրուեցաւ և քիչ ժամանակից յետոյ գնաց հայրենիք, որտեղից Վենետիկ և նորից հայրենիք ու Վենետիկ վերադառնալով 1842-ին առաջարկեց միաբանութեան Բազմավէպ անունով ամսագիր հրատարակել, որի համար համաձայնութիւն ստացաւ և 1842-ին սկսեց հրատարակել՝ իրեն օգնական ունենալով հ. հ. Ալիշանին և Սարկուճեանին։ Նա «Բազմավէպ»-ի խմբագրի պաշտօնը վարեց մինչև 1848 թ. միևնոյն ժամանակ վարելով նաև միաբանութեան ատենադպրի պաշտօնը։ 1848-ին նա ղրկուեցաւ Փարիզ, իբրև տեսուչ և դաստիարակ Մուրատեան վարժարանի, որը 1846-ին Պատուայից Փարիզ էր փոխադրուած։ 1852 թ. սկսած այդ վարժարանի վարչութեան և միաբանութեան միջև մի

ներքին խռովութիւն ծագեցաւ *) և բազմաթիւ գրագրութեանց փախճանն այն եղաւ, որ Գաբրիէլ, Սարգիս Թէոդորեան և Ամբրոսիոս Գալֆայեան վարդապետները 1855 թ. թողին կաթոլիկութիւնը և մտան Հայաստ. Առաքելական եկեղեցու գիրկը։ Գաբրիէլ վ. իւր ընկեր վարդապետների հետ Փարիզում *Հայկազեան* անունով մի ուսումնարան հաստատեց, ուր հաւաքուած էին Կ. Պոլսից և այլ տեղերից բերած հայ պատանիներ, սակայն նիւթական զրկանքները մի կողմից և Պոլսոյ *էֆէնդիների* կամայականութիւններն էլ միւս կողմից ստիպեցին փակել այդ դպրոցը և 1857-ին իրենցներն աճրդով ծախուեցան։ Այնուհետև նա Կ. Պոլիս գնաց, որտեղից Ռուսաստան՝ Բեսարաբիա անցաւ և թեմի առաջնորդ նշանակուեցաւ։ Այստեղ էլ Յարութիւն աղա Խա-

*) Այս խռովութիւնների մասին տեղեկութիւններ կարելի է գտնել Սարգիս եպ. Թէոդորեանի «Պատմութիւն Մուրատեան վարժարանի», նաև «Պատմութիւն դարձին երից վարդապետաց», «Ուրուագիծ ազգոյ և ընթացից Մխիթարեանց» և «Յայտարարութիւն Մուրատեան վարժարանի» գրքերում։

լիպեանի օժանդակութեամբ Թէոդոսիայում Ղազիպեան անունով ուսումնարան հաստատեց և սեպհական տպարան ձեռք բերեց դպրոցի համար։ Այս ուսումնարանն էլ ինչ որ Կարապետեան, Հայրապետեան և ես ինչ գիտեմ մայրապետեան կուսակցութիւններին զոհ գնաց. գլխաւոր մեղաւորն էլ մեզ ամենից լաւ յայտնի Միքայէլ Նալբանդեանցն էր, որը իր կամայականութեամբ մեծ վնասներ հասցրեց դպրոցին...։ 1871-ին ուսումնարանը Ն. Նախիջևան տեղափոխուեցաւ Թեմական դպրանոց անուան տակ, իսկ աշակերտները ցրուեցան։ Դժգոհ այդպիսի կամակոր հակառակորդներից, որոնք բարին չարութեամբ վճարեցին, ընդունեց Դէորգ Դ. կաթ. հրաւէրը, և գնալով Էջմիածին եպ. ձեռնադրուեցաւ և նորահաստատ (1874) Դէորգեան ճեմարանի տեսչի պաշտօնը ստանձնեց։ Մի քանի տարուց յետոյ աշակերտական խռովութեանց պատճառով թողեց այդ պաշտօնը և 1879-ին նշանակուեցաւ Գրաստանի ու Իմերէթի թեմի առաջնորդ, սակայն երկար չը մնաց և 1880 ապրիլ 8-ին վխճ. և թաղուեցաւ Վանքի Մայր եկեղեցու բակում։ — Բաժանուելով Մխիթարեաններից. հէնց 1855 թ. Փարիզում սկսեց Մասեաց Աղաւնի անունով հայ-ֆրանս. ամսագիր հրատարակել, որը տեղափոխեց Թէոդոսիա և 1860 թ. սկսեց հրատարակել իրրև երկշաբաթաթերթ հայ և ռուս լեզուներով։ 1865-ին դա-

զարեց Մասեաց Աղաւնին։ Գր. վասա.—ա) *Համառօտ պատմութիւն Ռուսաց* **Վտ. 1836. բ)** *Պատմութիւն Օսմանեան պետութեան* **Վտ. 1841. գ)** *Ճառ յաղագս հնչման Ղ եւ Լ տառից* **Վտ. 1852. դ)** *Ուրուագիծ ոգւոյ եւ ընթացից Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան* **Փ. 1857. ե)** *Լսարան Հոգեշահ պատմութեանց* (9 **տետր**) **Թէոդոսիա 1868—1870. զ)** *Օրէնք վայելուչ կենցաղավարութեան* **Թ. 1871. է)** *Խանգարմունք Հայկարանութեան ի հնումն եւ ի նորումս* **Թ. 1869. ը)** *Ուղղագրութիւն լեզուիս Հայոց* **Թ. 1869. թ)** *Թէ ինչպէս Հռոմայ եկեղեցին ոչ եւս է կաթուղիկէ եկեղեցի.* **Վաղ. 1878. ժ)** *Տիկոյ եպիսկոպոս եւ պատմ. դարձին Հայկազանց Լեհաստանի ի կաթոլիկութիւն* **Վաղ. 1877. ժա)** *Նորխակրթանք հայերէն լեզուի* (**երեք մաս**). **Վաղ. 1876—77—78. ժբ)** *Պատմութիւն Խալիպեան ուսումնարանի* **Տ. 1880. ժգ)** *Դասագիրք Քրիստ. վարդապետութեան* **Վաղ. 1875. ժդ)** *Առակք՝* **Քռիլովի թարգմ. Կ. Պ. 1870. Էջմ. 1896. ժե)** *Ցանոսի յաղագս պապին եւ ժողովոյ նորա* **Տ. 1871. ժզ)** *Ցաղագս մարդկային պարտուց* **Սիլվիոյ Պէլլիքոյ. Վտ. 1854** *).

---

*) Վաղուց արդէն, դեռ Սիմէօն երեւանցի կաթողիկոսից առաջ էջմիածնում գաղտնիքները ծածկելու համար գործ էին ածում մի տեսակ ծածկագրեր, որոնց գաղափարները տալել է Գիւտ ա. ք. Աղանեանցը «Գիւ-

ԱՅՎԱԶԵԱՆ ՅՈՎՍԷՓ ԵՊԻՍԿՈՊՈՍ.—Առաջնորդ Եգիպտոսի հայոց. ծն. Էրզրումում 1833-ին, եպ. ձեռնադրուեցաւ 1899-ին Էջմիածնում։

ԱՅՎԱԶՈՎՍԿԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ.—Աշխարհահռչակ հայ ծովանկարիչ, եղբայր Գաբրիէլ արքեպիսկոպոսի. ծն. Թէոդոսիայում 1817 յուլիս 17-ին։ Նրա դաստիարակները փոքր հասակից նկատելով, որ սիրում է նկարչութիւնը ուշադրութիւն դարձրին, իսկ շնորհիւ Թէոդոսիոյ քաղաքապետի, որ յետոյ Սիմֆերոպոլի նահանգապետ եղաւ, Յովհաննէսը ընդունուեցաւ Սիմֆերոպոլի գիմնազիա, որտեղ եղած ժամանակ շնորհիւ իշխանուհի Նարբրիշկինայի 1833-ին ընդունուեցաւ Պ.-Բուրգի Գեղարուեստից ճեմարան իբրև կայսեր կաբինետի թոշակաւոր, և միևնոյն ժամանակ աշակերտեց ֆրանսիական ծովանկարիչ Ցաննէրին։ Այնուհետև Այվազովսկին մեծ իշխան Կոնստանդին Նիկոլաևիչի հետ մի զբօսանք կատարեց Ֆիննական ծոցում։ Մի շարք նկարներից յետոյ, ո-

---

ւան Հայոց պատմութեան» Գ. գրքում։ Ներսէսի ժամանակ էլ մի տեսակ ծածկագրեր էին գործածւում, որով գրուած մի շարք գրութիւններ մնացին, որոնք անմեկնելի էին։ Գաբրիէլ արքեպ. կարողացաւ և մեկնեց այդ գրութիւնները։

ընդ համար ոսկէ շքանշան ստացաւ. 1840-ին պետական հաշուով Իտալիա գնաց, որտեղից անցաւ Փարիզ և Միջերկրական ծովով Ռուսիա վերադարձաւ։ 1846 թ. կայսեր հրամանով նա ուղեկցեց Մեծ իշխան Կոստանդին Նիկոլաևիչին՝ եւրոպական Թուրքիայում, Փոքր Ասիայում և Արշիպելագի ջրերում կատարած ճանապարհորդութեան ժամանակ և վերադառնալով Պ.-Բուրգ՝ 1847-ին պրոֆեսորի կոչումը ստացաւ։ 1851-ին նա ուղեկցեց Նիկոդայոս Ա կայսեր մինչև Սեւաստոպոլ։ 1857-ին նա իր նկարները Փարիզ տարաւ, ներկայացաւ Նապոլէոն Գ-ին և Եւգինիա կայսրուհուն. այդտեղ նա ստացաւ Պատուաւոր Լէգէոնի շքանշան և իր եղբայր Գաբրիէլ վարդապետի հետ Կ. Պոլսով Ռուսաստան վերադարձաւ։ 1860-ին նա ուղեկցեց Մ. իշխ. Մարիա Ալէքսանդրովնային Կ. Պոլիս։ 1868-ին եկաւ Կովկաս, որտեղ նկարեց տեսարաններ Սև ծովի ափերից և անցաւ Դաղեստան նոյն նպատակով, իսկ Տփխիսում էլ պատկերահանդէս բացեց։ 1869-ին նա ներկայ եղաւ Սուէզի ջրանցքի բացման հանդիսին։ 1873-ին ուղևորուեցաւ Ֆլորէնցիա, որի Գեղարուեստից ճեմարանում Պիտտի պալատի գալէրէում դրուեցաւ նրա ինքնագիր պատկերը (այս պատուին շատ քչերն են արժանանում)։ Նրա հուշակն նոյն իսկ Օսմանեան սուլթանին հասաւ, և Այվազովսքին հրաւիրուեցաւ Կ. Պոլիս, ուր մեծ պատուով ընդու-

նուեցաւ և շքանշաններ ստացաւ։ 1888 սեպտեմբեր 26-ին տօնուեցաւ նրա գեղարուեստական գործունէութեան յիսնամեակը, որի համար Պ.-Բուրգի գեղարուեստից ճեմարանը նրան պատուաւոր անդամի տիտղոս շնորհեց և ի պատիւ նորա ոսկէ մէդալ կտրեց։ 1900 թ. ապրիլ 19-ին մեռաւ և թաղուեցաւ Թէոդոսիոյ հայոց ս. Սարգիս եկեղեցու գաւթում։ Իրեն հաշուով ինքը նկարել է մօտ 5000 պատկեր (չը հաշուած փոքրերը), որոնք գտնուում են աշխարհիս բոլոր նշ. քաղաքների գալերէյներում և նշանաւոր անձանց տներում։ Ունեցել է 100-ից աւելի պատկերահանդէս և միշտ բարեգործական նպատակով (ի հարկէ մուտքից գոյացած գումարը). վերջինն եղաւ Բագուում 1899 թ. վերջերը, իսկ Թէոդոսիայում նա ունէր մշտական գալերէյ։ Իտալիա եղած ժամանակ նա նկարել է *Նէապոլեան գիշեր*, *Լուսընկայ գիշեր*, *Փոթորիկ*, *Քաոս*, են։ 1866—77 թ. կրետացիների ապստամբութեան ժամանակ նկարեց տեսարաններ նրանց ապստամբական կեանքից և Օդեսայում պատկերահանդէս բանալով արդիւնքը կրետացիներին նուիրեց։ 1877—78 թ. ռուս-տաճկական պատերազմի և 1894—96 Սասնոյ և այլ հայկական կոտորածների ժամանակ մի շարք պատկերներ նկարեց այդ դէպքերի առթիւ։ Նրա պատկերները—*Աշխարհի ստեղծագործութիւնը*, *Համաշխարհային Ջրհեղեղ*, *Տրապիզոնի հայոց ջարդը*,

Բայրոնի մուտքը ս. Ղազար, Խորտակուած նաւը, Քրիստոս ծովի վերայ, ծովը գիշեր ժամանակ, Սեւ ծովը արեւելեան ափերից և այլն և այլն։

ԱՅՎԱԶՏԵԱՆ ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊ. — Առաջնորդ Պարսկաստանի և Հնդկաստանի հայոց. ծն. Կ. Պոլսում 1853-ին, 1898-ին Էջմիածնում եպ. ձեռնադրուեցաւ և ուղարկուեցաւ Ստրպատականի առաջնորդ, իսկ 1901 թ. նշանակուեցաւ Պարսկ. և Հնդկաստանի առաջնորդ։



ԱՅՏԸՆԵԱՆ Հ. ԱՐՍԷՆ Վ. (արքեպիսկոպոս). — Մբ. Վն. Մխ. յայտնի լեզուագէտ-բանասէր. ծն. Կ. Պոլսի Բեբա թաղում 1825 յունուար 7-ին, ուր Մխիթարեանց վարժարանում ստացաւ սկզ. կրթ.։ 1835-ին ղրկուեցաւ Վիեննա, վանքի դպրոցում մեծ յառաջդիմութիւն ցոյց տուեց և առանձնապէս իր ուշադրութիւնը լեզուների վրայ կեդրոնացրեց։ Նա դեռ աշակերտական սեղանից

սկսեց գրել։ 1845 նոյեմբեր 1-ին վարդ. ձեռն. և նոյն 1845-ին թարգմանեց Կիկերոնի Միլոնի ճառը ու զբաղուեցաւ այլ և այլ ուսումնասիրութիւններով։ Հայոց մէջ նա առաջինն էր, որ երկրագունդ պատրաստեց և 1851-ին արդէն աբաբերէնը պատրաստ էր, իսկ 1848-ին սկսեց հայերէնը պատրաստել, որը տպուեցաւ և դիտնականներին զարմանք պատճառեց *)։ Այդ միևնոյն ժամանակ նա մի ճանապարհորդութիւն արեց Կէօշէք եղբայրների հետ և այցելեց Կ. Պոլիս, Զմիւռնիա, Այտին, Փարիզ և այլ քաղաքները, իսկ 1862 դեկտ. 12-ին հասաւ Վենետիկ։ Նրա աշխատանքի գլխաւոր առարկան հայոց աշխարհաբար լեզուն էր, որի *Քննական քերականութիւնը* 1866-ին տպելով Վիեննայում, մի նոր դարեշրջան բաց արեց։ Նա այդ գրքում վերցնելով մեր գրաբարը մայր աշխարհաբար հայերէնի, մշակեց վերջինը և ապացուցեց, որ արդի հայերէնը մի ընդունակ և դիւրին լեզու է, նրա մէջ նա գտաւ այն յատկութիւնները, և թերևս աւելին, քան ինչ որ գրաբարում է։ 1851-ին նա ուղարկուեցաւ Զմիւռնիա տեղոյն Մխիթարեան վարժարանի դասատուի պաշտօնով, սակայն 1853 դեկտեմբերին

*) Տպուած է մեծ և փոքր. Կ. Պոլսի Պալենց գրատան գրացուցակի մէջ այդպէս է նշանակուած և առաջինն արժէ 2400 դրուշ իսկ փոքրը—500 դրուշ։

Վիեննա վերադարձաւ և մի տարուց յետոյ կրկին Զմիւռնիա գնաց։ 1867 հոկտեմբերին Կ. Պոլսի Մխիթարեան վարժարանի (ի Բանկալթի՝) տեսուչ նշանակուեցաւ և այդ պաշտօնը վարեց նա մինչև 1876 թ., երբ արդէն Վիեննա գնաց։ 1886-ին ընտրուեցաւ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան աբբա։ 1895-ին կատարուեցաւ նրա գրական գործունէութեան յիսնամեակը։ 1902 թ. յուլիսի 8/21-ին վիճ. Վիեննայում։ Այտընեանը շարունակ աշխատակցել է իր միաբանութեան Եւրոպա և Հանդէս Ամսօրեայ ամսագիրներին և գրել է մեծ մասամբ լեզուաբանութեան վերաբերեալ։ Ունի թարգմանութիւններ և ուսումնասիրութիւններ և *Քերականութիւն արդի հայերէն լեզուի* Վն. 1867 և 1882։ Հրատարակել է նաև հ. Վ. Զալբխեանի *Քերականութիւն Հայկազեան լեզուի* գիրքը իր կողմից յաւելուածներ տալով և ուղղագրելով։ Պէտք է նկատել, որ Այտընեանը նկարիչ էր և ինքնակրթութեամբ առաջ գնացած։ Նրա առաջին նկարն է *Ամենասուրբ Երրորդութիւն*, որը նուիրել է նա Զմիւռնիոյ Նարլը գիւղի եկեղեցուն։ Միւս նկարներից նշանաւոր են *ս. Պողոսի*, *ս. Լուկիայի*, *ս. Աստուածածնի*, *Տիրամօր վերափոխումն* և *Մխիթարի* պատկերները։ Բացի այս նա պատրաստել է բազմատեսակ ծաղկագրեր ու այլ տեսակ գրեր, որոնք երևացել են Հանդէս Ամսօրեայի, Արարատի, Տարազի, Աղբիւրի

և այլ հանդէսների էջերում։ Այտընեանն առհասարակ գեղարուեստասէր լինելով, հիմք դրեց իրենց եկեղեցական երաժշտութեան, որով ինքն երկար զբաղուեցաւ՝ ուսումնասիրեց և Վենետիկի յայտնի երաժշտագէտների մասնակցութեամբ տպագրեց։

ԱՆԱՆԵԱՆ Հ ՄԿՐՏԻՉ Վ.—Մբ. Վտ. Մխ. ծն. Կ. Պոլսում 1715 թ., աշակերտեց Մխիթարին և 1739-ին վարդ. ձեռնադրուեցաւ։ 1756—1758 թ. Կ. Պոլսում քարոզչի պաշտօն վարեց, որտեղից վերադարձաւ Վենետիկ, իսկ այնտեղից էլ ուղարկուեցաւ Հռոմ իբրև ներկայացուցիչ Վենետկի Մխիթարեանց։ 1766-ին թողեց այդ պաշտօնը և Վենետիկ գնաց։ 1775-ին կրկին Կ. Պ. ղրկուեցաւ, սակայն իր անխոհեմ ընթացքի համար մի քանի ամսից յետոյ Թեսաղոնիկէ աքսորուեցաւ, որտեղ և մ. 1777 սեպտեմբերի 6-ին։ Անանեանն օգնել է Մխիթարին *Հայկազեան բառարան*-ի մէջ (1749—69), նա կազմել է *Բառգիրք յաշխարհաբարէ ի գրաբար* տպ. Վտ. 1769 (Բ. հատորումն է գտնւում)։ 1869-ին տպուեցաւ առանձին՝ սրբագրութեամբ Հ. Եղ. Հիւրմիւզի։

ԱՆԴՐԷԱՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ.—Անդրէաս եպ. լինելով Աստուածատուր Մարտինցի (Մերտինցի) պատրիարքի հօրեղբօր որդի՝ 1542-

ին ընտրուեցաւ պատրիարք, որովհետև Աստուածատուրը ծերութեան պատճառով հրաժարուեցաւ։ Անդրէասը բարեզարդեց վանքը, տէրութեան միջոցով ոչնչացրեց *քաշ* կոչուած տուրքը «զոր պահանջէին այլազգիք 'ի միաբանաց և յուխտաւորաց», նորոգեց ս. Կուսի գերեզմանը, ս. Յակոբայ վանքի մօտ տաճիկներից արևմըտեան կողմը տեղ գնեց և ձիթենեաց պարտէզ տնկեց վանքի համար։ Նա բազմատեսակ վէճեր ունեցաւ յոյների և լատինաց հետ *) և 29 տարի պատրիարքութիւն անելուց յետոյ 1571-ին վախճանուեցաւ։

ԱՆԴՐԷԱՍ ՍՏԱՄԲՈԼՑԻ.—Պատրիարք Կ. Պոլսի, ընտր. 1675-ին. «ձէհէննէմ վէրտիվէնի» կոչուած երէցը» **)։ 1676-ին աթոռընկէց եղաւ։

ԱՆՈՅԶԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ.—Ռումանահայ, Պուքրէշի (Բուխարեստ) ազգային հաստատութեանց բարերար, մ. 1876 յունիս 23-ին։

ԱՆՏՈՆ ՔԱՀԱՆԱՅ.—Սիւնեցի. երբ հայ մելիքներն Աղուանից Եսայի կաթողիկոսի մասնակ-

---

*) Մանրամասնութիւնները տես «Ժամանակագրական պատմութիւն ս. Երուսաղէմի», Երուսաղէմ 1890. Աստուածատուր եպ. Տ. Յովհաննիսեանցի, հատոր Ա. էջ 254—275։

**) 1901 թ. ընդարձակ Օրացոյց. Կ. Պոլիս էջ 108։

ցութեամբ ուսաց Պետրոս Մեծ կայսեր հետ 1724 թ. ժողովից յետոյ յարաբերութիւններ սկսեցին, այս քահանային Քեխա Զէլէպու, Պետրոս եպէցի և Սիմէօն Պօպովի (՝) հետ աղերսական նամակներով կայսեր մօտ ուղարկեցին, որով օգնութիւն էին խնդրում։ Անտոն քահանան Պ.-Բուրգ հասնելով ինքնագլուխ կարգադրութիւններ արեց և խնդրեց, որ հայերին Կասպից ծովի ափերին նոր տիրած երկիրներում բնակութեան տեղ տան։ 1724 նոյեմբեր 10-ից տուած Բարձրագոյն հրովարտակով այդ խնդրին բաւարարութիւն տրուեցաւ և տ. Անտոնն իր ընկերներով վերադարձաւ։ Այս խնդրի հիման վրայ կանգներ դրաֆ Գոլովկինը հայերի համար որոշեց Գիլան, Մազանդարան, Բագու, Դերբենտ են։ Անտոն քահանան ներկայացաւ իրեն ուղարկող ժողովին, և երբ լսեցին նրա արարքների մասին՝ անպատուեցին ինքնագլուխ կարգադրութիւնների համար և որովհետև տ. Անտոնը վախենում էր մելիքներից, մանաւանդ որ մի շարք տարաձայնութեանց պատճառ դարձաւ, երկու օրից յետոյ փախաւ...

ԱԶԳԵԱՆ ԽՈՐԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ.—Պատրիարք Կ. Պոլսոյ. ծն. Քէրէմէթում 1842 նոյեմբեր 4-ին։ Կրթ. ստացաւ Կ. Պոլսում, ուր և վարդ. ձեռնադրուեցաւ, իսկ 1873-ին Էջմիածնում եպ.։ 1888 սեպտ. 29-ին Կ. Պոլսի պատ-

բիարք ընտրուեցաւ. այդ ժամանակ նա Արմաշի գպրեվանքի վանահայրն էր։ 1894 թ. յունիս 4-ին թեր և դէմ խօսակցութիւնների առաջն առնելու համար հրաժարուեցաւ պատրիարքութիւնից և այնուհետև նա ապրում էր Մարդինում իբրև քարոզիչ։ Վախճ. Կ. Պոլսում 1899 թ. հոկտ. 26-ին։ Գր. վաստ.—ա) *Փիլիսոփայութիւն*, Արմաշ 1880. բ) *Կենցաղ եկեղեցականաց*, Կ. Պ. 1892։

ԱՋՁԵԱՆ ԱՐԱՄ.—Տաճկահայ գրագէտ-գրաշար, որ 1884 թ. Կ. Պոլսում սկսեց *Հապտեր Դիոգինեան* անունով հանդէս հրատարակել և երկու համար տալուց յետոյ Կրթական Նախարարութեան հրամանով դադարեց։ 1888 թ. նորից սկսեց տպագրել, սակայն մի քանի համար միայն կարողացաւ տալ։

ԱՊՐՕ ՍԱՀԱԿ.—Զմիւռնիացի հայ խմբագիր երբեմն թարգման Բ. Դրան. 1849 թուից Օսմանեան ծառայութիւն մտնելով ծառայեց մինչև իր մահը և հայոց հասարակական գործերումն էլ նշանաւոր դեր էր խաղում։ Նա իր ժամա-

նակին նշանաւոր էր և իրրև լեզուաբան և 1852 թ. փետրուար 28-ից Գրիգոր Մարկոսեանցի († 1888) հետ սկսեց *Նոյեան Աղաւնի* անունով շաբաթաթերթ հրատարակել, որի համար սեպհական տպարան էլ ունեցաւ։ Այս թերթը հազիւ տարի ու կէս տևեց և 1853-ին դադարեց։ Ապրեն մ. Կ. Պոլսում 1900 թ.։

ԱՌԱՔԵԼ ԴԱՒՐԻԺԵՑԻ.—Պատմագիր ԺԷ-րդ դարու։ Առաքել վարդապետը պատանի հասակում Էջմիածին տարուեցաւ և այնտեղ աշակերտեց Փիլիպպոս կաթողիկոսին, որը նրան վարդապետ ձեռնադրեց։ Նոյն կաթողիկոսի հրամանով 1655 թ. սկսեց շարադրել Շահ-Աբբասի Հայաստան արշաւելու պատմութիւնը, որին ինքը մեծ մասամբ ականատես է եղել։ Վախճ. 1669 թ. և թաղ. Էջմիածնի միաբանական գերեզմանատան, ուր այսօր էլ կայ հին տապանաքարը *)։ Առաքել վ. պատմութիւնն սկսել է 1601 թ. և հասցրել է մինչև 1662 թ.։ Այս գիրքը շատ հետաքրքիր է և հետաքրքիր յաւելուածներ էլ ունի։ Առաջին անգամ տպ. Ամստերդամում 1669 թ. շնորհիւ Ոսկան վ. Երևանցու, երկու անգամ

---

*) Եթէ չենք սխալւում, նրա տապանաքարը նորոգելու, թէ նոր տապանաքար շինելու համար մի փոքրիկ գումար հաւաքուեցաւ, ինչ եղաւ տապանաքարը։ Փողն էլ որին որ յանձնուեցաւ, նա ինչ արեց։

էլ տպուեցաւ Էջմիածնում՝ 1886 և 1896 թ.։ Առաքել Դաւրիժեցու պատմութիւնը թարգմանուած է ֆրանսերէն Բրոսսէի ձեռքով։

ԱՌԱՔԵԼԵԱՆ Հ. ԽԱՉԱՏՈՒՐ Վ.—Հռոմայ անդրանիկ հայ ծառաներից մէկը. ծն. 1666 թ. Կարինում և պատանի հասակում ս. Էջմիածին ուղարկուեցաւ ուսանելու, սակայն Վարդան վ. Յունանեանի դրդմամբ (սա իր անկարգ վարք ու բարքի համար Էջմիածնում բանտարկուած լինելով նոր էր ազատուել) նրա հետ Հռոմ գնաց, որտեղ Ուրբանեան դպրոցի սխոլաստիք դասընթացն աւարտելով, 1692-ին վարդ. ձեռնադրուեցաւ և որպէս քարոզիչ ուղարկուեցաւ Կ. Պոլիս իր հայրենակիցներին կաթոլիկութիւն քարոզելու։ Այնտեղ նրան շատ լաւ ընդունելութիւն ցոյց տուին և նա մաղապուրծ՝ փախաւ հայերից և այս ու այն օտարազգիների ողորմութեան ապաւինուեցաւ։ Կ. Պոլսում նա ծանօթացաւ Մխիթարեան միաբանութեան հիմնադիր Մխիթար վ-ի հետ և նրան էլ կաթոլիկութեամբ վարակելով՝ դրդեց անցնել Իտալիա (Մխիթարն անցաւ իրրև հայ, բայց նրա ժառանգները դաւաճանեցին հայրենի եկեղեցուն...)։ Կ. Պոլսի անյաջողութիւններն ու հունձի պակասութիւնը նրան ստիպեցին հեռանալ այդ տեղից և նա 1718-ին քարոզչի պաշտօնով անցաւ Բելգրադ, Տրանսիլվանիոյ հայաբաղաքներ,

որպէս զի բաղդից հալածուած հայ գաղթականներին գոնէ կարող լինի մոլորեցնելու։ Այստեղ արդէն բացարձակ հալածանքն անկարելի էր, պապականութիւնը և պապը թագաւորում էին թագաւորների վրայ... Մեռաւ 1740 ապրիլ 30-ին *)։ Գր. վաստ.—ա) *Քերականութիւն հայ.* Հռոմ 1691. բ) *Համառոտութիւն բարոյականի աստուածբանութեան* Վտ. 1709։ Բացի այս ունի նաև քանի մի սխոլաստիք գրուածքներ։

ԱՌԱՔԵԼԵԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ.—Նշ. հայ գրագէտ-հրապարակախօս ծն. Զուշում 1855 մայիս ամսին։ 8 տ. հասակում ծնողները նրան Զուշու կուսանաց վանքի ուսուցչուհիների խնամքին յանձնեցին, որտեղ նա կարդալ-գրել սովորելով, 1865-ին իր ծնողների հետ Թաւրիզ տեղափոխուեցաւ և այնտեղ երկու տարի ուսաւ հայոց ուսումնարանում, իսկ յետոյ սկսեց պարապել տնային ուսուցիչների մօտ։ 1874-ին նա կրկին Զուշի գնաց և սկսեց պատրաստուել, որի արդիւնքն այն եղաւ, որ 1877-ին Բագուի Ռէա-

*) Ահա սրանք են պատճառ (Նիկոլ եպ., Խաչատուր և Վարդան վարդապետները և այլն), որոնք ջնջեցին, ոչնչացրին հայութեան անունը արևելեան Եւրոպայում։ Մխիթարեանները լաւ գիտեն այս բոլորը, սակայն խոստովանուելու կարիք չեն զգում, մանաւանդ Վենետիկցիք, թէ չէ Վեննայեցիք բարեխիղճ են։

լական ուսումնարանի Ե. դաս. ընդունուեցաւ։ 1879-ին աւարտելով, գնաց Մոսկուա և մտաւ Պետր. Բազում. ակադեմիա, սակայն հայրը մեռնելով հանգամանքները նրան ստիպեցին 1881-ին Զուշի վերադառնալ, ուր Գէորգ Դ. կաթողիկոսի կոնդակով թեմական և օրիորդաց դպրոցների տեսուչ նշանակուեցաւ։ Նա այդ պաշտօնը վարեց մի տարի և այն էլ ձրիաբար։ 1882 թ. մասնակցեց հայոց առաջին (և վերջին) Ուսուցչական ժողովին, որ տեղի ունեցաւ Տփխիսում։ Ինչպէս 1884—85, այնպէս էլ 1892 թ. նա մասնակցեց կաթողիկոսական ընտրութիւններին իբրև աշխարհական պատգամաւոր Պարսկաստանի և Հնդկաստանի թեմի։ Հ. Առ. ջանքերով հիմնուեցաւ Զուշում Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութեան ճիւղը, և նա մի քանի տարի նոյն ճիւղի նախագահի և քարտուղարի պաշտօնները վարեց։ 1892—98 Կովկ. Հայոց Բարեգ. ընկ. քարտուղարի պաշտօնը վարեց։ 1880 թ. հանգ. Գաբրիէլ Միրզոյեանցի և օր. Ն. Տէր-Մարկոսեանի հետ հիմնեց Տփխիսի Հայոց Հրատարակչական ընկ. և 6 տարի խմբագրա-



կան մասնաժողովի անդամ եղաւ։ 1900 թ. Պարսկաստանի Կեդրոնական Կրթական Յանձնաժողովի անդամ ընտրուեցաւ։ Հ. Ա-ի գրական գործունէութիւնը սկսւում է 1872 թուականից, երբ նա սկսեց Թաւրիզից թղթակցել «Մշակ»-ին (տես «Մշակ» № 15)։ Այնուհետև նա շարունակեց փոքրիկ ընդհատումներով, տալով հասարակական-բանասիրական և մատենախօսական յօդուածներ, իսկ 1893 թ. սկսեց «Մշակ»-ում առաջնորդող յօդուածներ գրել։ Աշխատակցել է «Հայկական աշխարհ», «Մեղու Հայաստանի», «Գործ», «Արևելք», «Հայրենիք», «Հանդէս Ամսօրեայ», «Արարատ», „Новое Обозрѣніе", „Новости", „С.П. Бург. Вѣдомости", "Русскій Курьеръ", „Моск. Телеграфъ" „Phare de Risphore" (Կ. Պոլիս) պարբերականներին։ Գր. վաստ.—ա) *Պատմութիւն խաչակրութեան եւ թագաւորութեան Երուսաղէմայ* Վաղ. 1874. բ) *Խրիմեան Հայրիկի կաթողիկոսական ընտրութիւնը* Տ. 1893. գ) *Զէյթուն*, տեղագրութիւն Տ. 1896. դ) *Ազգայնութիւն եւ նրա պրինցիպները* Տ. 1883. ե) *Գալիլէյ* Տ. 1899. զ) *Միլտոն* Տ. 1900. է) *Պարսկաստանի հայերը, նրանց անցեալը, ներկան եւ ապագան.* ը) *Ճանապարհորդութիւն Թաւրիզից Նախիջեւան.* թ) *Հանրագիտակ բառարան* (*մամուլի տակ*). ժ) *Նապոլեոնիա թարգ. են։ Բացի այս* ա) Le Babisme en Perse. բ) La question Armenienne. գ) Бабизмъ Տ. 1901։ Թարգմանել է.

ա) *Առողջապահական ընթերցանութիւն նեղ եւ խոնաւ բնակարանների մասին* Տ. 1880. բ) *Վիլհելմ Տէլլ* (համառօտ) Տ. 1892. գ) *Քսան վէպիկներ եւ զրոյցներ* Գի դը Մօպասանի, Տ. 1897. դ) *Ուրանիա*, Ֆլամարիոնի Տ. 1900. ե) *Գոռոզ Ազգէն*, Գարշինի Տ. 1895. զ) *Ճանապարհորդ զորտ*, Գարշինի. Տ. 1895. է) Գր. Արծրունու *Թիւրքաց հայերի տնտեսական դրութիւնը* Տ. 1894 և այլն։ Անտիպ.—ա) *Քրիստոնէական եկեղեցու պատմութիւնը*. բ) *Հայաստանի աշխարհագրութիւնն եւ Հայրենագիտութիւն*. գ) *Պատմութիւն Պարսից* (2 հատոր). դ) *Պատմութիւն Թիւրքիայի* և այլն *)։

ԱՒԱՔԵԼԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴՊԻՐ, ՍԱՐԿԱՒԱԳ =ԱՂԱՆԵԱՆ ԳԻՒՏ Ա. Ք.

ԱՍԱՏՈՒՐ ՀՐԱՆՏ — Նշ. տաճկահայ գրագէտ-հրապարակախօս. ծն. Կ. Պոլսի Պոյաճի գ. 1862 օգոստոս 10-ին։ Մի առ ժամանակ նա ուսաւ Ռօբէրտս քոլէճում, իսկ յետոյ թողեց ուսումնարանը և 1881-ին գնաց Փարիզ, ուր նա մտաւ իրաւաբանական ուսումն., ուր 1884-ին ուսման շրջանն աւարտելով Կ. Պոլիս վերադար-

---

*) Վերջերս «Հանրամատչելի գրադարան» անուան տակ սկսել է գրքեր հրատարակել։ Այդ գրադարանին են պատկանում Եապօնիա, Անդերսէնի հէքիաթները են։

ձաւ։ Կ. Պոլիս հասած օրից նա եռեաց գրական և հասարակական ասպարէզում և մի առ ժամանակ ստանձնեց Կիլիկեան և Միացեալ ընկերութեանց ատենադպրի պաշտօնը, իսկ 1889—1896 թ. Ղալաթիոյ Կեդրոնական վարժարանի խնամակալների ժողովի անդամակից ընտրուեցաւ, իսկ վերջերս նոյն դպրոցի բարձրագոյն դասարանների աշխարհաբարի և գրագիտութեան ուսուցիչնը-շանակուեցաւ, որ պաշտօնում է և այժմ։ Նրա գրական գործունէութիւնը սկսւում է 1874 թ., երբ նա 12 տ. հասակում թարգմանեց և տպեց *Պատմութիւն Մալվինայի* գիրքը։ 1892 թ. Հ. Ասատուրը Գրիգոր Զոհրապի հետ սկսեց «*Մասիս*» հանդէսը հրատարակել, որի մէջ տպուեցան նրա մի շարք ուսումնասիրական յօդուածները։ 1898 թ. այդ երկուսին աւելացաւ և տիկին Սիպիլը (տ. Զապէլ Տօնելեան) և երեքով սկսեցին «Մասիս»-ը խմբագրել մինչև 1899 թ., որից յետոյ Հ. Ա. սկսեց զբաղուել լուրջ ուսումնասիրութիւններով։ Նրա գրաւոր գործերը ցրուած են «Մանզումէի էֆքեար», «Թէրճիմանի էֆքեարի», «Մա-

սիս», «Արևելք» (1884 թուականից Արաքս տոր-
ագրութեամբ) թերթերում, որոնք ի միասին
վերցրած մի քանի հատորներ կարող են կազ-
մել։ Հ. Ա. 1900 թուականից սկսած խմբա-
գրում է Պօլսոյ ս. Փրկչեան ազգային հիւան-
դանոցի օրացոյցը, որը իր ճոխ բովանդակու-
թեամբ ոչ տաճկահայոց և ոչ էլ ռուսահայոց
մէջ նման ունի. նրա մէջ կարող էք գտնել ա-
մենաճշգրիտ տեղեկութիւններ բոլոր պետու-
թիւնների մասին, Հայոց եկեղեցու նուիրապե-
տութեան ահագին տեղ է տուած, վիճակագրա-
կան տեղեկութիւններ հայոց եկեղե-
ցեաց, վանօրէից, ուսումնարանաց և այլ բա-
նների մասին, մէկ խօսքով նա ոչնչով ետ չէ
մնում Кавказскій календарь կոչուած օրացոյ-
ցից և դեռ աւելի հարուստ է։ Մեր բոլոր պա-
տի և ծոցի օրացոյցների հրատարակիչների
գլխաւոր աղբիւրը նա է *)։ Հ. Ա. թարգմանել
է Վ. Հիւգոյի Դամբանականները։ Գր. վաստ.—
ա) Պատանեկան ներշնչումներ Կ. Պ. 1879. բ)

---

*) Այս օրացոյցից գոյացած գումարը ս. Փրկչեան հիւանդանոցին է յատկացրած։ 1902 թ. գոյացել է 99010 ղրուշ (7920 ր. 80 կ.)։ 1904 թ. օրացոյցն ունի 567 էջ, չը հաշուած յայտարարութիւնները։ Ի միջի այլ յօդուածների հետաքրքիր են «Օրացոյցի պատմութիւնը», «Նշանաւոր վախճանեալներ», Երաժշտական յաւելուածն և այլն։ Արժէ 10 ղրուշ (80 կ.) որ համեմատաբար չափից դուրս էժան է։

Պատմութիւն ս. Փրկչեան ազգ. հիւանդանոցի Կ. Պ. 1888. գ) *Կ. Պոլսոյ Հայերը եւ իրենց պատրիարքները* 1461 –1858 *թ.* (*տպուած է* 1901 *թ. ս. Փրկչեան Հիւանդան. Օրացոյցի մէջ*). ևն։

ԱՍԼԱՆԵԱՆ ԹԱԳԻՈՐ ՎԱՐԺԱՊԵՏ.—*Կարծում են ծնուած լինի Կ. Պոլսի Ենի գարու թաղում, ապրում էր ԺԹ-րդ դարու առաջին քառորդում, նշանաւոր հայկարան և աստուածարան էր։ Թաղուր վարժապետը, որին «պատրիարքարանի իմաստասէրճ տիրացու» է անուանում պատրիարքութեան պատմիչը, լինելով Պօղոս Ադրիանուպոլսեցի պատրիարքի սիրելի և բարեկամ՝ երկար ժամանակ ծառայեց նրա մօտ որպէս նոտար-քարտուղար։ Ինչպէս յայտնի է, Պօղոս պատրիարքը փորձ արեց դադարեցնել հայ առաքելականների և հայ կաթոլիկների միջև եղած վէճերը, և այդ հարցերը վճռելու համար* 1816 *թուականից սկսած մի շարք ժողովներ եղան, որոնց մէջ մեծ դեր էր խաղում Թաղուր վարժապետը, մանաւանդ* 1820-*ին, երբ նա հաշտեցուցիչ յանձնաժողովի աշխարհական անդամի դեր էր խաղում։ Թաղուր վարժապետը ջերմ ջատագով հանդիսացաւ հայրենի եկեղեցուն և պաշտօնական գրութեանց մէջ շարունակ գրչակոծ էր անում կաթոլիկներին։ Թ. Ա. միևնոյն ժամանակ կրօնական գրքերի սրբագրիչ էր և պատրիարքական բոլոր գրութիւն-*

ները նա էր խմբագրում, որոնցից մէկի համար, որ էջմիածին էր ուղարկուելու նոյն Պօղոս պատրիարքի օրով հալածանքի ենթարկուեցաւ։ Մ. Կ. Պոլսում, տարին անյայտ։

ԱՍԼԱՆԵԱՆ ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ.—Պետական և պատրիարքական տաճկահայ գործիչ. ծն. Կ. Պոլսում 1822 դեկտ. 22-ին։ Կրթ. ստացաւ Սկիւտարի ճեմարանում և ապա Գալաթիա Սէրայի ուսանող գրուեցաւ։ 1848-ին բժշկական վկայական ստանալով, անցաւ Վիեննա և այնտեղի համալսարանից էլ նոյնպիսի վկայական ստանալով Կ. Պոլիս գնաց։ 1870-ից զինուորական բժշկական ճիւղի սպարապետութեան անդամ ընտրուեցաւ և նոյն տարի փաշայութեան արժանացաւ։ 1877-ին կառավարութիւնը նրան Եւրոպա ուղարկեց բժիշկներ հրաւիրելու համար։ Բացի բժշկական ասպարէզում ունեցած պաշտօնների նա Տաճկաստանում ուրիշ պաշտօններ էլ վարեց, ինչպէս օրինակ 1863—64 թ. Հանրային կրթութեան վարիչ անուանուեցաւ։ Իբրև ազգային գործիչ նա ասպարէզ եկաւ 1846-ին, երբ նա Բերայի Նարեկեան վարժարանի հոգաբարձու ընտրուեցաւ։ 1859-ին ընտրուեցաւ Գերագոյն ժողովոյ ատենապետ, իսկ 1863-ին անդամ Քաղաքական ժողովոյ, որ պաշտօն վարեց նա բաւական երկար ժամանակ և 1896—1901 թ. կրկին անդամ։ 1875—80 թ.

պատրիարքական ժողովի ատենապետ եղաւ, 1879-ին Երուսաղէմի, իսկ 1883-ին էլ Եգիպտոսի պատուիրակ։ Մ. Կ. Պոլսում 1901 թ. նոյեմբեր 17-ին։

ԱՍԿԵՐԵԱՆ Հ. ՎՐԹԱՆԷՍ Վ.—Մբ. Վտ. Մխ. ծն. Կ. Պոլսում 1720 մարտի 15-ին։ 1830-ին ղրկուեցաւ Վենետիկ, ուր աշակերտեց Մխիթարին և 1743-ին վարդ. ձեռնադրուեցաւ։ Մխիթարի մահից անմիջապէս յետոյ իբրև քարոզիչ Կ. Պոլիս ղրկուեցաւ և 1751-ին ետ կանչուելով աթոռակալ ընտրուեցաւ, իսկ յետոյ Վենետկի առաքելական-լուսաւորչական հայոց ս. Խաչ եկեղեցու աւագերէց նշանակուեցաւ *)։ Վախճ. 1810 յունուար 12-ին Վենետիկում։ Հ. Ասկերեանն եօթը տարի շարունակ զբաղուեցաւ Աստուածաշունչ գրքի հայ և լատին թարգմանութեանց համեմատութեամբ։ Գր. վաստ.— (տպ. Վտ.) Մշտնջենաւոր պարզատումար եկեղեցական 1782։ Թարգմանել է.—ա) Թովմաս գեմբացի 1786 և 1853. բ) Խնամատարութիւն քարոյական Էմ. Թեսաւրոսի 1793 և 1853. գ) Խոկմունք Քրիստոնէականք 1771. դ) Խրատք կրօնաւորական կատարելութեան 1779. ե) Քարոզգիրք եօթնկարգեան 1781. զ) Փիլիսոփայու-

*) Այդ եկեղեցին վաղուց գոյութիւն ունէր և հիմնուեցաւ հայ վաճառականների ծախքով, որոնք վաղուց առևտուր էին անում այնտեղ։

թիւն Կովդնի 1750. է) *Պատմութիւն Հռովմէական* Ռօլէնի 1816—17։

ԱՍՏՂԻԿ (օր. ԳԱՆԹԱՐԵԱՆ).—Անդրանիկ հայ դերասանուհի, աղջիկ Սահակ Գանթարեանի, որը Կ. Պոլսում կառքերի գործարան ունէր, քոյր տիկ. Սիրանոյշի. ծն. Կ. Պոլսի Բերա թաղում 1855 թ.։ 1871 թ. աւարտելով իր թաղի օրիորդաց վարժարանը 16 տ. հասակում բեմ դուրս եկաւ Վարդովեանի խմբում (Կ. Պոլիս) և առաջին անգամ խաղաց Մոլիէրի «Դոն-Ժուան»-ում երկրորդ կնոջ դերը։ Առաջին թատերաշրջանին նա խաղում էր Կէտիկ փաշայի թատրոնում, իսկ երկրորդ թատերաշրջանին Մաղաքեանի թատերախումբ մտաւ (որի խնամակալն էր Յակոբ Պալեան) և սկսեց խաղալ Միջագիւղի թատրոնում։ 1879-ին տիկ. Սիրանոյշի հետ Տփխիս հրաւիրուեցաւ, ուր նա խաղում էր իշխ. Ամատունու խմբում։ Այդ ժամանակ Տփխիսը յափշտակուած էր երկուսով—Աստղիկ և Ադամեան։ Երկու տարի խաղալով Տփխիսում 1880 թ. վերջերը վերադար-

ձաւ Կ. Պոլիս և սկսեց խաղալ տեղական թատրոններում։ Ինչպէս այդ ժամանակ, այնպէս էլ մինչև Տփխիս գալը նա խաղացել է Զմիւռնիա, Պրուսա, Աղրիանուպոլիս, Սալոնիկ և այլ հայաբնակ գաւառաքաղաքներում։ Նա մեռաւ Կ. Պոլսում 1884 մայիս 16-ին սառամոքսի հիւանդութիւնից և թաղուեցաւ Բերայի գերեզմանատան։ Որտեղ և Աստղիկը բեմ է դուրս եկել, ամեն տեղերում էլ հասարակութիւնը յափշտակուել է ու սիրալիր ընդունելութիւն ցոյց տուել։ Խաղացել է տիկ. Սիրանոյշի դերերը։ Բէպէրտուար՝ Քոյր Թերեզա, Կամելիա, Լիւսիդիդիէ, Կատերին Հովարտ, Անջելո Մալիպիէրիի, «Սէր առանց համարման»-ի մէջ և այլն։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՄԱԴԱՆՑԻ. —Կաթողիկոս ամենայն հայոց, յաջորդեց Աղէքսանդր Ջուղայեցուն, ընտրուեցաւ 1715 թ. մայիս 7-ին։ Այս կաթողիկոսը Մայր տաճարի մէջ կարևոր նորոգութիւններ կատարեց, բայց ապրելով Հայոց երկրի ասպատակութեան ժամանակներում՝ թափառական կեանք էր վարում և ժողովրդին սփոփելու համար շարունակ շրջում էր։ 1725 թ. հոկտ. 10-ին Օշական գիւղում եղած ժամանակ, լուսնի խաւարումը յայնագիր պատուհանից դիտելու ժամանակ վայր ընկաւ և չորս ժամից յետոյ վախճանուեցաւ։ Մարմինը

Էջմիածին տեղափոխուեցաւ և Հռիփսիմէի վանքի բակում հողի յանձնուեցաւ։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԱՍՈՒՆՑԻ, նարին կոչուածը, կաթ. Տանն Կիլիկիոյ, ընտրուեցաւ 1691-ին, վախճ. 1694-ին։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՕԼՍԻ.— Ծն. Կ. Պօլսում 1768-ին և աշակերտեց Զաքարիա պատրիարքին։ 1805-ին եպ. ձեռնադրուեցաւ։ 1820-ի կրօնական վէճերի ժամանակ 24 օրով բանտարկուեցաւ իբրև առաքելական հայոց աղմկարար։ 1841-ի սեպտ. 19-ին Կ. Պօլսի պատրիարք ընտրուեցաւ և ընտրող ամիրաները նրան ուզեցին իրենց ձեռքի խաղալիկ շինել, և որովհետև ամիրաների ու արհեստաւորների միջև մեծ տարաձայնութիւններ էին ծագել, ուստի և հոկտ. 3-ին Իւսկիւտարի ճեմարանը, որ կրոնապատճառ էր դարձել, փակուեցաւ։ Աստ. պատրիարքը տեսնելով որ արհեստաւորների պահանջն իրաւացի է, նրանցից 27 հոգաբարձու ընտրել տուեց, որոնք իրենց ձեռքն առան ազգային-պատրիարքական գործերի դեկը և 1841 դեկտ. 12-ին հաստատուեցան։ Արհեստաւորաց հոգաբարձութիւնը գործելով առանց ամիրաների, անընդունակ գտնուեցան և ստիպուած եղան հրաժարուելու։ Գործերի խառն դրութեան պատճառով թէ արհեստաւորները և թէ ամի-

բանները զինուեցան Աստուածատուրի դէմ և նա 1844 յուլիսին ստիպուած եղաւ հրաժարուելու, ու քաշուեցաւ Իւսկիւտար, որտեղ և վախճ. 1846 յունուար 2-ին և թաղուեցաւ Պաղլար Պաշիի գերեզմանատան։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՄԵՐԴԻՆՑԻ. — Պատրիարք Երուսաղէմի, որ ընտրուեցաւ 1532 թ.։ Սրա օրով պատահեց Ծռազատիկը, որի համար Աստ. ընդհարուեցաւ յունաց հետ և բողոքեց սուլթանին։ Սրա օրով շինուեցաւ Երուսաղէմի պարիսպը։ 1542-ին հրաժարուեցաւ Աստուածատուրը և նրա տեղ ընտրուեցաւ Անդրէաս եպիսկոպոսը *)։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՋՈՒՆԴ. — Բարերար, ծն. Աստրիոյ Սուչաւա հայաքաղաքում 1825 օգոստ. 14-ին հայ-առաքելական ազնուական ծնողներից։ Սկզ. կրթ. ստացաւ նոյն քաղաքի հայոց վարժարանում, յետոյ գերմանական ուսումնարանում, որը կիսատ թողնելով, 1837-ին զբբ-

*) Զը գիտեմ ինչ աղբիւրից է վերցրել ս. Փբրկչեան օրացոյցի խմբագիրը, որ Աստուածատուր Մերտինցուն համարում է երկու անգամ պատրիարքացած՝ 1523—1544 և 1564—1566, որ տարին և վախճանուել է։ Բայց ըստ մեր աղբիւրի նա 1542-ին հրաժ. ծերութեան պատճառով։ (Ժամանակագր. պատմ. Երուսաղէմի հատ. Ա.)։

կուեցաւ Վիեննա՝ Մխիթարեանց վարժարանում ուսանելու։ Այնտեղ ուսումն աւարտելով հօր մահից յետոյ, գնաց նախ Զմիւռնիա, ապա Կ. Պոլիս և յետոյ էլ կրկին Վիեննա, իսկ 1850-ին Սուչաւայի հայոց ուսումնարանի վերատեսուչ նշանակուեցաւ։ Ուսումնարանին մատուցած ծառայութիւնների համար սիրուեցաւ նա իր հայրենակիցներից, իսկ կառավարութիւնն էլ այլ և այլ արտօնութիւններ շնորհեց։ 1853-ին թողեց այդ պաշտօնը, գընաց Կ. Պոլիս, ուր շրջուելով հայ նշանաւոր ընտանիքներին նրանցից մէկի որդուն Փարիզ տարաւ։ Վիեննայով անցնելիս պետութիւնը նրան պաշտօնի հրաւիրեց, սակայն նա մերժեց և երեք տարի յետոյ վերադառնալով Կ. Պոլիս՝ պետական վայտի մատակարարութիւնն իր ձեռքն առաւ։ Այս շահաւէտ գործը նրան հարստութեան տէր դարձրեց և նա վերանորոգեց ս. Փրկչեան ազգային հիւանդանոցը, վեց տարի էլ Նուբար Զահնազարեան վարժարանի խնամակալ և ատենապետ եղաւ։ Նա իր անունն անմահացրեց *Ջունդեան հիմնարկութիւն* (Fonda-



tion Chevalier Czunt) կոչուած 60 հազար ֆրանքի կտակով։ Այդ գումարը պէտք է մնայ Աւստրիոյ դրամատան մէջ և տոկոսով եւրոպական համալսարաններում հայ ուսանողներ պէտք է պահուին։ Կտակի գործադրութիւնը յանձնուած է Կ. Գօլսոյ Յ. Իզմիրեանց Գրական-Յանձնաժողովին։ Ջունդը Աւստրիայի Միջազգային Դատարանի դատաւորի պաշտօնն էլ է վարել և Գօլսոյ Աւստրիական գաղթականութեան մէջ գործօն դեր խաղացել։ Եղել է անդամ եւրոպական բազմաթիւ ընկերութիւնների, ստացել է շքանշաններ, իսկ Աւստրիոյ Փրանցիսկ Յոսէփ կայսրը նրան պատուել է իւր և երկաթէ թագի շքանշաններով, 1875-ին էլ կայսերութեան ասպետի տիտղոս ստացաւ, որով և նրան շնորհուեցաւ ժառանգական ազնուականութիւն։ Մ. 1897 փետր. 19-ին Փարիզում։ Նա գրաղուել է գրականութեամբ. Կ. վ. Զահնազարեանի առաջարկութեամբ հայերէն է թարգմանել Ergaenzungsblatt-ի մէջ եղած հայոց վերաբերեալ յօդուածը։ Նա ֆրանսերէն է թարգմանել Առաքել Դաւրիժեցու պատմագրութիւնը, սակայն լսելով որ Բրոսէ հայագէտն արդէն թարգմանել ու տպել է, իրենը թողել է անտիպ։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ. — Պատրիարք Կ. Գօլսոյ, աշակերտ Դերջանցի Մաղաքիա վարդապետի, ընտրուեցաւ 1537, վախճ. 1550 թ.։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՏԱՐՕՆԵՑԻ. — Պատրիարք Երուսաղէմի, աշակերտ Գրիգոր Պարոն Տէր Երուսաղէմի պատրիարքի, ընտրուեցաւ 1645-ին իր նախորդի կտակի համաձայն։ Մատենագրի ասելով «յաւուրս իշխանութեան սորա պատահեցան ձախորդութիւնք դիպուածք մեծամեծք և ցաւք անբուժելիք»։ Աստուածատուր պատրիարքը ընդհարուեցաւ նեստորականներին, նորոգեց ս. Հրեշտակապետի վանքը, ս. Փրկչի ու ս. Յակոբայ վանքերը։ Մի առ ժամանակ աթոռազուրկ մնալով, նա նորից հաստատուեցաւ իր աթոռի վրայ։ Հապէշների առաջնորդը առ ժամանակ հեռանալով Երուսաղէմից՝ իրենց վանքերը Աստուածատուր պատրիարքին յանձնեց, սակայն յունաց պատրիարքը նախանձելով խլեց հայերից և այս պատճառով մեծ խռովութիւն ծագեցաւ։ Այս պատճառով նա 1656-ին Կ. Պոլիս գնաց և Եղիազար Անթապցի վարդապետի միջոցով իր գործերն աւարտած Երուսաղէմ վերադարձաւ, սակայն վէճը շարունակուեցաւ և յոյներն ս. Յակոբայ վանքի վրայ էլ բռնացան։ Այս անգամ մեծ դեր էր խաղում Եղիազար վ., որին Աստուածատուրը խոստացել էր պատրիարքական աթոռը։ Զը նայած այս խռովութիւններին, մի նոր խռովութիւն էլ ծագեց և պատճառն Եղիազար վ. էր, որ կամեցաւ Երուսաղէմում կաթողիկոսանալ և յափշտակեց պատրիարքութիւնը, որի համար

երկրի պետերին կաշառեց։ Աստուածատուրն էլ նոյն միջոցներով վերստին պատրիարքացաւ։ Վխճ. 1671 խոր ծերութեան մէջ և թաղուեցաւ ս. Փրկչի վանքում*)։

ԱՏՐՊԵՏԵԱՆ, ԱՏՐՊԵՏ (Սարգիս Մուրայաճեան).—Վիպասան. ծն. Կարս քաղաքում տաճկաց տիրապետութեան ժամանակ, 1850 յունուար 21-ին։ Սկզ. կրթ. ստացաւ Բաղէշցի Գրիգոր պատուելու մօտ, 1869—71 թ. ծխ. ուսումնարանում, իսկ 1871—72 կաթոլիկաց դպրոցում։ 1873-ին գնաց Ալէքսանդրոպոլ ուսումը շարունակելու նպատակով, և այնտեղից էլ անցաւ Կ. Պոլիս, ուր մտաւ Վեննայի Մխիթարեանց ուսումնարանը հանգուցեալ Ա. վ. Այտընեանի օրով։ Այնուհետև մտաւ Օսմանեան լիցէոն և այդտեղից էլ, մինչև 1878 թ. ուսանելուց յետոյ, չ'աւարտած դուրս եկաւ։ 1881-ին վերադարձաւ Կարս և տեղւոյն հայոց երկսեռ ծխ. ուսումնարաններում մինչև 1888 թ. ընդհանուր պատմութեան ու աշխարհագրութեան ուսուցիչ եղաւ։ Միևնոյն ժամանակ ընտրուեցաւ նաև քաղաքային պատգամաւոր (депутатъ)*)։

---

*) Ըստ ս. Փրկչեան Օրացոյցի պատրիարքացել է 1647 և մնացել մինչև 1666 թ., յաջորդ տարին կրկին մի տարի, 1670 կրկին և վխճ. 1672-ին։

*) Քաղաքային պատգամաւորներ կամ դեպուտացիան համարեա միևնոյն ձևի կառավարութիւն է, ինչ

1889-ին ուսուցչական ասպարէզը թողնելով տեղափոխուեցաւ Բագու և սկսեց ծառայել նաւթագործարաններում։ 1893-ին անցաւ Թաւրիզ դատարանական գործերը վարելու և 1895-ին կրկին եկաւ Կովկաս։ 1898-ին գնաց հարաւային Ռուսաստան մասնաւոր գործերով, սակայն քիչ ժամանակից յետոյ անցաւ Պարսկաստան՝ Թաւրիզ ք. և 1899 մայիսից սկսած մինչև այժմ գրաղւում է դատարանական գործերով։ Ատրպատի առաջին գրական աշխատութիւնն է *Ղեւ Կարապետ* վէպը, որ լոյս տեսաւ 1889 թ. «Մուրճ»-ի մայիսի համարում և առանձին գրքով։ Աշխատակցել է «Մրշակ»-ին, «Աղբիւր»-ին, «Ծաղիկ»-ին և «Գաղափար»-ին։ Գր. վաստ.—ա) *Շուշան* (օպերա 3 գործ.) ՍՊԲ. 1890. բ) *Ալմաստ* վէպ Բարձր Հայոց իրական կեանքից Մ. 1891. գ) *Ղաղի.* դ) *Արդար դատաստան* քննադ. ե) *Թուլումբաջիներ* Ն. Նախիջ. 1899. զ) *Սարբաջ*,

---

որ քաղաքային ինքնավարութիւնը։ Առաջ կառավարութեան այդ ձևը սովորական էր և քաղ. ինքնավարութիւններ բացուելով ոչնչացաւ։ Դեպուտատներ ընտրուում էին ժամանակաւոր և ոչ մշտական։

ողբերգ. Տ. 1893. է) *Սուլթանը խաչիՔ չէ.* ը) *ԽաչիՔաթ.* թ) *Ժառանգներ*, պատկեր Ն. Ն. 1899. ժ) *Քոռ Եղիկ*, վէպ. Տ. 1898. ժա) *Բերսայի Առաքելը* վէպ Ն. Ն. 1893. ժբ) *Շինոց*, պատկեր Ն. Ն. 1898։ Բացի այս ունի բազմաթիւ վէպիկներ ու պատկերներ. *Քիւրհանբէյ, Կաղ Նազօ, Խառա-Խրխա, ՍօՔթա, Ոսկէ որդին, Այիշէ-խանում, Օսմանեանների 600 ամեակը, Հաւթեան, Հաքազիստներ, Երախտապահանջ, Կուռք, Սեւ քաղաք, Ծպտեալ Սուլթան, Փաշա, Վիւքալայի գաղտնիքը, Երախտիք, Քըրդերը Պարսկաստանում* և այլն տպուած ու անտիպ բազմաթիւ գրուածքներ, որոնք մեծ մասամբ Կարսումն է թողել հեղինակը։



ԱՐԱՄԵԱՆ ՃԱՆԻԿ.—Արհեստաւոր հայ գրագէտ, նշանաւոր տպագրիչ, ծն. Տաճկաստանի Նիկոմիդիա Ք. 1820 թ.։ Հայրը, որ մի հասարակ արհեստաւոր է եղել, որդուն ուղարկեց Կ. Պոլիս արհեստ սովորելու և նա էլ մտաւ դերձակի մօտ աշակերտ։ Պոլսում արհեստի հետ զուգընթացաբար նա սկսեց մայրենի լեզուն սովորել, իսկ ազատ ժամերն էլ նուիրեց տպագրական գործին, որի համար և

տպարան էր յաճախում և սովորում։ 1846-ին Փարիզ գնաց և սկսեց դերձակութեամբ զբաղուել, իսկ փոքր ինչ նիւթապէս ապահովուելուց յետոյ հայերէն տառեր ձուլել տուեց և Վալ'տերի տպարանում հայերէն գրքեր տպագրեց։ Շուտով կարողացաւ սեպհական տպարան բանալ և 1859 թ. սկսած նրա տպարանումն էր տպագրւում Ստեփան Ոսկանի «Արևմուտք» կիսամսեայ հանդէսը։ 1862-ին նա տպարանը ծախեց և Կ. Պոլիս տեղափոխուեցաւ, այնտեղ էլ տպարան բացեց։ Ինչպէս Փարիզում, այնպէս էլ Կ. Պոլսում նա բաւական օգտակար գրքեր տպագրեց՝ մեծ մասամբ դասագրքեր։ Մ. 1879 թ. ապրիլ 16-ին Կ. Պոլսում և Խան գիւղի գերեզմանատանը թաղուեցաւ։ Ա. ճ. հազուադիւտ աշխատասէր ու գործունեայ մարդ է եղել։ Գր. վաստ.—ա) *Դասարան Հայկազն մանկանց* Փ. 1860 *). բ) *Բառագրքուկ հայ-զաղղ-*

*) Այս գիրքը շատ հետաքրքիր է և գիտութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ տեղեկութիւններ է պարունակում (սրբազան, ազգային և ընդհանուր պատմութիւն, հայոց լեզու, կենդանաբանութիւն, դիցաբանութիւն, առաջ, թուաբանութիւն, երաժշտութիւն, աշխարհագրութիւն և այլն) զարդարուած է 200-ից աւելի պատկերներով և Հայաստանի փոքրագիր քարտէսով։ Պէտք է նկատել, որ առանձին խնամքով են տրպուած պատկերները և հաւանական է որ մեծ ծախսով էլ փորագրուած պէտք է լինեն։ Այս գրքից մի օրինակ էլ կայ մեր գրադարանում։

Փ. 1860. դ) *Դիտողութիւն ի վերայ տեղեկագրի կաթողիկոսական յանձնաժողովոյ* Կ. Պ. 1866. զ) *Ռուսիա եւ ընդհ. ժողով Հայոց ի Կ. Պոլիս*, Կ. Պ. 1866. ե) *Զէյթունցիք եւ Հուսաւորչական Հայք* Կ. Պ. 1867. զ) *Ընդունելութիւն Ընծայի* և այլն։

ԱՐԱՄԵԱՆ ՄԻՍԱԿ բժիշկ. — «Մեղու»-եան շրջանի գործիչ, ծն. Կ. Պոլսի Սամաթիա թաղում 1845՝ թ.։ 6 տարեկան հասակում ծնողները նրան յանձնեցին ոմն Բարսեղ վարժապետի խնամքին գրել կարդալ սովորելու համար, իսկ յետոյ Սամաթիոյ թաղային վարժ.։ Միսակի հայրը լինելով դերձակ՝ արհեստաւոր, իր որդուն էլ ուզեց արհեստի տալ և մի ոսկերչի մօտ արհեստը սովորելու համար աշկերտ տուեց, սակայն մայրը տեսնելով որ իր որդին արհեստի գլուխը չունի ու խելքն ու միտքը ժամի ու գրքի վրայ է, համոզեց հօրը և 1857-ին նրան տուեցին ս. Փրկչեան ճեմարան։ Կ. Պոլսի Մատթէոս պատրիարքը Ներսէս Ե. Աշտարակեցու մահից յետոյ ամենայն Հայոց կաթողիկոս ընտրուելով՝ 1859-ին դէպի Էջմիածին ճանապարհ ընկաւ։ Ինչպէս յայտնի է կաթողիկոսին ուղեկից էին մի շարք հայ գրագէտներ ինչպէս Մ. Աղաբէկեանը, Աւետիս վարժապետ Պէրպէրեանն և այլք և ահա դոցա մէջն էր և Արամեանը, որին կաթողիկոսը հրամայեց տեղաւորել Ներս-

դպրոցում։ 1861-ին Արամեանն աւարտելով դասընթացը, մտաւ գիմնազիա, ուր մեծ յառաջադիմութիւն ցոյց տուեց և 1868-ին յաջողութեամբ աւարտեց։ Նոյն տարին, երբ յառաջադէմ աշակերտ պետական հաշուով ուղարկուեցաւ Մոսկուա բժշկականութիւն սովորելու։ 1873 թ. նա երբ բժիշկ Կովկաս եկաւ և արքունական բժշկի պաշտօնը ստանձնեց, որ և շարունակում է ցարդ և ապրում է Սալիանում։ Պէտք է նկատել, որ իր գալու օրից արդէն նա յայտնի է իբրև հասարակական գործիչ։ Նրա գրական գործունէութիւնը սկսւում է «Կռունկ»-ում տպուած յօդուածներով, որ գրել է նա աշակերտական նստարանից։ Այնուհետև նա շարունակաբար աշխատակցել է «Մեղու Հայաստանի» և յետոյ էլ գլխաւորապէս «Նոր-Դար» թերթերին։ Գր. վաստ. —*Սալիանից Էջմիածին* 8. 1887 (ճանապարհորդական յիշատակարան)։

ԱՐԱՊԵԱՆ ՊՕՂՈՍ ԱՊՈՒՇԵԽՑԻ.—Նշանաւոր Պոլսահայ տպարանատէր. ԺԹ-րդ դարու առաջին քառորդում Կ. Պոլսում մի տպարան հաստատեց, որ իր ընդարձակութեամբ առաջին տեղն էր բռնում։ Այս տպարանում մի շարք պարբերական հանդէսներ են տպուել՝ «Ազգաբար Բիւզանդեան», «Սուրհանդակ Բիւզանդեան», «Նոյեան Աղաւնի և 1856-ին էլ «Զուարճախօս»-ը։ 1820 թ. սկսած այս տպարանից են դուրս ե-

կել Բան հրաւէր սիրոյ, Պատմութիւն Մարինայ կուսին, Շարական և այլ հոգևոր բովանդակութեամբ գրքերը։ Պ. Արապեանը մեռել է Կ. Պոլսում 1831—1833 թ. միջոցին, իսկ տպարանն երկար գոյութիւն ունեցաւ։

ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ ԱԻԵՏԻՔ.—«Մուրճ» ամսագրի հիմնադիր խմբագիր. ծն. Ագուլիսում 1857 փետրուար 13-ին։ Սկզ. կրթ. ստացաւ մասնաւոր անձանց մօտ, 1867-ից տեղոյն ծխ. ուսումնարանում, իսկ 1870-ին գնաց Տփխիս և 6 ամիս պարապելով մբտաւ Ռէալական ուսումնարանի Բ. դասարան։ 1876-ին աւարտեց դասընթացն ու գնաց Գերմանիա քաղաքատնտեսութիւն ու իրաւաբանութիւն սովորելու։ 1876/78 լսեց Լայպցիգի, 1878/79 Փարիզի, 1879/82 Սարպրուրգի համալսարաններում և դոկտորի աստիճան ստացած 1882 հոկտեմբերին Տփխիս վերադարձաւ։ 1883/85 Ներս. և Գայիանեան դպրոցների ընդհանուր պատմութեան դասատու եղաւ, իսկ 1885 թ. Պետական կալուածոց Նա-

խարարութեան յանձնարարութեամբ գրկուեցաւ Նուխու և Արէշի գաւառների պետական հողեր ունեցող գիւղացիների տնտեսական դրութիւնն ուսումնասիրելու, որ և վերջացրեց 1886-ին։ 1887/88 դարձեալ շարունակեց Ներս. դպ. ընդհատած դասաւանդութիւնը։ 1889 սկսեց «Մուրճ» հրատարակել, որ մի ժամանակ մեր մէջ լուրջ ամսագիրներից մէկն էր *)։ Արասխանեանը 1875—87 թ. «Մշակ»-ի գլխ. աշխատակիցներից մէկն էր և գլխաւորապէս առաջնորդող յօդուածներ է գրել։ Միևնոյն ժամանակ նա աշխատակցել է եւրոպական, ռուս և հայ թերթերին («Արձագանք»-ին) տալով հրապարակախօսական, տընտեսական, սոցիալական և այլ յօդուածներ։ Իր մի դասախօսութեան համար, որ նա կարդացել է 1881-ին Փարիզի ու Սարատովի ակադէմիական ժողովներում, ստացել է ֆակուլտ. պրէմիա։ Մասնակցել է Հայոց հասարակական գործերին և 1883 թ. մի շարք դասախօսութիւններ է կարդացել աշխարհային կեանքի

*) 1901 թ. «Մուրճ»-ը նոր խմբագրի ձեռն անցաւ՝ Ա. Արասխանեանցը «Մուրճ»-ը ծախեց Կրասիլնիկեանին և այդ տարուանից «Մուրճ»-ի վրայ դրուեցաւ նոր շրջան I տարի, դիրքը նոյն մնաց, միայն մի քիչ հաստացաւ։ Կրասիլնիկեանն էլ շուտով ծախեց և այս անգամ խմբագիր նշանակուեցաւ Լևոն Սարգսեանը (Յ. Սպենդիարեանը ժամանակաւոր), իսկ հրատարակիչ տիկին Վ. Քանանեանց։

զարգացման, քաղաքատնտեսության և այլ նիւթերի վերաբերեալ Արծրունու թատրոնի և Գայիանեան դպրոցի դահլիճներում։—Գր. վաստ.— Die Gäschiche der Getreide—handels Pob. Tif. 1879 in zusammen Jahre mit Volks: Ռուս լեզուով էլ յօդուածներ է տպել Արէշի և Նուխու հետազօտութիւնների մասին Матеріалы для изслѣд. быта Государ. крестьянъ-ի V—VII հատորներում։ Ունի ռուերէն գրուածքներ նաև թելի մանարանների մասին (Անդրկովկասում) և Կովկասի առևտրի վերաբերեալ։ Հայերէն՝ ա) Ազգաբնակութիւն եւ ազգաբնակչական շարժումներ Տ. 1883. բ) Հողի արդիւնաբերութիւնը եւ հասարակութիւնը Տ. 1884. գ) Արևելեան ազգերի հին պատմութիւնը Տ. 1891։ Բացի այս բազմաթիւ մեծ ու փոքր յօդուածներ է գրել «Մուրճ»-ում և այլ պարբերականներում։

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՂԷՔՍԱՆԴՐ.— Վիպասան. ծն. Ջամշուլդա գ. 1854 մարտ 18-ին։ Նրա հայրը՝ Տէր-Պետրոս քահանան ուսումնասէր մարդ լինելով ինքն առաջին իր որդուն դիրը կարդալ սովորեցրեց, սակայն նա շուտով զրկուեցաւ իր ուսուցիչ-հօրից և հօրը փոխարինեց Եղիսաբէթ անունով սարկաւագուհին, որը նոյնպէս շուտով մեռաւ և 10 տարեկան Աղէքսանդրը որբ մնալով սկսեց հովուի պարզ կեանքը վարել։ 2որս տարի յետոյ նա Տփխիս գնաց և այնտեղ

Ներս. դպ. մտաւ, սակայն այստեղ էլ նիւթական պակասութիւնը ճնշեց նրան և նա թողեց դպրանոցը, ուր նա կարողացել էր ինքնաշխատութեամբ զարգանալ, անցաւ Զամշուլտէ և սկսեց ուսուցչութեամբ զբաղուել, որ պաշտօնը նա վարել է նաև Մեծ Դաղէթ, Փիր, Հաղբուէթ և Վաղարշապատ գիւղերում։ Մեծանալով գիւղերում, շնչելով գիւղի պարզ օդը, ուսումնասիրելով այդ օդը շընչողների լաւն ու վատը, նիստ ու կացը, նա մեր առջև ներկայացրել է այդ բոլորն ամենաիենդանի կերպով։ Նա մեռաւ 1884 դեկտեմբ. 23 ին Տփխիսում և 26-ին թաղուեցաւ։ Ա. Արարատեան աշխատակցել է «Վարժարան» ին և մէկ-մէկ էլ ուրիշ թերթերին։ Գր. վաստ. — ա) *Երկու թռուցիկ*, վէպիկ. Գանձակ 1876. բ) *Խղճութեան արգասիք*, վէպիկ. Գանձակ 1877. գ) *Քնարիկ մանկական*, բանաստ. Տ. 1880. դ) *Գիւղական Խալիֆայ* վէպ. Տ. 1883. ե) *Փնջիկ*, երգեր. Տ. 1885. զ) *Հիմնարկութիւն գաւառական ուսումնարանի*, գաւառական պատկերներ. Տ. 1889. է) *Սուտ ճգնաւոր*, վոդևիլ. Տ. 1891. ը) *Մանկական երգարան* և այլն։ Թողել է ան-



տիպ գրուածքներ— *Ցըլոտ Կարս, Անսէր ամուսնութիւն, Կրակի մէջ եմ ընկեր, Զայն, Փոքրիկ ախոյեաններ, Մի ուսումնարան* և այլն *)։

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՂԷՔՍԱՆԴՐ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ (կանոնիկոս՝). — «*Անի քաղաք նստեր կուլա՞յ*» երգի անմահ հեղինակը. ծն. Զիրակի Փոքր Ղարաքիլիսա գիւղում 1830 թ.։ Կրթ. ստացաւ Ախալցխայում Գրիգոր վ. Սառափեանի մօտ։ 1846-ին վարդապետ ձեռնադրուեցաւ և նշանակուեցաւ նախ Ալէքսանդրապօլի հայ կաթոլիկաց հոգևոր հովիւ, իսկ յետոյ այդ պաշտօնի հետ կարգուեցաւ նաև Կովկասի համայն հայ կաթոլիկաց հոգևոր կառավարիչ։ Վախճ. 1888 մայիս 15-ին և թաղուեցաւ Ալէքսանդրապօլի

---

*) *Աղէք. Արարատեանի գրուածքները ուսումնասիրութեան և կրկին հրատարակութեան կարօտ են։ Սուտ ճգնաւորը, որ քանի մի անգամ տպուել է, Ռուսահայ գաւառների ամենասիրելի վոդևիլներից մէկն է։ Արարատեանը մեծ գործ է կատարել, բայց այդ գործը մեռած է շնորհիւ հայ հասարակութեան միակողմանիութեան։*

կաթողիկոս եկեղեցու դրան մօտ։ Աղէքսանդր վ. նշ. քարոզիչ էր և հայրենասէր։ Նա ողբաց Անոյ անցեալ փառքի դառն յիշատակը և այդ ողբով անմահացաւ։ Ունի նաև այլ ոտանաւորներ ինչպէս *Թնդաց երկինք* և այլն։ Գր. վաստ. —*Ճակատ անմահից զեղեցական արկածից Ցոքայ Արդարոյն*. Տ. 1850։ Թողել է բազմաթիւ ձեռագիր գրուածքներ *)։

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼ վարժապետ.— Ծն. Տփխիսում 1808 թ. սեպտ. 13-ին։ Առաքել վարժապետի ծնողները՝ Աստուածատուրն ու Հռիփսիմէն (բազմատանջ Դանիէլ կաթողիկոսի քոյրը) 1804 թ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ ուրիշ բազմաթիւ արարատցիների հետ Տփխիս գաղթեցին և Հալաբարում բնակութիւն հաստատեցին։ Առաքելը մի տարեկան հասակում հօրից զրկուեցաւ, իսկ մայրն էլ սովի

*) Կենսագրական տեղեկութիւնները կամ աւելի լաւ ասած թուականները ստացել ենք պ. Գրիգոր Անտոնի Կիրակոսեանից, որից վերցրել ենք նաև պատկերը։

պատճառով Վաղարշապատ տեղափոխուեցաւ ուր և մեռաւ և Առաքելը մնաց որբ իր քոյրերի խնամքին։ Յովհան ա. քահանայ Ոսկերչեանը *), որ նեղուէս արքեպիսկոպոս Աշտարակցու յանձնարարութիւններով 1816-ին Էջմիածին գնաց, որպէս Առաքելի աղգական վերադարձին նրան իր հետ Տփխիս տարաւ և 12 տարի շարունակ իր մօտ պահեց ու կրթեց նրան և այնուհետև Աբրահամեանն աշխարհ եկաւ որպէս ուսուցիչ։ Այս պաշտօնը նա վարեց մինչև իր մահը և երկար տարիներ գիմնազիայի հայերէն լեզուի դասատու եղաւ։ Մ. 1887 թ. փետրուար 3-ին և նոյն տարի 10-ին թաղուեցաւ Խոջիվանքում։ Աշխատակցել է «Կռունկ»-ին։ Գր. վասա.—ա) *Դիմագրաւ ընդդէմ սատան յարուցանելոյ ամենապատուական լեզուիս Հայոց* Տ. 1858. բ) *Սխալանք գրոցն՝ որ կոչի Վարդապետարան կրօնի* Տ. 1858. գ) *Հանուոտ վարք եւ գրաւոր գործք Յովհաննու աւագ քահանայի Ոսկերչեանց Վաղարշապատեցւոյ* Տ. 1859. (այս գրքի մէջն է և իր ինքնակենսագրութիւնը) *)։

---

*) Յ. քահ. Ոսկերչեանը ժամանակին մեծ դեր է խաղացել և թողել է մի ձեռագիր յիշատակարան Աբրահամեան գաղթականների վերաբերեալ, որոնց առաջնորդներից մէկն է եղել։ Բայց թէպէտ եղաւ այդ յիշատակարանը։

*) Ա. Աբրահամեանը թողել է բազմաթիւ մեծահատոր ձեռագիր գրուածքներ, որոնք մինչև վերջին

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ (ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ *). — Նշանաւոր հայ, ծն. 1774 ապրիլ 20-ին Վաղարշապատում (նրա հայրը քարտաշ է եղել). Սկզ. կրթ. ստացաւ ս. Էջմիածնի վանքի կազմարարի և միաբանների մօտ, իսկ յետոյ էլ Յովհաննէս ա. ք. Ոսկերչեանի մօտ։ Այնուհետև բաղդի ձեռքին խաղալիկ եղած գնաց Ատրպատական, ուր ուսումը լեզու ստանալուց և անցաւ Ռուսաստանի խորքերը։ 1797 օգոստոս 7-ին նա Պետերբուրգ հասաւ։ Այնտեղ նա մտաւ պե-

ժամանակներս գանւում էին թուղթերի մօտ, որոնցից, ինչպէս մեզ լսեցինք, մեր անգործ վանականներից մէկը ասել է իբրև թէ հնապատութեան համար կարելի է Ոսկերչեանի ձեռագիրն էլ դրանց մէջն է, ժամանակ է տալու...

*) Այս մարդը կատարեալ և հետաքրքիր անձնաւորութիւն է։ Սրա մասին ցանկացողները տեղեկութիւններ կարող են գտնել հետևեալներում. ա) Ճանապարհորդութիւն ի Լեհաստան Մ. վ. Բժշկեանի, էջ 69 և 73. բ) Կ. Պօլսի «Բանասէր» հանդէսում 1851 թ. էջ 397—401. գ) Համառօտ վարք և գր. գործք Յ. ա. ք. Ոսկերչեանց էջ 26—29 և 74—76. դ) Կռունկ 1862 ապրիլ էջ 289. ե) Յարութիւն Արարատեանի կեանքը. զ) Յարութիւն Արարատեանի կեցցիքը Ա. Ե. Ս. 1894. է) Акты обозрѣнія исторіи Арм. народа. ը) Сборникъ свѣд. о Кавказѣ թ) Հատուկտոր տեղեկութիւններ կան նաև Акты, собран. Кавказскою Археограф. комиссіею հատորների մէջ եղած գրագրութեանց մէջ, որոնք մասամբ ոչնչացնում են Ա. Ե. Ս-ի (Արիստակէս եպ. Սեղրակեանի) յայտնած կարծիքները։

տական ծառայութիւն և պաշտօնների մէջ արագ առաջ գնալով մինչև Իսկական Պետական Խորհրդականի (Дѣйствит. Статскій Совѣтникъ) կոչման հասաւ։ Ռուսաստանից նա անցաւ Եւրոպա և մի առ ժամանակ Փարիզում բնակութիւն հաստատեց, որտեղ սովորեց ֆրանսերէն լեզու և Յ. ա. ք. Ոսկերչեանի *Ժամանակագրութիւնք*-ը (1751—1804 թ.) թարգմանեց ֆրանսերէն ու տպեց։ Այնտեղ նա մի քանի ուրիշ գրքեր էլ տպեց։ Նա իր կեանքը ճանապարհորդութեան մէջ անցկացրեց։ Կարծում են մեռած լինի Լիմ անապատում, որտեղ և թաղուած պիտի լինի։ Նա մեռել է 1825—1835 թ. միջոցներում։ Նա տպել է իր կենսագրութիւնը մի քանի լեզուներով, որոնցից ռուսերէն լեզուով տպուած է 1813-ին Պետերբուրգում և հայերէն թարգմանութիւնն էլ, որ արել է Պ. Պուշեանը *Յարութիւն Արարատեանի կեանքը* վերնագրով, տպուած է Տփխիսում 1892 թ.։ Այս գիրքը մի պատմական յիշատակարան է և շատ հետաքրքրիր, թէպէտ ոմանք կարծել են, որ դա կեղծիք է։

ԱՐԱՔՍԵԱՆ (ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ ՊՕՂՈՍ).—Կոմիկ և ֆատ, դերասան. ծն. Երևանում 1862 ապրիլ 16-ին։ Սկզ. կրթ. ստացաւ Տփխիսի Բէալական ուսումնարանում և 1879-ին թողնելով ուսումնարանը, գնաց Պետերբուրգ, ուր ըս-

կրսեց պատրաստուել համալսարան մտնելու համար, սակայն անյաջողութեան պատճառով սկսեց զբաղուել երաժշտութեամբ օպերետային խումբը մտնելու համար։ Առաջին անգամ „Корневильскіе колокола“ օպերետում բեմ դուրս գալով Մարկիզի դերում՝ տապալուեցաւ և թողեց այդ էլ։ 1886-ին Կովկաս վերադարձաւ և սկսեց ծառայել այլ և այլ տեղերում, միևնոյն ժամանակ մէկ-մէկ էլ բեմ էր դուրս գալիս որպէս սիրող։ Առաջին անգամ խաղաց *Քանդած օջախ*-ի մէջ Գիժ-Մոզու դերը, որով ամենք որոշեցին, որ նա լաւ դերասան է լինելու *)։ Արաքսեանը շուտով որպէս դերասան սկսեց խաղալ և 1889 – 90 թ. Տփխիսում խումբ կազմեց, որի միակ յաջողութիւնն Գէպօ-ն էր (ինքը Կակուլի)։ Արաքսեանը յայտնի է որպէս լաւ ըէժիսսօր և շատ անգամ թէ դերասանների և թէ սիրողների խմբեր է պահել և որ գլխաւորն

*) Երբ Գ. Սունդուկեանը բեմ հանեց իր Ամուսիններ կոմեդիան, Արաքսեանը խաղաց Արկադիի դերը և այս խաղի համար «Նոր-Դար»-ի խմբ. Ս. Սպանդարեանը մի թատերաքննականով որոշեց, որ նա լաւ ապագայ ունեցող դերասան է և խորհուրդ տուեց Արաքսեանին այլ ևս չը թողնել հայոց թատերաբեմը։

է անփորձ սիրողներին պատրաստել է բեմի համար։ 1903 թ. Արաքսեանը Տփխիսի Հայաբաբ թաղում սեպհական թատրոն հիմնեց և այդպիսով սկիզբ դրեց հայերէն ժողովրդական ներկայացումներին։ Արաքսեանը խաղացել է Կովկասեան համարեա բոլոր մեծ ու փոքր քաղաքներում, և յայտնի է որպէս կուպլետիստ։ Բեպերտուարն է Սունդուկեանի բոլոր կոմիկ-ֆատ հերոսները, Անդրէ (Զաւակում), Սերեսժա (Օրուան շաբիրում), Վերաբնիչ (Գողոլի), Դոն Քիշոտ, Ակոբ (Խանումի մէջ)։ Մէկ-մէկ կանանց դերեր էլ է խաղում ինչպէս Խանումը, Զարլէի մօրաքոյրը և այլն։ Ունի թարգմանութիւններ, որոնք խաղացւում են։ Զմեռային մի քանի թատերաշրջաններին Արաքսեանը պարբերական ներկայացումներ է տուել Տփխիսի ժողովարանում և միշտ սիրողների մասնակցութեամբ։

ԱՐՋԱՆԵԱՆ ԴԱՒԻԹ և ՅԱԿՈԲ. — Ղզլարցի եղբայրներ, Կրթ. ստացան Մոսկուայի Լազարեան ճեմարանում և 1821 թ. առաջին կարգի վկայականներ ստանալով մտան Մոսկուայի համալսարանի բանասիրական բաժինը։ Աւարտելուց յետոյ նրանք Ղզլարում մասնաւոր ուսումնարան բաց արին, սակայն անյաջողութեան պատճառով երեսնական թուականներին Տփխիս գնացին, որտեղ ուսումնարան բաց արին, իսկ

քիչ յետոյ էլ տպարան *)։ Յակոբ Արղանեանը 1846-ին սկսեց Յ. Կարինեանի հետ խմբագրել «Կովկաս» շաբաթաթերթը (որի պատասխանատու խմբագիրն էր օտարազգի Յովսէփ Իլիչ Կոնստանդինովը, որը խմբագրում էր և ռուսերէն „Кавказъ"-ը), իսկ յետոյ արդէն հրատարակիչ էլ եղաւ (տես Կովկաս 1846. էջ 135—136)։ Դաւիթ Արղանեանը 50-ական թուականներին գրաքննիչ էր։ Երկու եղբայրներն էլ պետական ուսումնարաններում ուսուցչութիւն են արել։ Մահուան թուականներն անյայտ։ Գր. վաստ. (երկուսը միասին). ա) Опытъ начертанія Исторіи Царства Армянскаго *) (Հայոց թագաւորութեան պատմութիւնը գրելու փորձը) Մոսկուա 1827 (սկզբից մինչև Արշակունեաց անկումը, զարդարուած է 26 մեծադիր գեղեցկատիպ հազուագիւտ պատկերներով)։ բ) Քնրա-

*) Մեզ մօտ կայ նրանց տպարանում տպուած «Կրթութիւն Աւետարանական» ի պէտս Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ։ Ի Տփխիս։ Ի տպարանի Յ. և Դ. Արղանեանց։ 1839։ էջ 40, փոքրագիր, գրաբար։ Եթէ չենք սխալւում, Ռուսահայոցս մէջ սրանք են առաջին օրացոյց հրատարակել. մենք տեսել ենք 1840 թ. օրացոյցը, որ գտնւում էր Սղնախի Նախկին ծխական դպրոցի գրադարանի գրքերից մէկի հետ մի կազմի մէջ, սակայն վերջերս բազմաթիւ ուրիշ գրքերի հետ անհետացաւ...

*) Կայ մեր անձնական գրադարանում։

կանութիւն հայերէն. Տ. 1840 թ. գ) Օրացոյց և այլն։

ԱՐԹԻՆ ՊԷՅ.—Նախապար արտաքին գործոց և վաճառականութեան Մէհէմէտ Ալի փաշայի թարգմանութեան օրով. ծն. Կ. Պոլսում 1800 թ.։ 1814-ին իր հօր հետ Եգիպտոս տեղափոխուեցաւ, իսկ մինչև այդ ժամանակ նա Կ. Պոլսում ուսաւ մայրենի լեզուն, իտալերէն և թուրքերէն և երբ Եգիպտոս հասաւ սկսեց իր հօր գործերով զբաղուել, իսկ յետոյ ուսաւ Մէհէմէտ Ալիի բացած (արբայորդի Աբրահի համար) վարժարանում, որից անցաւ Քասբ-էլ-Այնի վարժարանը 1825-ին։ 1826-ին Արթին պէյ Փարիզ ղրկուեցաւ, ուր ուսաւ քաղաքական և երևմտից անտանութիւն, վարչական, վաճառականական և համազգային օրէնք և 1834 սեպտեմբերին Եգիպտոս վերադարձաւ, ուր նրան պատերազմի Պաշտօնարանի մէջ պաշտօն տրուեցաւ զօրապետի օգնականի աստիճանով։ 1835-ին Տնտեսութեան և Թարգմանութեան վարժարանի տեսուչ նշանակուեցաւ և յանձնարարութեան համաձայն բացեց Բազմարուեստից դպրոցը։ Շուտով հազարապետի աստիճան ստացաւ Արթին պէյն և Պետական Ժողովի անդամ նշանակուեցաւ։ Այս պաշտօնի մէջ մեծ գործ կատարեց Արթին պէյն և պետական ներքին կազմակերպութեան դարկ տալու համար նա Մէհէ-

մէտ Ալի փաշային ծանօթացրեց եւրոպական օրէնսդրական գրուածքների հետ, որոնց թարգմանութիւններն ինքն էր կատարում։ 1839 թ. փաշայի առաջին թարգման-քարտուղար համարուեցաւ և ստացաւ Միրալայի (գնդապետ) աստիճան։ 1839—41 պատերազմի ժամանակ մեծ դեր խաղաց։ 1841-ին Մէհէմէտ Ալին նրան իբրև պատգամաւոր Փարիզ և Լոնդոն ղրկեց, որտեղ նա բարեկամացաւ պետական նշանաւոր անձանց հետ։ 1844-ին Արթին պէյն *ֆերիքի* աստիճանով արտաքին գործոց և վաճառականութեան նախարար անուանուեցաւ։ Այս պաշտօնում նա մեծ դարկ տուաւ վաճառականութեան, բարեկարգեց մաքսատների վարչական մասը, թղթատարական, հեռագրական և այլ մասերը, մանաւանդ փոխադրական՝ շոգենաւային գործը։ 1848-ին Արթին պէյն Մէհէմէտ Ալի փաշայի հետ Եւրոպա գնաց (ջղային հիւանդութիւնից բժշկուելու համար Մէհէմէտ Ալին ստիպուած էր գնալու բժշկուելու Եւրոպայում, սակայն խելագարուեցաւ)։ Արթին պէյն Մէհէմէտ Ալիի յաջորդների ժամանակ էլ նոյն դեր խաղաց և շատ անգամ որպէս դեսպան Կ. Պոլիս գնաց և սուլթանից էլ քրիստոնեային արուող ամենաբարձր *ռիթպէյ պաշա* աստիճանին արժանացաւ 1849 թ.։ 1850 թ. Արթին պէյն, պետական յեղաշրջութեան և այլ և այլ անձանց պաշտօնանկ լինելու ժամանակ, ստիպուած

թողեց Եդիպտոսը և Կ. Պոլիս գնաց, այնտեղից էլ 1852-ին Փարիզ։ 1854-ին, Սայիտ փաշայի գահակալության ժամանակ, նախկին պաշտոնով Եդիպտոս հրաւիրուեցաւ, սակայն շուտով հրաժարուեցաւ պաշտօնից և անուանուեցաւ նախարար առանց պաշտօնի ու փոխարքայի ներքին խորհրդական։ 1857-ին Արթին պէյն դարձեալ Փարիզ գնաց, որտեղից վերադարձաւ և 1859 փետրուարին մեռաւ Գահիրէում։ Արթին պէյն վարձատրուած էր այլ և այլ պետութեանց շքանշաններով, ի թիւս այլոց ունէր Պատուոյ Լեգէոնի, Կարմիր Արծուի, ս. Աննայի, Նիշան Իֆթիխար և այլ շքանշաններ։

ԱՐԻՍՏԱԿԷՍ Բ. ԱԹՈՌԱԿԱԼ.—Ամենայն հայոց կաթողիկոս. 1448 թ. օծուեցաւ իբրև աթոռակից Գրիգոր Ժ. Մակուեցու և նրա մահից յետոյ՝ 1466-ին յաջորդեց նրան։ Վախճ. 1470-ին։

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՏԻՐԱՑՈՒ (ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ).—Նշանաւոր տաճկահայ երաժիշտ, ծագկեցաւ Կ. Պոլսում ԺԹ-րդ դարում, երբ դեռ չէր կանոնաւորուել Հայկական ձայնագրութիւնը և կամաց կամաց վերակենդանանում էր շնորհիւ ժամանակի երաժշտագէտների։ Այդ երաժշտագէտները շնորհիւ եւրոպական ձայնագրութեան կանոնաւորեցին և շարականների մէջ ի հնուց եղած ձայնանիշներից կազմեցին հայկական ձայ-

նանիշների ութնեակը (փо, է, վէ, բէ, իо, նէ, պա և փо երկրորդական)։ Արիստակէսը անդրանիկ ձայնագրագէտներից մէկն էր և 40 տարիի չափ ձայնագրութեան ուսուցիչ եղաւ, ունեցաւ բազմաթիւ աշակերտներ, որոնք ցրուեցան գաւառները և բեղմնաւոր գործունէութիւն ցոյց տուին։ Այս նշանաւոր տիրացուն մեռաւ Գ. Պոլսում 1878 ապրիլ 13-ին խորին ծերութեան մէջ։

ԱՐԾՐՈՒՆԻ ԱՆԴՐԷԱՍ.—Եղբայր Գր. Արծրունու, ծն. Մոսկուայում 1847 նոյեմբեր 15-ին։ Մանուկ հասակում հօր հետ Տփխիս տեղափոխուելով՝ այնտեղ առաջին անգամ հայերէն սովորեց և գիմնազիա մտաւ, ուր 1864-ին աւարտեց և նախ Պետերբուրգի համալսարանում աւարտեց ուսումը, իսկ յետոյ անցաւ Գերմանիա, մտաւ Հայդելբէրգի համալսարան, ուր 1870-ին աւարտեց քիմիական մասնաճիւղն ու մնաց այնտեղ, 1874-ին Կովկաս եկաւ ու Լօռու և Գանձակի գաւառներում մի շրջան արեց հետազօտելով հանք արտադրող տեղերի դիրքն ու որպիսութիւնը։ 1875-ին վերադարձաւ Գերմանիա և Ստրասբուրգի համալսարանի ասիստենտ նշանակուեցաւ, ուր և մնաց մինչև 1877 թ։ 1877—83 Բերլինի համալսարանի պրիվատ-դոցենտ եղաւ, իսկ 1884-ից օրդինար պրոֆեսոր Աախէնի բարձրագոյն տեխնիկական ուսումնարանի, որ

պաշտօնում և մեռաւ 1898 օգոստոս 29-ին (սեպտ. 10-ին) Հօնկնոնկֆում։ Աշխատակցել է «Մշակ»-ին և բազմաթիւ եւրոպական թերթերին։ Եղել է թղթակից անգամ եւրոպական գիտական ընկերութիւնների։



ԱՐԾՐՈՒՆԻ ԳԷՈՐԳ ԱՂԱ. — ԺԹ-րդ դարու անդրանիկ բարեգործներից մէկը. ծն. Վանում 1771-ին։ Փոքր հասակից ցանկալով կուսակրօն դառնալ՝ մտաւ Աղթամարայ վանքը, սակայն ծնողների անհամաձայնութեան պատճառով ստիպուեցաւ 20 տարեկան հասակում ամուսնանալու։ Ընկերքում նա միայն դրեց Աղթամարայ վանքում տպարան բանալ (ըստ Ա. Երիցեանի), սակայն առեւտրի մէջ ընկնելով՝ շարունակեց իր հօր սկսած գործն և անցաւ Փոքր Ասիայ քաղաքներով Պ. Պոլիս, այնտեղից հարաւային Եւրոպա և կրկին Վան դնաց, որտեղից 1813-ին Էջմիածին դնաց և այնտեղից էլ Տփխիս։ Հաւանելով Տփխիսն և տեսնելով, որ տեղացի հայերը ռուսաց հովանաւորութեան ներքոյ անդորր կեանք են վարում, դաղթեց Տփխիս, ուր նա իր հարստութեան շնորհիւ յայտնի մարդ դար-

ձաւ և քաղաքացիներից էլ յարգուեցաւ։ Գէորգ աղան Տփխիս գալու օրից սկսեց կալուածքներ դնել, տներ ու քարվանսարայ շինեց և ծանոթանալով Ներսէս Աշտարակեցու հետ, նիւթապէս նպաստեց նրա սկսած գործին։ 1816-ին Գէորգ աղան առևտրական գործով Եւրոպա գընաց։ Հասնելով Հոլանդիոյ Ամստերդամ քաղաքը, լսեց որ նախկին հայ եկեղեցու շինութեան մէջ հայ տպարանի պարագաներ են պահուած (այս այն տպարանն է, որտեղ Ոսկան վ. Երևանցին բազմաթիւ գրքեր տպեց ԺԷ դարու երրորդ քառորդում)։ Այս տպարանը եկեղեցու հետ միասին ս. Էջմիածնին էր կտակուած և փակուած էր վաղուց արդէն, սակայն մի ինչ որ վէճի պատճառով մնացել էր երեսի վրայ, ուստի և Գէորգ աղան գնեց պարագայքը կամ աւելի լաւ ասած վճարեց բարդուած պարտքն և Ներսիսեան դպրոցին ուղարկեց իբրև ընծայ, որի համար էլ տպարանը կոչուեցաւ «Տպարան Ներսիսեան Հոգևոր դպրոցի Հայոց ընծայեցելոյ յաղնուական Գէորգայ Երեմեան Արծրունեոյ»։ Գէորգ աղան Տփխիս վերադառնալով շարունակեց առևտուրը։ 1830 թ. մեծ խօլերայի ժամանակ ուղևորվելով խօլերայից փախչել նա մրտնում է իր քարվանսարայի ներքնատունը, սակայն խօլերան անխուսափելի լինելով Գէորգ աղան մեռնում է անկտակ...

ԱՐԾՐՈՒՆԻ ԳԷՈՐԳ ՔԱՀԱՆԱՅ.—Խասգիւղի աւագերէց, յայտնի հոգևորականներից մէկը, անդամ Կ. Պօլսի Հոգևոր ժողովի 1847-ին։ Վախճ. 1894 յունուար 3-ին 107 տարեկան հասակում։

ԱՐԾՐՈՒՆԻ ԳՐԻԳՈՐ.— Հրապարակախօս, հիմնադիր խմբագիր-հրատարակիչ «Մշակ» հայ լրագրի, ծն. Մոսկուայում 1845 փետրուար 27-ին։ Արծրունին իր մանկութիւնն անց կացրեց Մոսկուայում և փոքր հասակից տան մէջ ընկրսեց ֆրանսերէն խօսել։ 1855 թ. ծնողների հետ Գերմանիայ Կրայցնախ քաղաք գնաց, ուր սկսեց դաս առնել գերմաներէն և լատիներէն լեզուներից։ Այնտեղից Գրիգորը նորից Մոսկուա վերադարձաւ, իսկ Մոսկուայից էլ Տփխիս, ուր 12 տարեկան հասակում առաջին անդամ սկսեց հայերէն սովորել նախ Մողնոյ միաբան Գրիգոր քահանայ Տէր Բարսեղեանի մօտ (դեռ այժմ էլ կենդանի է), ապա «Մեղու Հայաստանի» հայաթերթի խմբագիր Պետրոս Սիմոնեանցի մօտ, որին հայրոյից նա մինչև իր մահը, իսկ յետոյ էլ նշանաւոր Առաքել վարժապետ Արարատեանի

մօտ։ Տփխիսում Գրիգորին գիմնազիա տուին և նա 1863-ին դասընթացն աւարտելով 1864-ին Մոսկուա գնաց և մտաւ բնագիտական ֆակուլտէտը։ 1865-ին Արծրունին Պետերբուրգ տեղափոխուեցաւ և այնտեղից առաջին անգամ սկսեց գրել «Մեղու Հայաստանի»-ի մէջ (1865 №№ 13 և 14)։ Չը կարողանալով Պետերբուրգի օդին դիմանալ, գնաց Ֆրանսիոյ Նիցցա քաղաք բժշկուելու համար, իսկ այնտեղից էլ Ժընև և Ցիւրիխ, ուր մի առ ժամանակ տեղոյն համալսարանի ազատ ունկնդիր եղաւ, իսկ 1867-ին Հայդելբէրգի համալսարան մտաւ քաղաքատնտեսութիւն սովորելու։ 1869-ին Փիլիսոփայութեան դոկտորի կոչումը ստանալով Փարիզ անցաւ, այնտեղից էլ Վիեննա, ուր համալս. լսում էր իսկ Մխիթարեանց մօտ էլ հայերէն էր սովորում։ Վիեննայից նոյն նպատակով Վենետիկ գնաց։ Մի անգամ ևս այցելելով Հայդելբերգը՝ 1871-ին Տփխիս հասաւ, ուր ձրիաբար ուսուցչութեան պաշտօնը ստանձնեց Գայիանեան և Մարիամեան ուսումնարաններում և միևնոյն ժամանակ սկսեց աշխատակցել «Մեղու»-ին *Նոր-էլ* և Ս. Պետերբուրգսկիայ Վեդոմ.-ին (СПБург. Вѣдомости) էլ *Է. Շատ-Իրաւացի* (Э. Шатъ-Иравацы) կեղծանուններով։ Արծրունու առաջին գործն եղաւ «Մշակ»-ի հրատարակութիւնը, որ սկսեց նա 1872-ին իբրև շաբաթաթերթ։ Հրատարակման օրից Արծրունին իրեն շրջապա-

տեց ժամանակի ամենաաչքի ընկնող գրողներով, ինչպէս էին Բաֆֆին, Գ. Սունդուկեանը, Ա. Քիշմիշեանը, Ստ. Պալասանեանը և այլք, որոնք ամեն քայլափոխում աջակցում էին իրեն, քանի որ նա դեռ հայերէնին այնքան էլ չէր ընտելացել, և սոքա էին խմբագրում թերթը։ 1876-ին «Մշակ»-ն սկսեց շաբաթն երկու անգամ հրատարակուել, իսկ 1878-ից շաբաթը 5 անգամ։ 1884-ին Արծրունու գործերը ձախ գնացին, որովհետև իր հօր պարտքերի պատճառով քարվանսարայն (այժմեան վրաց ազնուականաց թատրոնը) ձեռքիցը գնաց և նիւթապէս ճնշուած, փիզիքապէս էլ բայքայուած՝ դադարեցրեց «Մշակ»-ը, գնաց Ղվէյցարիա առողջութիւնը վերականգնելու համար։ 1885 թ. վերջերը վերադառնալով արտասահմանից 1886-ին վերսկսեց «Մշակ»-ի հրատարակութիւնը — շաբաթ երեք անգամ—որ տևեց մինչև իր մահը, որ տեղի ունեցաւ Տփխիսում 1892 դեկտ. 19-ին։ Հանդուցեալը մեծ հանդէսով ու բազմաթիւ պսակներով թաղուեցաւ Խօջիվանքի գերեզմանատանը, ուր 1902 դեկտ. 23-ին բացուեցաւ նրա «առանց խաչի» մահարձանը։ Արծրունին սովորութիւն ունէր քննադատել ազգի, եկեղեցու, լեզուի և այլ հարցերը, որոնց մէջ նա անխնայ ոչնչացնում էր ժամանակի հայ նշանաւոր գրողներին և անձանց։ Արծրունին սիրում էր ոտի տակ տալ հայոց կաթողիկոսի

իրաւունքները (օրինակ բողոքականների հրատարակելի հայ աւետարանի հարցն և այլն), որի համար և «Արարատ»-ում Արծրունուն գրըչակոծ էր անում *Խթան* կեղծանունով մէկը «*Արամի ու Արշակի խօսակցութիւնը*» վերնագրով և այլ յօդուածներում։ Պակաս չէին նաև Զմիւռնիոյ «Արևելեան Մամուլ» շաբաթաթերթում պարբերաբար լոյս տեսնող յօդուածները, որի համար Արծրունին զինուեցաւ նաև Մ. Մամուրեանի դէմ։ Այնուամենայնիւ Արծրունին ունէր բազմաթիւ համակրողներ... Գրիգոր Արծրունու գր. վատ.—ա) *Ըվէլինա* հոգ. էտիւդ. բ) *Թուրքաց հայերի տնտեսական դրութիւնը* (այս երկուսը թարգմանուած են ռուսերէն). գ) Восточный вопросъ փորրիկ բրոշիւր *)։

ԱՐԾՐՈՒՆԻ ԵՐԵՄԻԱ.—Գեներալ-մայիոր, հայը Գ. Արծրունու, ծն. Վանում 1804-ին և մօտաւորապէս ինը տարեկան հասակում Տփխիս բե-

*) Գ. Արծրունու մահից յետոյ թերթի խմբագիր հաստատուեցաւ Աղէքսանդր Քալանթարը և թերթն ըակըսեց շաբաթը 5 անգամ լոյս տեսնել, իսկ յետոյ էլ 6 անգամ։ Հրատարակութեան իրաւունքն էլ անցաւ տիկ. Մելիք Ադամալեանին (բժշկապետ Գրիգոր Քոչարեանի նախկին կնոջ), իսկ սորա մահից յետոյ էլ իր ժառանգներին։ 1903 թ. նոյեմբեր 15-ից մինչև 1904 յունուար 15-ը «Մշակ»-ը դադարեց և յետոյ վերսկըսուեցաւ նոյն ձևով և պրոգրամով։ Եթէ չենք սխալուում այժմ «Մշակ»-ը մի քանի տարիոց է պատկանում։

բուեցաւ, ուր ուսաւ գիմնազիայում և յետոյ էլ Պետերբուրգի գինուորական վարժարանում։ 1823-ին գինուորական ծառայութիւն մտաւ և մասնակցեց 1826—28 թ.թ. ռուս-տաճկական և ռուս-պարսկական պատերազմներին։ Մինչև 1844 թ. նա վարեց Կովկասեան ինտենդանտի պաշտօնը, որից յետոյ գնաց Ռուսաստան և արտասահման։ 1866—68 թ. Տփխիսի քաղաքագլուխ եղաւ։ Մեռաւ 1877 թ. նոյեմբ. 15-ին և թաղուեցաւ Վերայի հայոց գերեզմանատանը։

ԱՐԾՐՈՒՆԻ ՎԱՀԱՆ (բժիշկ *). — Խմբագիր *Առողջապահիկ թերթ*-ի որ սկսեց հրատարակել 1903 թ. հոկտեմբերից իբրև կիսամսեայ հանդէս՝ տարեշրջանը հաշուելով հոկտեմբերից հոկտեմբեր և տալով տարէն 4—5 գրքոյկ յաւելուած։ Վերջերս բժիշկը մի շարք առողջապահական գրքոյկներ հրատարակեց ինչպէս՝ *Մի՛ խմիր, Վատ ցաւ կամ Սիֆիլիս, Վարակիչ հիւանդութիւնները եւ նրանց թոյնը, Աղջիկ* (Տ. 1903), *Ժանտախտ, Թոքախտ կամ Բարակացաւ, Մի՛ ծխիր, Դողէրոցք կամ Մալարիա, Ինֆլուէնցա կամ նոր ցաւ, Նորածին մանուկների հիւանդութիւնները, Թշուառների բաղե-*

---

*) Զը նայած որ պ. բժշկին դեռ 1902 թ. մի բանի անգամ դիմեցինք, սակայն այսօր վաղի պատճառով չը կարողացանք ստանալ։ Կաշխատենք յաւելուած հատորում տպել։

կամ ըժիշկ Հասազ, Խօլերա, Կակուղ շանկը կամ Սուսունակ և այլն, որոնք բաւական լաւ տարածուում են ժողովրդի մէջ։ Վ. Արծրունին աշխատակցում է «Մշակ»-ին։

ԱՐՂՈՒԹԵԱՆ ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ ԻԶԽ. ՄՈՎՍԷՍ. — Նշանաւոր զինուորական, ծն. 1798 թ. Սանահնում(՝), մանկութիւնն անցրեց Տրփխիսում և երիտասարդ հասակում զինուորական ծառայութիւն մտաւ և մասնակցեց 1826 - 28 թ.թ. ռուս-պարսկական պատերազմներին. իսկ 1829-ին Երևանի (Армянская область) տեղակալ եղաւ։ Երկար ժամանակ Դաղեստանի և Անդրկասպեան երկիրների զօրավար և գլխաւոր կառավարիչ եղաւ ու մասնակցեց Շամիլի յարձակման դէմ մղած պատերազմներին, իսկ Գերդերելիի առման համար գեներալ-ադիւտանտի աստիճան ստացաւ։ Դաղէստանի խռովութիւնների ժամանակ՝ 1851 թ. սկսած մի քանի անգամ ջարդեց լեզգիներին։ Արղութեանը հիմնեց Թեմիր-Խան-Շուրան, որի համար և 1878 թ. քաղաքի մէջ նրա արձանը կանգնեցրին։ Մեռաւ 1855 թ. և թաղուեցաւ իր հայրական

կալուածքում՝ Սանահնի վանքի Զաքարէ սպասալարի գաւթում։

ԱՐՂՈՒԹԵԱՆ ԵՐԿԱՅՆԱԲԱՂՈՒԿ ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ (չ'օծուած). — Ծն. 1743 թ. մայիս 23-ին (Սանահնում թէ Տփխիսում յայտնի չէ *)։ Սկզ. կրթ. ստացաւ հայրենի Սանահնի վանքի դրպրոցում, որտեղից էջմիածին ղրկուեցաւ, ուր Սիմէօն երևանցի կաթողիկոսն որդեգրեց նրան և սարկաւագ ձեռ-

*) Ահա ինչ է ասում կենսագիր Յովհաննէս Տէր-Աբրահամեանը Յովսէփի տոհմի մասին. «Արղութեանց տոհմին նախահայր կ'հաստատեն ոմանք Պարսից Արտաշիր Երկայնաբազուկ թագաւորը, որոյ որդիքը Հայաստան փախան՝ կասեն, և ի նոցանէ յառաջացան Արղութեանք. ոմանք մեր Բագրատունի թագաւորաց ցեղէն յառաջ եկած են՝ կասեն, Զաքարիա սպասալարէն սկսելով՝ որ 1184-ին Վրաց և Հայոց սպարապետ էր և ոմանք՝ Արղութ անունով հայ իշխանն եղած է, կասեն, նոցա ցեղապետը, որ 1287-ին իւր բազմատեսակ ծառայութիւններովը մեծ պատիւ ունեցաւ Մողոլաց Արղուն Խանի առաջն։ Իսկ ինքը Յովսէփ սրբազանը՝ իւր ազգաբանութեան վերայ հետագայ յիշատակարանս թողուցած է նոր Նախիջևանի Հոգևոր դատարանի կանո-

նադրեց։ 1765-ին նա վարդապետ ձեռնադրուեցաւ իսկ 1771 դեկտ. 25-ին եպիսկոպոս և իբրև նուիրակ Թուրքիա ուղարկուեցաւ Էջմիածնի նոր շինութիւնների համար ժողովարարութիւն անելու։ Այնտեղից վերադառնալով՝ 1773-ին արքեպիսկոպոսութիւն ստացաւ և ուղարկուեցաւ Ատրպատական իբրև առաջնորդ համայն ռուսաբնակ հայոց։ Յովսէփ արդին գործունեայ մարդ լինելով՝ հէնց սկզբից ցոյց տուեց իր ընդունակութիւնները, այցելեց իր թեմում գրուած հայերին, ուսումնարաններ բացաւ, ուսումնասիրեց իր հօտի դրութիւնն և ծրագիրներ պատրաստեց նրանց վիճակը բարւոքելու համար։ Հաստատուելով իր պաշտօնում, նա Ատրպատա-

---

նադրութեանց յառաջաբանին մէջ. «Յիշեցէք ի Քրիստոս... զմարմնաւոր ծնողն իմ զՇիրազ բէգն՝ զպանեանն յանօրէն Լէզգեաց ի տարապարուց, և զպարկեշտագնաց մայրն իմ Քէթեւանն և հանգուցեալ եղբարն իմ զվաղաթառամ և զխորհրդակրոյս Մովսէս բէգն և զՓարսադանն. և զկենդանի եղբայրն իմ պարոն Բէժան բէգն, և զքոյրն իմ Թուսուդանն և զՄարիամն և զամենայն զարմս զաւակս նոցին. որք ի յեօթներորդ զաւակէն Հայոց ի նահանգէն Տաշրայ և Լոռու, զոր այժմ Վիրք ունին. և յիշխանանիստ գիւղաքաղաքէն Սանահնու, և յաղգէ մեծի ազարապետին Հայոց և Վրաց՝ Զաքարիա իշխանին՝ որդւոյ Սարգսի իշխանի, զորմէ պատմէ պատմիչն Կիրակոս։ Որք և ի հնումն կոչէաք Երկայնաբազուկ, իսկ այժմ կոչիմք Աբղուբեանց»։ էջ 3—4։

նի հայոց համար առանձնաշնորհութիւններ խնդրեց Եկատերինէ Բ. կայսրուհուց, իսկ յետոյ, Խրիմի հայոց Ազովեան երկիր փոխադրելու ժամանակ, բարեկամացաւ Պոտեմկին իշխանի հետ և գործակից եղաւ ու 1779—80 թ. Նոր Նախիջևան քաղաքը հիմնեց։ 1781-ին քաղաքում Հոգևոր դատարան հիմնեց և 126 յօդուածից բաղկացած մի կանոնադրութիւն գրեց քաղաքական օրէնքների յաւելուածով *)։ Յովսէփ արհին իր ծրագիրներն գլուխ բերելու համար Պետերբուրգ գնաց և լաւ ընդունելութիւն գտաւ և իր խնդիրների վճիռը ստացած վերադարձաւ։ Նա հիմնեց նաև ս. Խաչ վանքը, իսկ Ն. Նախիջևանում 1790-ին տպարան և դպրոցներ հաստատեց։ Իշխ. Պոտեմկինի հետ աւելի բարեկամացաւ Դունայեան պատերազմի ժամանակ և պատերազմից յետոյ սահմանից փախած հայ գաղթականներին Դուբոսսար քաղաքից 12 վերստ հեռաւորութեան վերայ տեղաւորեց, ուր 1792 յուլիս 25-ին օրհնեց Գրիգորուպոլ քաղաքի հիմքը։ Եկատերինէ Բ. կայսրուհու մահից յետոյ թէպէտ նրա ծրագիրները մասամբ ոչնչացան, սակայն ռուսաց արքունիքում ունեցած դիրքը նոյն մնաց։ 1795 ռուսաց դէպի Կովկասը կատարած արշաւանքի ժամանակ արհին իր շըր-

---

*) Սրանով կառավարուեցան Ռուսիոյ հայ եկեղեցիները մինչև 1836-ին հրատարակած Պոլոժենիէն։

ջաբերականներով հայերին զինեց պարսից դէմ։ 1799-ին Անայի Ա. աստիճանի ասպետանշանը ստացաւ, իսկ 1800 մարտ 22-ին ռուսաց կայսրութեան տոհմական իշխանի կոչումը ստացաւ։ Յովսէփ արհին ձգտում էր անպատճառ կաթողիկոսանալ և Էջմիածնի ու Կ. Պոլսի հայոց հետ շարունակ գրագրութեանց մէջն էր, սակայն շատերն էին հակառակ նրան։ 1799 դեկտ 27-ին վախ. Էջմիածնի Ղուկաս կաթողիկոսը և ընտրուեցաւ Կ. Պ. պատրիարք Դանիէլ արքեպիսկոպոսը, սակայն Յովսէփ արհին ռուսաց արքունիքի և վրաց Գիորգի ԺԲ. թագաւորի միջոցով ստիպեց Էջմիածնի միաբանութեան իրեն ընտրել, իսկ Կ. Պոլսի հայերին էլ ռուսաց Թամարա դեսպանի միջոցով հաճեցրեց և կայսերական հրովարտակով 1800 օգոստ. 4-ին ճանապարհ ընկաւ դէպի ս. Էջմիածին։ 1801 փետր. 10-ին մեծ հանդիսով Տփխիս մտաւ և փետր. 17-ին կատարեց Վրաստանի Ռուսիոյ հետ միացման հանդէսը։ Արհին դիմաւորելու համար Էջմիածնից չորս արքեպիսկոպոսներ էին եկել, որոնք պէտք է ուղեկցէին նրան մինչև Էջմիածին, սակայն նա օծման չ'արժանացաւ։ Մարտի սկզբին վրաց Հերակլ Բ. թագաւորի այրին՝ Դարեճան թագուհին արհին հրաւիրեց իր սեպհական բաղանիք, որտեղից արհին գնաց թագուհու մօտ թէյ խմելու։ Այնտեղ մրսելով՝ հիւանդացաւ և մարտ 9-ին (1801 թ.) վախճանուեցաւ։ Կան

ասողներ, որ նա առաջուց հիւանդ էր, իսկ ոմանք էլ ասում են, որ թագուհին է թունաւորել։ Հանգուցեալոյն մարմինը մի քանի ամիս Մոսկոյ ս. Գէորգ եկեղեցում փակուած մնալուց յետոյ Էջմիածին տարուեցաւ և կտակի համաձայն Գայիանէի վանքի գաւթում Սիմէօն երևանցու կողքին թաղուեցաւ։ Յովսէփ արքին ունի մի քանի գրաւոր վաստակներ, որոնք տպուած են Ն. Նախիջևանում և Պետերբուրգում։ Նա թարգմանել է հայոց պատարագն ու ծիսակատարութիւնները և Исповѣданіе Христіанскія вѣры Армянскія церкви վերնագրով տպել ՍՊԲ. 1799 թուին։

ԱՐՄԵՆԵԱՆ (ԱՐՄԷՆ ԻՓԵԿԵԱՆ). —Դերասան. ծն. Կ. Պոլսում 1871 սեպտ. 10-ին Ուսաւ Գատը գիւղի Մխիթարեանց վարժ. և յետոյ Կեդրոնական վարժարանում։ 1891-ին դերասան Գ. Պետրոսեանի հետ Տիֆլիս գնաց, ուր սկսեց խաղալ և առաջին անգամ բեմ դուրս եկաւ Կամելիաղարդ տիկին-ի մէջ մի փոքրիկ դերում։ Այնուհետև առևտրական գործերով անցաւ Եգիպտոս, Տաճկաստան և ապա Բրիւսէլլ, ուր ծանօթանալով Սարա-Բերնարի հետ, նրա հետ Փարիզ գնաց և կոնսերվատորիա մտաւ, ուր 3 տարի սովորելուց յետոյ սկսեց ֆրանսիական թատրոններում խաղալ։ 1901 դեկտեմբեր 6-ին Փարիզում հրաժեշտի ներկայացում տալով՝ Հայ

Գրամատիքական ընկերութեան հրաւէրով Տրփխիս հասաւ, սակայն պայմանների անյարմարութեան պատճառով ինքը մի քանի ներկայացումներ տուեց, իսկ 1902-ին Բագու գնաց (իբրև բեժիսսօր) և այնտեղ սկսեց խաղալ։ Խաղում է ժեօնպրիմիէ դերեր։ Բեպէրտուարն է՝ Վաղաժամ վճիռ, Արքայ և պօէտ, Կրեմոնի վնասագործը, Գուարիէի փեսան և այլ նման ֆրանսիական պիէսների մէջ եղած դերերը։

ԱՐՏԻՒՐ ԼԱՅՍԹ. — Գերմանացի հայագէտ. ծն. Բրեսլաւ քաղաքում 1852 թ.։ Ուսումն աւարտելուց յետոյ երկար ժամանակ Լեհաստանում ուսուցչի պաշտօն վարեց, իսկ յետոյ 12 տարի նուիրեց իրեն հայ և վրացի լեզուների ուսումնասիրութեան 1884-ին եկաւ Անդրկովկաս, իսկ յաջորդ տարին Կովկաս և մնաց մինչև 1889 թ.։ Ուսումնասիրելով հայոց լեզուն ու գրականութիւնը՝ մի շարք գրուածքներով գերմանացիներին ծանօթացրեց հայոց գրականութեան հետ «Armenische Bibliothek» գրքերով (որ հրատարակել է հանգ. Արգար Յովհաննիսեանը)։ Այս գրքերում նրան են պատկանում ա)Սայաթ-Նովա, բ) Ռ. Պատկանեան, գ) Հ. Ղ. վ. Ալիշան, դ) Մ. Պէշիկթաշլեան, ե) Խ. Աբովեան, զ) Վենետիկի Մխիթարեանք, է) Գաբրիէլ արքեպ. Այվազեան, ը) Գ. Սունդուկեանց, թ) Հայոց լեզուական մասուրը և ժ) Խրիմեան Հայ-

ին։ Այս յօդուածներին զուգընթաց նա հայ հնդի-նակների գրուածքներից էլ թարգմանութիւններ է արել։ 1890 թ. Magasin հանդիսի № 12-ում հրատարակեց մի յօդուած հայոց բանաստեղծութեան մասին։ Գերմաներէն է թարգմանել նաև *Ծիծեռնակ, Կռունկ* և *Հառաչք ի վերայ գերեզմանի մտերմին* բանաստեղծութիւնները։ Իր Georgien, Natur, Sitten und Bewohner գրուածքներում երկար յօդուածով խօսում է հայ գրականութեան վրայ։ Ունի նաև այլ գրուածքներ, *ա*) Armenische Dichterstimmen. *բ*) Vom Lebensborn der Morgenländes, *որի մէջ խօսում է Ասիայի ազգերի, ի թիւս այլոց և հայերի, ներքին կեանքի մասին։* Լայսթն ունի գրուածքներ վրաց գրականութեան մասին, թարգմանել է վրաց յայտնի դասական բանաստեղծական վէպը «Վէպխիս տղաւօսանի» (Ընձեռաւոր, Der Mann in Tiger felle)։

ԱՐՓԻԱՐԵԱՆ ԱՐՓԻԱՐ *).—Տաճկահայ նշանաւոր գրագէտներից մէկը, ծն. Ակնայ Ապուչէխ գիւղում, կրթուեցաւ Կ. Պոլսի վարժարաններում և գրական ասպարէզ մտաւ։ 1890—

---

*) *Երկու Արփիարեաններին էլ նամակներ ենք գրել, սակայն պատասխանները չենք ստացել և այժմ յուսով ենք, որ կը բարեհաճեն զրկելու իրենց կենսագրականները յաւելուած հատորի համար։*

1893 թ. *Հայրենիք* թերթի խմբագիր եղաւ։ 1896 (՞) ընդ միշտ թողեց Կ. Պոլիսն ու անցաւ Լոնդոն։ 1903 թ. յայտարարեց որ Վենետիկում «*Հայ Հանդէս*» վերնագրով երկշաբաթաթերթ պիտի հրատարակէր, սակայն չը գիտենք ինչ եղաւ։ Աշխատակցել է հայ պարբերականներին, որոնցից «Մշակ»-ին *Հայկակ* ստորագրութեամբ։ Գր. վաստ.—*Կեանքի պատկերներ, Դատապարտեալը, Երազի մը գինը, Կատակ մը, Ապուշ եւ այլն։*

ԱՐՓԻԱՐԵԱՆ ՏԻԳՐԱՆ.—Տաճկահայ նշ. հրապարակախօս, խմբագիր Կ. Պոլսի *Մասիս* շաբաթաթերթի, ունի գրուածքներ։

ԱՒԱԳԵԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ.—Բժիշկ, Եկատերինոդարցի, ծն. 1825 *մայիս* 9-ին։ Աւարտելով Լազ. ճեմ.՝ 1841 թ. յունուարին մտաւ Դորպատի համալսարան բժշկականութիւն ուսանելու։ Այնտեղից գնաց Կազանի համալսարան մտաւ, սակայն 1852-ին կրկին Դորպատումն էր ուսանում։ Այս անգամ արդէն գնաց Պետերբուրգ, ուր 1854 թ. բժշկական ակադեմիայում վերջնական աւարտական քննութիւն տուեց։ Իր կեանքի վերջին տարիները Տփխիսում անցրեց և մեռաւ 1862-ին բարակացաւից չքաւորութեան մէջ։ Ուսանողութիւնից նա յայտնի է եղել իբրև օրինակելի հայ և նրա խօսակցու-

թեան նիւթն եղել է «ապրել հայի համար, գործել հայի համար և մեռնել հայ մնալով» և «ով որ չ'գիտէ հայերէն, նա հայ չէ և չի կարող լինել» *)։ Լինելով ուրախութեան ու երգի սիրահար և տեսնելով որ հայերէն երգեր չը կան՝ նա շարադրեց «*Որդիք Հայկայ, զտջիք ներկայ ձերոց զգացմանց Ցէր արքայ—լուարուք երգել զերգս երգոց, լուարուք զիմ ձայն եղբարք Հայոց*» և *Հայոց զինի (Ելցէ՛ք, եղբարք, ձեր բաժակները եւ լաչ պարպեցէք*») երգերը, որոնք ուսանողների սիրած երգեր էին։ Աւագեանը թարգմանեց ուսանողական նշանաւոր հին քայլերգը Gaudeamus igitur—*Ուրախասցուք ուրեմն* **)։

ԱՒԱՆ ԽԱՆ.—Սիւնեաց աշխարհի (Զարաբաղի) նշ. հայ մելիք, որ իր ձեռքի տակ տասնեակ հազարներով զօրք ունէր։ Երբ Սարի Մուստաֆա փաշան ամրացաւ Գանձակում և իւր զօրքն էլ ուղարկեց մելիքների երկիրներն աւերելու, Աւան խանը, որ հայ մելիքների գլխաւորն էր և լաւ դիրք էր ձեռք բերել, առ երես մտերիմ ձևանալով հնազանդուեցաւ և դաշն կապեց փաշայի հետ։ Սակայն փաշայի զօրքի

---

*) «*Լուսայ*», *1903*, № *5*, էջ *25 բժ. Լևոն Տիգրանեանի յօդուածում։*

**) *Այս երգերը տպուած են Մ. Միանասարեանի «Փնար Հայկական» երգարանում։*

զզուելի ու ծայրահեղ անկարգութիւնները շուտով ինքնաճանաչութեան հրաւիրեցին Աւան խանին և նա գաղտնի միացնելով հայ մելիքներին, 1733-ին յանկարծ զէնք բարձրացրեց ու ջարդեց փաշայի զօրքին և Մուստաֆան մաղապուրծ Երևան փախաւ։ Միևնոյն ժամանակներում Հայաստան արշաւեց Նատիր-Շահը, որը մեծարեց Աւան խանին ու միւս մելիքներին, նա տուեց իրենց ժառանգական իրաւունքներն որ խլել էին նրա նախորդները։ Ի պատիւ այս շնորհի, Աւան խանն ամբողջ մի տարի շահի զօրքին կերակուր մատակարարեց։ 1740-ական կամ 50-ական թուականներին նա իր պաշտօնեաների հետ Ռուսաստան գաղթեց, որտեղ Աննա կայսրուհին սիրով ընդունեց, գեներալի կոչումը տուեց և թոշակ կապեց։ Սրա և իր եղբօր սերունդները բնակուեցան Աստրախան և Մոսկուա քաղաքներում և արքունի պաշտօններում առաջ գնացին։ Աւան խանի սերունդներից են Ռուսաստանի Մելիքեան, Սմբատեան և Արապետով կամ Հայրապետեան իշխանները։

ԱՒԳԵՐԵԱՆ Հ. ՄԿՐՏԻՉ Վ. – Մր. Վնտ. Մխ. ծն. Գաղատիոյ Անկիւրիա քաղաքում 1762 նոյեմբեր 11-ին։ Հայրը նրան 1774-ին Վենետիկ տարաւ, ուր վանական դպրոցն աւարտելով 1786-ին վարդապետ ձեռնադրուեցաւ և մօտ 10 տարի դպրոցում ուսուցչութիւն արեց, մինչ-

նոյն ժամանակ ուրիշ պաշտօններ էլ վարեց և 20 տարի էլ աբբայի աթոռակալ եղաւ։ 8 տարի Կ. Պոլսի կաթողիկ հայոց քարոզիչ եղաւ։ Վիեն. Վենետիկում 1854 մարտ 3-ին։ Աւգերեանը նշ. հայկաբան էր և երից վարդապետաց կոչուած *Հայկազեան բառգրքի* մէջ նա է կազմել է գրից մինչև վերջը (տպ. 1836—37 թ.թ.)։ 1846-ին տպեց դրա համառօտութիւնը — *Առձեռն բառարան Հայկազեան լեզուի* վերնագրով (Բ. տպ. 1865-ին)։ Միւս գր. վաստ. (տպ. Վենետիկում) —ա) *Լիակատար վարք սրբոց* 1810—14. բ) *Բան գործնական* 1812. գ) *Բարի խորհուրդներ* 1809. դ) *Դեղ կենաց* 1810. ե) *Դիմառնութիւն շորից վերջնոց* 1810 և այլն։ Հրատարակել է *Փիլոնի Եբրայեցւոյ մնացորդք ի Հայս* 1822—26, *Յովհաննու իմաստասիրի Օձնեցւոյ ճառ ընդդէմ երեւոյթականաց* 1807. *Հնթում պատմիչ թաթարաց* 1842 և *Եւսեբիոսի Քրոնիկոն* 1818։ Թարգմանել է *Թասոնի՝ Ապացոյցք կրօնից* 1844, *Կանոն կենաց* 1834, *Սուէյի Կենդանագիր առաքինի եւ զգօն անձին* 1816, *Կիկերոնի Յաղագս*

պատշաճից 1845, Սենեկայի ճառք 1849, Հոհէնլոհէի Սուրբ ըլլալու մտածութիւնք, Գրիգոր Մեծի Հովուականք, Սերերիանոսի ճառք, Եփրեմի Համաբարբառ և այլն։ Ունի գրուածքներ եւրոպական լեզուներով և Հայոց Հարց գրուածոց թարգմանութիւնները Bibliotheca Patrum Armenorum վերնագրի տակ։

ԱՒԳԵՐԵԱՆ Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ Վ. — Մբ. Վնտ. Մխ. ծն. Անկիւրիա ք. 1774 յունիսին։ 12 տ. Վենետիկ գրկուեցաւ, ուր վանական դպրոցն աւարտելով 1798-ին վարդ. ձեռնադրուեցաւ։ Երկու տարի վանքում պաշտօնավարելուց յետոյ քարոզչի պաշտօնով Տրանսիլվանիոյ հայաբաղաքները ուղարկուեցաւ, որտեղից վերադառնալով Վենետիկ՝ երկու անգամ Լոնդոն գնաց, իսկ մնացած ժամանակ համարեա վանքից չի հեռացել։ Վանքումը նա մօտ 20 տ. ընդհանրական քարտուղար եղաւ և երկար ժամանակ էլ հիւրընկալի պաշտօնը վարեց։ 1816-ին Վենետիկ եկաւ Լորդ Բայրոնը, որի հետ Յարութիւն վ. մտերմացաւ և սկսեց նրան հայերէն սովո-

բեցնել, իսկ նրանից էլ անգլիերէնի դասերը առնել։ Երդիւնքն այն եղաւ, որ Աւգերեանը կազմեց Անգլ.-հայ (1816) և Հայ-անգլ. (1833) քերականութիւնները ձեռնտուութեամբ Բայրոնի և բացի դրանից Անգլ.-հայ և Հայ-անգլ. բառարանները (1821—25) Պրէնտ հայերէնագէտ անգլիացու ձեռնտուութեամբ։ Բացի այս նա ունեցաւ բազմաթիւ անգլիացի աշակերտներ։ Աւգերը գիտէր սանսկ, եբրայեցի, յոյն, լատին, իտալ., ֆրանս., անգլ., հունգար. և գերմաներէն լեզուներ և սրա ջանքերովն ու մեծ մասամբ իրեն թարգմանութեամբ տպուեցաւ Ներսէս Շնորհալու *Հաւատով խոստովանիմք* աղօթքի 24 լեզուով հրատարակութիւնը *)։ Վիճ. 1854 նոյեմբ. 24-ին Վենետիկում։ Գր. վասա.— ա) *Բացատրութիւն չափուց եւ կշռոց* 1821. բ) *Բառգիրք գաղղիարէն* 1811. գ) *Բառգիրք հայ-գաղղ.* 1817. դ) *Պատմութիւն վարուց Մխիթարայ աբբայի* (հայ-իտալ.) 1819։ Թարգ. Միլտոնի

*) *Հաւատով խոստովանիմք* հռչակաւոր աղօթքը առաջին անգամ 4 լեզուով տպուեցաւ, 1810-ին Վենետիկում տպուեցաւ 6 լեզուով, ապա 14, յետոյ 16, յետոյ 24 լեզուով, իսկ 1862-ին էլ 36 լեզուով։ Թարգմանական մի հրատարակութիւն էլ եղել է Մոսկուայում 12 լեզուով։ Մեր նշանաւոր պատարագակնիք Որ օրհնեա զայնոսիկ, որ օրհնեն զքեզ Տէր աղօթքն էլ շնորհիւ Վենետիկի Մխիթարեան հարց 1893-ին հրատարակուեցաւ 50 լեզուով։

Դրախտ կորուսեալ (արձակ թարգմանութիւն) 1824։ Հրատ. Լամբրոնացու *Առաքանութիւն* հայ-իտալ. 1812 և այլն։ Լատիներէն՝ Confessio Ecclesiæ Armeniæ 1845։ Թողել է անտիպ գերմաներէն և յունարէն լեզուների բառարաններ։

ՍԻԴԱԼԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Նոր Ջուղայեցի հայ գրագէտ, (հաւանականաբար ուսել է Նոր Ջուղայում)։ Նա բնակութիւն հաստատեց Հընդկաստանի Կալկաթա հայաշատ քաղաքում ուր հայոց մարդասիրական ճեմարանի հայ. քերականութեան և ճարտասանութեան ուսուցիչ նըշանակուեցաւ և 1820-ին ճեմարանը, նրա շնորհիւ, նոր շրջան մտաւ։ Այս պաշտօնի հետ զուգընթացաբար Կալկաթայի անգլիական եպիսկոպոսական ճեմարանում անգլիերէն սովորեց և քիչ յետոյ Մարդաս. ճեմարանում նոյն լեզուի ուսուցչի պաշտօնը ստանձնեց։ 1826-ին ընտրուեցաւ Ասիական Բենգալական ընկերութեան անդամ։ Գր. վաստ.— ա) *Անգիտաց անպէտ* Կալկաթա 1821. բ) *Բառարան Անգղիարէն-Հայերէն* Կալկաթա 1825. գ) *Վերջին աւուրք բարեյիշատակ տիկին Մերջանին Ստեփաննոսեան* Կ. 1830։ Հրատարակել է Յովհաննէս Արճիշեցու *Մեկնութիւն աւետարանի խորհրդոց սրբոյ պատարագին* Կ. 1830։ Թարգմանել է Ջատօրբիանի՝ *Առակաց* Կ. 1826, Ջօնսընի *Հոգասնչաց* Կ. 1826, *Քրիստոսուսոյց* Կ. 1826։ Հայերէնից անգլիերէն է

թարգմանել Զամչեանի Հայոց պատմութիւնը քաղուածօրէն Կ. 1827։ Ունի նաև այլ երկասիրութիւններ, մահուան թուականն մեզ անյայտ։

ԱՒԴԱԼԵԱՆ ՍԻՄԷՕՆ.— Նոր Ջուղայեցի հայ վաճառական, որ 1676-ին Ատրախանով Մոսկուա գնաց և մետաքսեղէն տարաւ։ Այնտեղից նա անցաւ արտասահման՝ Զվէդիա և եւրոպական ապրանքով Պարսկաստան վերադարձաւ։ Մինչև 1692 թ. նա մի քանի անգամ Ռուսաստան և արտասահման գնաց։

ԱՒԵԴԻՆԵԱՆ ՅԱԿՈԲ.—Պարսկաստանցի հայ վաճառական, որ 1675-ին Ատրախանի վրայով Մոսկուա գնաց տանելով մետաքսեղէն և այլ պարսկական ապրանք։ Մոսկուայից նա անցաւ Արխանգելսկ։ Մոսկուայում նա մի քանի հայ վաճառականների հետ Բէլբիյ Գորոդ քաղաքամասում առևտրական տուն հաստատեց, որը գոյութիւն ունեցաւ մինչև 1683 թ. երբ նա գործերը վերջացրեց և հայրենիք վերադարձաւ։

ԱՒԵՏԵԱՆ ԳՐԻԳՈՐ.—Կոմիկ դերասան. ծն. Պարսկաստանի Ռաշտ քաղաքում 1871 յունուար 8-ին։ Սկզ. կրթ. ստացաւ Զուշում՝ Պարոնեանի պանսիոնում, իսկ յետոյ Բագուի Բէալական ուսումնարանում։ 1889-ին Մոսկուա գնաց հաշուապահութիւն սովորելու համար, սակայն դրա

հետ զուգընթացաբար սկսեց լսել նաև դրամատիքական կուրսերի դասախոսութիւնները։ 1890-ին Բագու գնաց և սկսեց ծառայել մասնաւոր դրասենեակներում։ Առաջին անգամ բեմ դուրս եկաւ աշակերտ ժամանակ 1887-ին *Վարդանանց պատերազմ* ողբերգութեան մէջ Փարամոնի դերում և իբրև սիրող սկսեց շարունակաբար մասնակցել ներկայացումներին։ 1892-ին արդէն իբրև դերասան՝ Սաֆրազեան ամուսինների հետ Շուշի գնաց, իսկ նոյն տարուայ սեպտեմբերից հրաւիրուեցաւ Տփխիս։ Խաղացել է ինչպէս Կովկասեան այնպէս էլ Ռուսաստանի հայաքաղաքներում և շարունակ գլխաւոր խմբում է լինում։

ԱՒԵՏԵԱՆ ՏԻԿ. ՄԱՐԻԱՄ (ծննդեամբ օր. Սարգսեան).—Դերասանուհի, խաղում է էնժենիւ դերեր։ Ծն. Տփխիսում 1876 յունուար 3-ին։ Կրթ. ստացաւ Սերպինէի գիմնազիայում և օրիորդ ժամանակ սկսեց մասնակցել ընտանեկան ներկայացումներին։ 1893 յունուարին ամուսնանալով դերասան Գ. Աւետեանի հետ, մի ամբոխ յետոյ դերասանական խմբի հետ Ռուսաստան գնաց և առաջին անգամ Ատրախանում բեմ դուրս եկաւ Արշակ Բ. ողբերգութեան մէջ Միհրանի (պատանի) դերում և *Առաջարկութիւն* վոդեվիլի մէջ նոյն ներկայացման ժամանակ կատարեց Նատալիայի դերը։ Այդ ժամանակից նա

շարունակաբար խաղում է գլխաւոր խմբում։ Մի թատերաշրջանում խումբ է պահել։

ԱՒԵՏԻՍ ԵՐԵՒԱՆՑԻ.—Նշանաւոր Ոսկան վ. Երևանցու եղբայր, որ Ամստերդամում վաճառականութեամբ էր զբաղւում։ 1661-ին մեռաւ Մատթէոս Ծարեցին, որ երկու տարի Ամստերդամում տպարանական գործով էր զբաղւում՝ սեպհական տպարան ունէր, որի համար նա պարտքերի մէջն էր ընկել։ Աւետիսը վճարելով պարտքերը, այն տպարանը նուիրեց Երևանի ս. Սարգիս եկեղեցուն և Էջմիածնին և ինքն էլ առժամանակ Ոսկանի աշակերտ Կարապետ վարդապետի օգնութեամբ մի շարք գրքեր տպագրեց, ինչպէս են՝ *Յիսուս որդի*, *Սաղմոս*, *Ժամագիրք*, *Աղաւթատետրք* և այլն։ Աւետիսը 1662-ին հայրենիք վերադարձաւ և ճանապարհին Լիվորնո քաղաքում հանդիպելով Ոսկան վարդապետին, նրան ուղարկեց Ամստերդամ տպարանի գործերը կարգի բերելու։

ԱՒԵՏԻՔԵԱՆ ԱՂԱՋԱՆ. — Պարսկաստանցի հայ վաճառական, որ 1687-ին Աստրախանով Մոսկուա գնաց առևտուր անելու։ 1689-ին Ռուսական ապրանքով հայրենիք վերադարձաւ, որտեղից կրկին Ռուսիա գնաց, բայց ճանապարհին՝ Մոսկուայի մօտ ռուս գիւղացիները կողոպտեցին նրան, ուստի և Դեսպանական ատեանի

միջոցով հրովարտակով պատժել տուեց բոլոր աւազակներին և ապրանքն էլ առ խլեց ու գնաց Արխանգելսկ, որտեղից Զվէդիա անցաւ և 1695-ին այնտեղից եւրոպական ապրանքով հայրենիք վերադարձաւ։

ԱԻԵՏԻՔԵԱՆ Հ. ԳԱԲՐԻԷԼ. Վ. — Մբ. Վնտ. Մխ., ծն. Կ. Պոլսում 1751-ին, ուսաւ վանական դպրոցում և 1773 դեկտ. վարդ. ձեռնադրուեցաւ։ 1785-ին նոյն դպրոցում ուսուցիչ նշանակուեցաւ։ Ինչպէս 1799-ին, այնպէս էլ Մելքոնեան Ստեփանոս աբբայի մահից յետոյ աթոռակալ-տեղապահ եղաւ։ Վիճ. 1827 դեկտ. 24-ին Վենետիկում։ Հ. Աւետիքեանը հմուտ աստուածաբան է եղած և գրել է *Մեկնութիւն թղթոցն Պօղոսի* (տպ. 1806—11—12 թ.թ.) որ 3 հատորից է բաղկացած։ Գրել է նաև *Բացատրութիւն Շարականաց* (1814), որը կնքել է մի յօդուածով՝ *Յաղագս ընխման Հոգւոյն սրբոյ ի՝ Հօրէ եւ յՈրդւոյ*, որի մէջ յայտնած սխալ կարծիքների պատճառով գրքի արժէքը ընկած է։ *)

*) Երևի այդ սխալից է դուրս եկել և այն, որ

Հ. Գաբրիէլը հմուտ հայկաբան է եղել և երից վարդապետաց Հայկազեան բառարանում նա է կազմել Ա. տառը։ Գր. վաստ. (տպ. Վենետիկում) —ա) Լուծումն նարեկ աղօթագրոց 1801 (յետոյ էլ մի քանի անգամ) բ) Քերականութիւն Թուրքանեան լեզուի 1792. գ) Քերականութիւն Հայկական, աշխարհ. 1819, գրաբ. 1823. դ) Քերթուածք՝ Յերանելին Շուշան, Յատենին Յազկերտի՝ Գարեգին Սրուանձտեաց, 'ի Մեծ սպարապետն հայոց քաջ Վարդան, Վահանայ 'ի յաղթական շուառ Նիխոր, Տրդատ, Արտաւան։ Թարգմանել է Ալ. Ռոտրիկուէցի՝ ճառք հաւակերպութեան ընդ կամս Աստուծոյ 1823, Հիպպոնի՝ Յաղագս քաղաքին Աստուծոյ 1841., Մտածութիւնք 'ի վերայ եօթն գլխաւոր ցաւոց Ս. Աստուածածնի 1810 և այլն։ Ունի իտալերէն գրուածքներ. ա) Dissertazione sulla procession dello Spirito Santo dalpadre e balfiglio 1824 բ) Dissertazione Sulle correzioni deilibri ecclesiastici armeni 1868. գ) La liturgia armena 1827 և դ) Grammatica Italana-

---

Վենետիկի Մխիթարեանք մեզ անյայտ ձեռագրից տպելով Շնորհալու «Առաւօտ լուսոյ» երգը, աղաւաղեցին բնագիրն ու տպեցին «Բղխումն 'ի Հօրէ և յՈրդւոյ (՝)» «և յՈրդւոյ» այնպիսի մի անտեղի բան է, որ Շնորհալու շնորհալի բանաստեղծական քանքարին պատիւ չի բերում, որովհետև նա այդպէս չի գրել։ Մխիթարեան հարց անչափ աշխատանքն միանգամից ոչնչանում է, երբ մարդս այսպիսի նեղ կրօնական անհամութիւններին է պատահում։

armena-turca 1762։ Թողել է 9 կտոր ձեռագիր գրուածքներ։

ԱԻԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔ ԹՈԽԱԹԵՑԻ (ԵՒԴՈԿԻԱ-ՑԻ).—Ծն. 1657 ապրիլ 1-ին։ Իր հայրը՝ Բաղդասար Թոխաթցին ջուլհակ էր։ Աւետիքը մինչև 7 տարեկան հասակը իր պապ Տէր-Սարգիս քահանայի մօտ կարդալ սովորեց, իսկ նրա մահից յետոյ 1664-ից ուսաւ իր կնքահայր Տէր Պետրոսի մօտ։ 1672-ին ինչ որ Յակոբ վ-ի մօտ փոքրաւոր մտնելով 1675-ին սարկաւագ, իսկ 1681-ին էլ աբեղայ ձեռնադրուեցաւ և Սեպուհ լերան Ս. Յակոբ վանքի վանահայր նշանակուեցաւ։ Յետոյ պաշտօնավարեց Երզնկայում, ուր նորոգութիւններ արեց և եկեղեցիներ շինեց, որի համար Կ. Պոլիս գնաց, ուր ծանօթացաւ տեղացի աչքի ընկնող հայերի հետ։ 1691-ին Եղիազար Կաթողիկոսը նրան եպիսկոպոս ձեռնադրեց Էջմիածնում, որտեղից նա կրկին Երզնկա գնաց, այնտեղից անցաւ Կարին և այնտեղ 1701-ին Կ. Պոլսից հրաւէր ստացաւ պատրիարքութեան համար, որ և ընդունելով գնաց Կ. Պոլիս։ Երուսաղէմի ժամանակակից պատրիարք Մինաս Համդեցին (պատմագիր) իր միաբանութեան հետ անբաւականութեան մէջ էր, ուստի և Աւետիք պատր. 1702-ից Երուսաղէմի պատրիարքութիւնն էլ իր ձեռքն առաւ և տեղապահ նշանակեց։ Աւետիքը խիստ կերպով

զինուեցաւ կաթոլիկների ու եգուիտների դէմ, որոնք դայթակղեցնում էին հայերին և նրա վախից հայ կաթոլիկ քահանաները ստիպուած եղան հեռանալու Կ. Պոլսից, իսկ Մխիթար Սեբաստացին էլ Մօրէա փախաւ։ 1703-ին Երուսաղէմի իսկ 1704-ին էլ Կ. Պոլսոյ պատրիարքութիւններից զրկուեցաւ, բայց 1704-ին կրկին անգամ Կ. Պոլսոյ պատր. ընտրուեցաւ (մինչև 1706), սակայն ֆրանսիոյ դեսպան Ֆերիոլի Օսմանեան պետութեան տուած բողոքների համաձայն Դենետոս կղզի աքսորուեցաւ, բայց Ֆերիոլի կարգադրութեամբ եգուիտները ճանապարհին փախցրին նրան Ֆրանսիա, ուր Փարիզի Բաստիլիա բերդում շարչարուելուց ու տանջուելուց յետոյ վախճանուեցաւ 1711 յուլիսի 10-ին։ Այնտեղ նա 1710 թ. մի յիշատակարան է գրել—ինքնակենսագրութիւն, որ թարգմանուած է ֆրանսերէն։ *)

ԱՒԵՏՈՒՄԵԱՆՑ ԹԱԴԷՈՍ. — Հնդկահայ գրագէտ, ծն. Բասրա ք. 1810 թ., Ինը տարեկան հասակում իր հօր հետ Կալկաթա գաղթեց, ուր նա Մարդասիրական ճեմարան մտաւ։ Չընայած այն հանգամանքին, որ նա շարունակ առևտրով էր զբաղուում, այնուամենայնիւ հետամուտ եղաւ

*) Ոմանք սխալմամբ կարծում են, որ Աւետիք պատրիարքն էր Երկաթէ դիմակով մարդը։

նաև գրականութեան և Մ. Թաղիադեանի «Ազգասէր» հանդիսի գլխ. հրատարակիչներից մէկն էր։ Մ. 1863 փետր. 13-ին Կալկաթայում։ Թողել է գրուածքներ, գրել է երգեր, մի ոտանաւոր էլ Մ. Թաղիադեանի մահուան առթիւ (տպ. «Ընշալոյս Արարատեան»-ի մէջ 1858-ին)։

ԱՒԵՏՈՒՄԵԱՆՑ ՍԱՐԳԻՍ—Հնդկահայ բժիշկ, որդի Թադէոս Աւետումեանի, ծն. Կալկաթայում 1854 դեկտ. 4-ին։ Ուսաւ նախ իր հօր մօտ, իսկ 8 տ. հասակից սկսեց յաճախել Անգլիական Լա Մարտինիէր ուսումն., ուր 8 տարի մնալով ոսկէ շքանշանով աւարտեց։ 1870-ին Կալկաթայի բժշկական վարժարան մտաւ և 1875 թ. աւարտեց։ 1876-ին Լոնդոն գնաց և մտաւ Բժշկ. Բարձրագոյն Գոլէժ, ուր 1879-ին բժիշկ-վիրագէտի կոչումը ստացաւ։ 1881-ին Նեալի գնաց. ուր զինուորական բժշկի վկայական ստացաւ և նոյն տարուայ հոկտեմբերին գնաց Պօմպա, իբրև զինուորական բժիշկ գնաց Գուէտա, այնտեղից էլ Սիբի։ 1885-ին Անգլիական պետութիւնը նրան Եգիպ-

տոս դրկեց, որտեղից քիչ յետոյ Պոմպա վերադարձաւ։ 1886/87. ծառայեց Ուգանիստանի կողմերում. 1890-ին Եւրոպա գնաց, 1891-ին Եգիպտոս և ապա Լոնդոն՝ բժշկուելու համար։ Այնտեղից անցաւ Վեննա և 1892-ին նորից Հընդկաստան, որտեղ ծառայում է նա։

ԱՓԻՆԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ.—խմբ. տարեկան օրացոյցի, ծն. Ալէքսանդրոպոլ ք. 1870 հոկտ. 18-ին և ուսաւ նախ տեղւոյն Եկ.-ծխ. ուսումնարանում, իսկ 1888 – 94 թ. Գէորգեան ճեմ. և դուրս եկաւ Բ. լսարանից։ 1894/97 ուսուցիչ Ալէքսանդրոպոլի ծխ. ուսումն., 1897-ից Տարրական ուսումն.։ 1899 թ. սկսեց հրատարակել պատի և ծոցի օրացոյցներ *Շիրակ* անուան տակ, որ և ցարդ շարունակւում է (հրատ. Տփխիսում իսկ 1903-ից Ալէքսանդրոպոլում, սեպհական տպարանում). Վերջերս սկսեց հրատարակել ռուսերէն օրաթերթ Александропольскія объявленія ա նունով։

ԱՔԻՄԵԱՆ ԳԷՈՐԳ.—Դպրոցական և հասարակական գործիչ. ծն. Տփխիսում 1829 յուլիս 20-ին, ուր աշակերտեց անմահ Խաչատուր Աբովեանին և 1846 թ. Դորպատ դրկուեցաւ ու 1848-ին համալսարան մտաւ բնագիտութիւն սովորելու։ Աքիմեանն իր հետն էր տարել *Վէրք Հայաստանի* վէպը, որի միջոցով, բժ. Լ. Տի-

գրանեանի ասելով, Դորպատեան ուսանողներն ուսումնասիրում էին աշխարհաբար լեզուն։ 1852-ին Աքիմեանը հիւանդութեան պատճառով Տփխիս վերադարձաւ և 1858-ին Յովսէփ Փոնդոյեանի հետ հրատարակեց «Վէրք Հայաստանին»։ Աքիմեանը երկար ժամանակ ծառայեց Տփխիսի փոստ-հեռագրական վարչութեան մէջ։ Նա երկար ժամանակ Ներս։ դպրոցի հոգաբարձու է եղել, այժմ ապրում է Տփխիսում։ Թարգմանել է՝ *Ոսկի ասեղները* Տ. 1878. *Նալ եւ Դամայնանտի* Տ. 1877. եայլն.

ՎԵՐՋ ԵՐԵՔԵՐՈՐԴ ՄԱՍԻ։

ՑԱՆԿ

	Երես
Մի բանի խօսք	Ե
Մատենագրութիւն	Թ
Համառօտութիւններ	ԺԲ

	Երես
Աբամելիքեան Յովհաննէս	13
Աբգար գալիր	14
Աբգարեան Յարութիւն	16
Աբելեան Յարութիւն	17
Աբելեան Յովհաննէս պատկ.	»
Աբեղեան Մանուկ պատկ.	19
Աբիխ Հերման պատկ.	22
Աբովեան Գէորգ պատկ.	23
Աբովեան Խաչատուր պատկ.	24
Աբրահամ Բ. Խոշաբեցի	32
Աբրահամ Բ. Կրետացի	»
Աբրահամ կաթողիկոս	33
Աբրահամ վարդապետ	»
Աբրահամեան Գրիգոր պատկ.	34
Աբրօյեան Պետրոս	35
Ագապեան Աբշակ	37
Ագոնց Հ. Ստեփանոս	38
Ադամեան Պետրոս պատկ.	»
Ադելեան	41
Ազարեան Ստեփանոս կաթող.	»
Ազարիա Հին-Ջուղայեցի	42
Ազարիա Նոր-Ջուղայեցի	»
Ակրաբ Ադամ	43
Ակնաւորեան Կարապետ ամիրա	»
Ակնաւորեան Հ. Քերովբէ վ.	»
Ալադաթեան Նիկողայոս	44
Ալամանեան Համբարձում	»
Ալամդարեան Յարութիւն վ.պ.	45
Ալէքսանեան Գրիգորիս եպ. պ.	47
Ալէքսանեան Հ. Զաքարիա վ.	»
Ալէքսանեան ա.Մարգարիտ պ.	48
Ալթունեան Յովհաննէս	50
Ալթունեան Աբշակ	51
Ալթուն Տիրրի Ռաֆել	52
Ալթուն Տիրրի Աբիսաակէս	»
Ալիխանեան Խաչատուր	53
Ալիխանեան Նիկողայոս	»
Ալիշան Հ. Ղևոնդ վ. պատկ.	»
Ալխազեան Յակոբ պատկ.	58
Ախվերդեան Գէորգ	59
Ակոլութ Անդրէաս	60
Անարոնեան Աւետիս պատկ.	61
Ադարէգեան Մարկոս պատկ.	63
Ադարէկեան Աւետիս Ղազար	66
Ադաթոն Գրիգոր պատկ.	»
Ադաթոն Մկրտիչ	68
Ադամալեան Մարիամ	69
Ադամալեան Հ. Սուքիաս վ.	»
Ադայեան Ղազարոս պատկ.	71
Ադայեան Մատթէոս	74
Ադանեան Գիւտ ա. ք. պատկ.	75
Ադանուր Վիքտորիա	79
Ադափիրեան Գրիգոր եպ.	80
Ադէքսանդրեան Յովսէփ	81
Ադէքսանդր Ա. Ջուղայեցի	»
Ադէքսանդր Բ. Գ. Պոլսեցի	82
Ադուանեան Գրիգոր արքեպ.	83
Ամատեան Հրաչեայ. պ.	»
Ամէմեան Մկրտիչ պ.	85
Ամատեան Յարգիս	86
Ամատունի Նապոլէոն (իշխ.)	87
Ամարխան Յովսէփ	»
Ամերիկեան Յովհաննէս պատ.	89
Ամիրեան Պետրոս և Պօղոս.	90
Ամիրջան Բեգլար պատկ.	91
Ամիրտօլմաթ	93

	երես։
Այվազեան Աբրահամ .	93
Այվազեան Բագրատ պատկ.	94
Այվազեան Գաբրիէլ արքեպ. պ.	96
Այվազեան Յովսէփ եպ. .	100
Այվազովսքի Յովհաննէս պ.	»
Այվատեան Սահակ արքեպ.	103
Այտընեան Հ. Աբսէն վ. պ.	»
Անանեան Հ. Մկրտիչ վ.	106
Անդրէաս պատր. երուս. .	»
Անդրէաս Ստամբոլցի .	107
Անոյշեան Գարապետ .	»
Անտոն քահանայ .	»
Աշրգեան Խաչն արքեպ. պ.	108
Աշճեան Աբրամ . .	109
Ապրօ Սահակ . .	»
Առաքել Դաւրիժեցի .	110
Առաքելեան Հ. Խաչատուր վ.	111
Առաքելեան Համբարձում պ.	112
Ասատուր Հրանտ պատկ.	115
Ասլանեան Թադեոս .	118
Ասլանեան Ստեփան .	119
Ասկերեան Հ. Վրթանէս վ.	120
Աստղիկ պատկ. . .	121
Աստուածատուր կաթող. Համադանցի . .	122
Աստուածատուր կաթող. Սասունցի . .	123
Աստուածատուր պատր. Կ. Պոլսի . .	123
Աստուածատուր Մերդինցի.	124
Աստուածատուր Ջունդ պ.	124
Աստուածատուր վարդ. .	126
Աստուածատուր Տարօնեցի.	127
Ատրպետեան պատկ. . .	128
Բարմեան ճանիկ պատկ.	130
Բարմեան Միսաք . .	132
Բարպեան Պօղոս . .	133
Բասխանեանց Եւսեբիք պ.	134
Բարբարեան Աղէքսանդր պ.	136
Բարբարեան Աղէք. վ. պ.	138
Բարբարեան Առաքել պատկ.	139
Բարբարեան Յարութիւն .	141
Բարքսեան » պատկ.	142
Բրդանեան Դաւիթ և Յակոբ	144
Բրթին Պէյ . .	146
Բրիսակէս Բ. Եպիսկոպոս	148
Բրիսակէս տիրացու .	»
Բրծրունի Անդրէաս .	149
Բրծրունի Գէորգ ազգ. պատկ.	150
Բրծրունի Գէորգ քահ. .	152
Բրծրունի Գրիգոր պատկ.	»
Բրծրունի երեմիա . .	155
Բրծրունի Վահան. .	156
Բրդութեան երկ. Մովսէս (իշխան). պատկ. .	157
Բրդութեան երկ. Յովսէփ կաթողիկոս պատկ. .	158
Բրմենեան (գերասան) .	162
Բրտիւր Լայօթ . .	163
Բրփիարեան Բրփիար .	164
Բրփիարեան Տիգրան .	165
Բուգեան Խաչատուր .	»
Բան Խան . .	166
Բզեբեան Հ. Մկրտիչ վ. պ.	167
Բզեբեան Հ. Յարութիւն վ. պ.	169
Բդալեան Յովհաննէս .	171
Բդալեան Սիմէօն . .	172
Բեզինեան Յակոբ. .	»
Բեռեան Գրիգոր . .	»
Բեռեան տիկ. Մարիամ .	173
Բեռիս երևանցի . .	174
Բեռիքեան Աղաջան .	»
Բեռիքեան Հ. Գաբրիէլ վ. պ.	175
Բեռիք պատրիարք .	177
Բեռումեան Թադէոս .	178
Բեռումեան Սարգիս պատկ.	179
Գփինեան Գարապետ .	180
Գրիմեան Գէորգ . .	»

ԲԱՑ ԹՈՂԱԾ ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ.

գ.—գիւղ, գիւղում.
Թ.—Թէոդոսիա.
ծխ.—ծխական.
Ն. Ն.—Նոր Նախիջևան.
պ. պատկ.—պատկեր.

Էջ։	Տող։	Սխալ։	Ուղիղ։
Թ	12	մտտենագը...	մատենագը...
ԺԲ.	23	պաարիարք	պատրիարք
67	9	1-53-ին	1853-ին
69	8	դեռ	դեր
76	4	ոխեց	փոխեց
114	16	Risphore	Bosphore.

ԲՈՒԿԻՆՈ
198
20